ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

891.99
3-85

Հովհ. Հովհաննիսյան

Ցնծագեղեր է 1961

Յերկերի ժողովածու

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Ա II 283447



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1·9·3·7

Հայ կլասիկներ

Հովհաննես Հովհաննիսյան

1864 — 1929

Յերկերի ժողովածուի
յերկու հատորով

Խմբագրությամբ
Ռուբեն Ջարյանի

Պետական հրատարակչություն
Յերեվան



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-I

* * *

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛ր։

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Կանաչում թաղված այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում։

Տեսե՞լ ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացված այնտեղ վառ շուշան, մեխակ,
Շնորհատուռ արև, վոսկի ներշուլյներ
Ցեվ միշտ սիրաշունչ յերկինք կապուտակ։

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փրփրած,
Ականջ դըրե՞լ ես խըռռոված հոգով
Այն ազմկալից գոռոցին ալյաց։

Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ
Ցեվ շուրջը փռված շքեղ պարտեզները,
Ցեվ վոսկի հասկեր և խաղող վըտակ,—
Լըսե՞լ ես քաղցրիկ արտուտի յերգեր։

Ցեվ դու տեսե՞լ ես նորա գանձն անգին,
Դեմքով հըրեշտակ, հասակը փարթամ
Հարավո դուստրը, հրապուրքն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժըպիտն անթառամ...
Սիրատանջ այրված քնքուշ այտերից
Քաղե՞լ ես համբույր վոր քաղցր և մեղրից։

2

* * *

(Պուշկինից)

Ո՛վ վարդ ազնիվ, գերի չեմ ես,
Բայց կապանքից չեմ ամաչում.
Աղքա-տկգիչ սոխակն այսպես
Անցնում և կյանք գովերգում
Հպարտ, չքնաղ վարդի մոտին
Գերության մեջ, սակայն անուշ,
Ցավ չուր տալերն չերգում քնքուշ
Մութ, հեշտալի գիշերներին.

880

ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏԿԵՐ

(Պուշկինից)

Այս ո՜ւմ խանդավառ միաքն և գուշակել,
Ըմբռնել գաղտնիքը գեղեցկության,
Ո՞ւմ արգյոք, յերկինք, վրձինն և գրոշմել
Այս ըսքանչելի գծեր յերկնաբժան։

Այդ դու յես, հանճար... Բայց իս լուսակեցին
Սիրո տառապանք նորան. և անձայն
Աչքերը հառած յուր գործի վերան
Հանգչում և արդեն բոցավառ հպին...

880

4

* * *

Յես զբոսնում եմ բերկրամիտ
Կանաչազգեստ պարտիզում,
Մանիշակը յուր ժըպիտ
Իմ աչքին և պարգևում։

Սիրուն մանուկ, քո աչեր
Վառ են ինչպես այդ ծաղիկ,
Յեվ սիրելի քո պատկեր
Նուշնպես մատաղ, զեղեցիկ։

Քո ժըպիտն էլ անմեղ է,
Ինչպես չքնաղ մանիշակ։
Մանո՛ւկ քաղցրիկ, ինձ սիրի՛—
Մընա՛ այդպես միշտ հատակ։



Ջինջ երինջից ոսկի արև
Տալիս է մեզ սիրոյ բարև—
Ուրախութիւն այսօր հեռև.
Հրիաստս յարեաւ ի մեռելոց։

Խոխջում է ձիւնի աղաւաղ
Ջրաւմ հովիտ, գաշտ ու ձորակ.
Լուսնակով նոր յոյս, նոր կեանք
Հրիաստս յարեաւ ի մեռելոց։

Էլ պատրիզում կանաչազարդ
Ծոռ հաւքերը կայտառ զուարճ
Ազատում են քաղցր երգով.
Հրիաստս յարեաւ ի մեռելոց։

Ս. Գ.

Մասիս

Հովհ. Հովհաննիսյանի անդրանիկ
տպագիր բանաստեղծությունը „Արդյուն"
մանկական ամսագրում
1883

Ա 2834 374

5 ՅԵՐԳ

(Բառի Գոռնու Եղից)

Թող յերգը անուշ հնչէ հեշտագին,
Ինչպես խոխոջը վըճիտ առվակի,
Թող հիշեցնէ մարդկային ազգին
Սիրելի պատկերն անցած որերի։

Վեհ ձայնը յերգչի թող դնէ վախճան
Մեր դառն սուգին, ատոր կրքերին,
Թող նորա յերգը ազգասիրական
Նեըշնչէ աշխուժ, յեռանդ մեր սրտին։

Ինչ մեզ հուզում է՝ թող այն ամենայն,—
Ցեղ ծիծաղ, և լաց, հանդիսատ և թախիծ,
Ցեղ ուրախութիւն, և վիշտը մարդկան,—
Թող մատն ունենան այն հզոր յերգից։

Թող զարթեցնէ նա միտքը քնեցած,
Թուլերին ուժ տա քաջերին վոգի,
Ցեղ պարգևատրե վորպէս հայրենյաց
Փառքովը իրանց արդար գործերի։

881

6

* * *

(Հայնեյից)

Իմ աչքունքից լուսնում են
Անուշաբուլբ շատ ծաղիկ.
Հառաչներըս դառնում են
Սոխակների դայլայլիկ.

Սիրի՛ր դու ինձ—քո պարգև
Տամ, իմ հոգյա՛կ, ծաղիկներ.
Պատուհանիդ առաջև
Անուշ յերգեն սոխակներ.

881

7 ՆՈՐ ՏԱՐԻ

(Նեկրասովից)

Մաշվում է իմ կյանք, հալվում ամէ ցամ.
Տըկար է միտքըս, սառչում է արյունս...
Յես, մայր—հայրենիք, կիջնեմ գերեզմանդ
Ըրտեսած քաղցը քո ազատութեյուն։

Բայց յես կուզեյի—գեթ իմ որհասին
Դու վոտ կոխեյիր հաստատ ճանապարհդ,
Տանջանքից հետո դու քո առաջին
Ծնունդըը բացված քո որը պայծառ։

Կուզեյի—գե՛թ այժմ հասցներ քամին
Հայրենի պյուղից մի ձայնիկ միայն,
Վոր ինձ չըլներըը նոր լոթ ցավագին
Դառն արտասուքի, ծուլացած արյանս...

8 ***

Առավոտս անցավ։ Առաջ եմ նայում—
Պարզ է հորիզոնն, և արևն վոսկի
Ինձ յուր անուշիկ ժըպտան է նվիրում,
Ցնվ վողջ բընությունն այնպես գեղանի՜...

Ականջ եմ դընում—մի ձայն անմեկին
Խոսում է ինձ հետ, բաղդըս դուշակում,
Ցնվ իմ առաջև բընության գաղտնին
Կարծես թե բընավ բացվում, ձերկանում։

Ահա տեսնում եմ իմ կյանքի պատկերը
Այնպես սրատուչ գունով նըկարած—
Սեր, վայելչություն, դրախտի յերաշներ,
Կյանք չընաշխարհիկ ահա իմ դիմաց։

Բայց, ճակատագի՛ր, դու ինձ չէիս խաբում,
Ջե՞ք քո ցուցց ավածն վոսկեզոծ գիմակ.
Ավազ, ցնդում է իմ հուսյալը ողում,—
Կեսորվան արդեն մոտ է ժամանակ...

9

* * *

Շոտապի՛ր, պատանի՛, տալ վայելչութիւն,
Կեանքի ծիծաղկոտ վոսկի որերին
Հարկ լիաձեռնն, քանի անսասան,
Ծախիչ ժամանակ քո բաց ճակատին
Ջեռնն չէ մրխել ակոս ձրգելու,
Բանի ժպտում է քեզ դեմքն արեւու,
Բանի հաշտ աչքով քո յերջանկութեան
Նայում է յերկինք ծաղկավառ գարնան...

Կանցնեն շուտ տարիք, և դուռ կը փոխվիս,
Զրկա յեռանդըդ պատանեկութեան,
Յեվ նախկին կրքեր այլևըս չունիս,
Յեվ չի տրբտփում բոցով սրբազան
Քո մաշված սիրտը. աչերըդ մարած
Զե վառում հուրը մանուկ արտասվաց,
Յեվ միայն վերջին փոթորկից առաջ
Լսվում է չարդված կրծքիդ թո՛ւյլ հառաչ։

ՅԵՐԿՈՒ ԺԱՆԱՊԱՐՀ

Նայում եմ առաջ—յերկու ճանապարհ
Բայց և իմ դիմաց. մեկը տանում է
Շըքեղ, բազմավոր, նվիրական աշխարհ
Քնքուշ ղպայմանքի, ուր միշտ ծաղկում է
Գարունը սիրո յերկնքից որհնած,
Այնտեղ անթառամ վարդի պըսակները,
Յերջանիկ որեր սիրով պարգևված
Յեվ վայելչության անձկալի ժամեր
Աշխատավորի վաստակած գլխին
Պիտի պարգևվեն հանգիստ խնդալին,

Մյուսն անապատ ինձ դուրս է հանում,
Վոր կարոտում է մըշակող բազկի,
Այստեղ պերճախոս վարդ չի բուսանում,—
Միայն տատասկը և փուշը վայրի.
Յեվ կյանքը մեռած և ոդը խեղդող,
Սրտացավ խընամք, յերթև այդ լիներ,
Միշտ յերախտամոռ հոգուց վոռնակոթ.
Չև ժպտում արև, սևաթուխ ամպեր
Գոռ փոթորիկ են յերկրին գուշակում,—
Յեվ յես կանգնած եմ և խոր մըտածում,
Ո՞ւր իմ անհատաա քայլերըս ուղղեմ,
Սրտյոք յերկուսից յես վճիռը ընտրեմ,

Այնտեղ, ըզգում եմ, փարթամ, յերջանիկ
Գըլորվելու յեն իմ կյանքի որեր.
Աչագեղ կույսը հայացք չընաղիկ
Պարգևում և ինձ, և սրբանըվեր
Նոճիների տակ պիտ գըլուխս հանգչէի
Նորա մարմարիոն կուրծքին նազելի,
Յեվ պիտի գըտնեմ այն վառ աչերում
Յես դրախտավայել մի վայելչությունն...

Այստեղ ականջըս փայփայելու չե
Կանաչ պուրակում թռչնոց մեղեդին,
Վոչ պիտի տեսնեմ սըփռոց թավիշե
Յես անուշարույր ծաղկոտ մարգերին։
Վա՛չ. արյուն-արցունք, լըքյալ հառաչանք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Արգար քրտինքով մըշակած դետին
Ավարի մատնած—ահա իմ բաժին։

Բայց այնտե՛ղ կյանքը չունի նըպատակ
Բացի անձնական բարօրությունից,
Իսկ այստե՛ղ դործի ասպարեզ արձակ,
Աղնիվ և վըսեմ, թեև վըշալից։—
Յեվ յես կանգնած եմ և խոր մըտածում...
Կյանք, ինձ յերկուսից վո՞րն ես պատրաստում։

11 ***

Ջինջ յերկնքից վոսկի արև
Տալիս և մեզ սիրո բարև—
Ուրախություն այնուհետև.
«Քրիստոս հարյավ ի մեռելոց»։

Խոխոջում և վճիտ առվակ՝
Ջրում հովիտ, պաշտ արտորայք,
Ավետելով նոր հույս, նոր կյանք.
«Քրիստոս հարյա՜վ ի մեռելոց»։

Յեվ պարտիզում կանաչազարդ
Թռչնակները կայտառ զվարթ
Ճոխոջում են քաղցր յերգով.
«Քրիստոս հարյա՜վ ի մեռելոց»։

[883]

12

ՊՈԵՏԻՆ

(Պուշկինից)

Պոե՛տ, սիրուէն դու ամբոխի մի՛ տար դին—
Շուտ կըլուծն աղմկալից դրվատներ.
Ծաղր ու լուտանք թող վոր թափեն քո գլխին,
Այլ դու մընա միշտ անխռով, անսերբ։

Արքա չես դու. ապրիր մենակ։ Քո ուղին
Դընա վատահ, ուր վոր տանեն միտքդ ազատ.
Հասունացրու դու պտուղներն հարազատ
Վեհ խոհերիդ, վարձ մի՛ ուզիր քո գործին։

Վարձահատուց և պատավոր դու ինքդ ես .
Քո գործը դո՛ւ ամենից խիստ կըդատես։
Ինքդ դոհ ես, արվեստավոր անաչառ։
Դոհ չես. խուժանն հայհոյի թող քո վատակ,
Ծաղրն բագինդ, ուր վառվում է քո կըրակ,
Ցեռտանիդ դրդվեցընե տղայաբար։

883

13 [ԵԼԵԳԻԱ]

Անցած թվականը անմիա որևէի
Իմձ ծանր և վորպես ըմպելյաց չոպի.
Բայց իրրև գինի, քանի հին, այնքան
Խիտ և հիշատակ անցյալ ախորժյան,
Տրտում և ուրիս՝ կակիծ ու տանջանք
Լոկ խոստանում և հեղհեղուկ իմ կյանք։

Բայց չեմ կամենում, ընկերներ, ձեռնիվ,
Յես ապրիլ կամեմ, խորհիլ ու տանջվիլ.
Յեվ, գիտեմ, կյանքի վիշտ ու հոգսերում
Սպասում և ինձ և վայելչուհյուն.
Գաղջուհյամբ յերբեմն հոգիս կըլցվի,
Աչքունքովս մաքիս պատուղը կթրջվի
Յեվ դուցե ախուր իմ արևմուտքն
Յուլանա սերը մի ժպտով հետին։

884

188

* * *

Բավական է լաս, չարաւա՜նդ հոգի,
Հերի՛ք գժդակ վիշտը քեզ մաշե.
Ո՞վ է վոր լաե այդ քո թռչյլ ձայնի
Պաղատանքներին. հոգի՛ իմ, լռե…

Ո՞ւմ են պետք դառը քո առաւ արցունք,
Քո վողբը լռիկ, քո սերը այրող.
Ա՜խ, քո խղճերը, քո վողջ մտածմունք
Մի՛շտ պիտի լինին բաղդից վտանգվոր…

884

14

* * *

Մինուչ ձիշտը մեզ միայըրնց,
Յերկու վիրավոր սրտեր մոռեցան.
Անմեկին ընկեր, հոգիս վկայեց—
Դու իմ հրեշտակն ես մխիթարուԹյան։
Տեսե՞լ ես, քուրիկ, յերբ գոռ փոթորիկ
Փչում անապին և մատաղ թփերը
Խիստ տատանում ե, նոքա իրար գիրկ
Դիմում են սիրով, ասես, այդ լիներ
ՓրկուԹյան անքուԹի մի պատսպարան...
Բայց հողմը ուժգին բաղխում ե նոցա,
Յեվ անա կրկին իրարից լաժան
Իրանց չար բաղդը վողբում են նոքա։
Ո՞վ գիտե, գուցե խիստ ճակատագիրը
Յեվ մեզ անջատե մի որ հավիտյան,
Յեվ դու, սիրելի, արդյոք տարտգիր
Յեղբորըդ չՀիս տալ դու մոռացուԹյան.
կը հիշես արդյոք միտքն թափած
Մեր արտասուքը, իզուր հառաչանք,
Յեվ դարձյալ կզգաս քեզ համար միշտ բաց
Մի լքյալ սրտի անվերջ տառապանք...

15

* * *

Վորպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված և ժայռը չքերի վրա.
Ալիքը կայտառ գնում են գալիս
Յեվ ժայռին սիրո համբույր են տալիս։

Աղում են անդոզ ալիքը գետի,
Յուցնում են գրկած պատկերն արևի,
Յեվ, վորպես մանուկ ժպիտն յերեսին,
Մեղմիկ շշունջով խոսում են ժայռին.

«Լսիր, ծերունի՛, լինչու ճակատիդ
Սև կնճիռները չեն տալիս դեմքիդ
Մի որ խնդության շողով ցոլանալ—
Վողջը վոխվում ե, դու նույնն ես զարձյալ։

«Ազատ լեռների ազատ զավակներ,
Մենք քեզ բերել ենք անթիվ զոհաբերներ.
Յերկունքի դասեր—վարդի լեռնասուն
Ես ցողենք կուրծքիդ անուշհոտություն։

«Մենք յերանավետ քնքուշ նվագով
Կրկոչենք խորքից ձկներն յերամով
Յեվ վոսկեզոծված գարնան արևից
Քեզ մեր զվարթ պարին կանենք խնդակից։

«Յեվ քո ականջին միշտ սիրո յերգեր
Մենք արշալույսից կասենք մինչ ասպղեր,
Յեվ քեզ կըփաթեթնք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցըր կյանքին...»

Ալիքը կայտառ դնում են, գալիս,
Սև ժայռը նախկին յուր վիշտն և լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաջում—
Նա կրկին անշարժ, նա կրկին արտում...

884

16

ԱՎԵՐԱԿ

Վորպես վաղեմի մի ավանդություն
Կամ շքեղ յերազ անմեղ մանկության,
Կենդանանում է այսօր իմ մտքում
Խրոխտ ավերակն նախնյայց մեծության.
Այստեղ բեկորներ վսեմ արվեստի,
Այնտեղ հիշատակն արքունի վառաց,
Յեվ վկայարան սրբազան ուխտի,
Յեվ տխուր հետքը մեծաշուք կենաց...

Ո՜հ, այսպես վողջ մեր կյանքն է վաղանցիկ,
Վողջը լոկ ծպղր է անխիրտ բնության,
Յեվ սեր, և հրճվանք, հանճարն պեղեցիկ
Զոհ է ավերի և մոռացության։
Ինչպես պատրանքը հեշտասիրության,
Ինչպես զրփիրը պատանու արյան,
Խաբուսիկ ժպիտն աշնան արևու,—
Բոլորը վաղն է անհետանալու։

884

3)

17

* * *

Ա՜խ, տվեք ինձ քաղցըր մի քուն,
կյանքից հեռու սըլանամ
Ա՛յն աշխարհը, ուր խնդուքյուն,
Ուր սերն և միշտ անթառամ։

Ինքուշ վարդերն ինձ բարձ լինին,
վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բուրըը զըվարթացին
Ծծեմ անվերջ կես անհագ։

Ցեվ խայտալով իմ առաջին
վտակն անուշ խոխոջե,
Մի թարմուքյուն յեղեմային
Զորս բոլորքս տարածե։

Ցեվ ինձ ժպտի արշալուսին
Գարնան մատաղ արեգակ,
Ցեվ գիշերով իմ ճակատին
Խազա գողարիկ վառ լուսնակ։

Ցեվ աշագեղ կույսն ականջիս
Ցուր մեղեդին մեղմ հնչե,
Ցեվ հերարձակ՝ սիրով վըզիս
Փարե քնքուշ, փաղաքշե...

Ցեվ հավիտյան վայելչուքյուն
Գրկե հոգիս, չհագենամ...
Ա՜խ, տվեք ինձ քաղցըր մի քուն,
Հեռո՜ւ, հեռու սըլանամ։

18 ՀԵՌԱԳԻՏ

Կուզեյի անհետ հեռանալ, կորչել,
Որպես վոսկեվառ շողն արշալուսի,
Որպես մի ասաղիկ կուզեյի հանդչել
Բարձր կամարում կապուլա յերկնքի։

Որպես քաղցր յերազ կուզեյի անցնել
Խանգարված ոգով հոգսերիցն որվան,
Կամ դիշերային ձայնի պես մեռնել,
Տեղ տալով խորին մի խաղաղության։

Յեվ վորպես ցողը չես շոգիանալ
Կուզեյի հզոր արևի տապից,
Կուզեյի դեպի յերկինք բարձրանալ,
Որպես սրբազան կնդրուկ բուրվառից։

Յեվ կը ցանկայի ինչպես ծուխ ցրվիլ,
Ինչպես ոդումը բույր ծաղիկների.
Վողջ իմ եյությամբ ընավին չնվիվիլ
Կուզեյի հանկարծ, առանց ցավերի։

Յեվ կը ցանկայի... բայց ինչճու ցանկամ,
Դյուրավ չե գալիս մահը վերահաս,
Մինչ նորա գալը բաժին և մարդկան
Սրատամաշ ցավով առնվիվիլ հանապազ։

Յեվ ահա հետո հասնում և միայն
Բոլոր վշտերի ախտը վերկությունն,
Յեվ քեզ համար և լոկ անվիշտ վախճան
Քեզ համար, դու՝ մեծ, անսիրտ բնություն։

19 **ՑԵՐԳ**

Անհամեմատ ես ինչպես հրեշտակ յերկնային,
Ջեմ կշտանում նայելով քո յերեսին.
Վառ աչերըդ, ինչպես արև գարնային
Ամբողջ, սիրական, լցրըռնքում են իմ հոգին։

Իրավունք ասուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ,
Բաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ.
Ով վոր առնի հոտը շամամ ծծերիդ,
Ել կարող է թե մի պին սա յուր կյանքին։

Թե ասածդ ինձ պիտի մահ ասա, թող ճոտ գամ,
Վղովիդ ընկնեմ, քիզ համբուրեմ մի անգամ.
Թող ապրշում մազերովըդ ինձ կախ տամ—
Բընավ մի կյանք ել չի հասնի այդ մահին։

885

20 ⁂

Ի զուր ե, հոգիս, ի զուր, իմ հրեշտակ,
Այդ զգվանքներդ, անուշ ժպիտներ.
Դու չես վառելու սրտիս մեջ կրակ,
Նորից կյանք չեն տալ ինձ քո համբույրներդ։

Ինչպես վոր աշնան արևը ազոտ
Չեր սթափեցնելու մեռնող տերևներ,
Ինչպես արհեստը ծաղկանցը անհոտ
Կորուստի բույրը ել հետ տալու չէր,

Նույնպես քո սերը նորից բորբոքված
Իմ մարած հոգուն հարությունն չի տա.
Քեզ համար, հոգյակ, իմ սիրտը ժպտված
Այլ ևըս չունի նույն սերն, հավատն։

Բայց իբրև ցնորք քեզ միշտ պիտ սիրեմ,
Մի քաղցր ցնորք վոսկի մանկությյան,
Իբրև կորուստի վաղանցիկ յեղեմ,
Մի վառ շող անկեղծ վոգևորությյան։

21

* * *

Անապատումը յերբեմն կյանքի,
Անմիա ցնորքով մաշված սրտերին
Խավարի մեջը յեռուն կրքերի
Միակ ափոփանքն ես դու, կա՛յծ յերկնային.

Դու անգի՛ն գոհար, սե՛ր, գանձ մարդկության,
Դու յես վոր միայն չարատանջ հոգուն
Բերում ես քաղցրը հույս յերջանկության
Ցավ կյանքը սիրել տալիս ես մարդուն։

Բանի՛ տանջվելով ծանր բևի տակ,
Ճնշված պիտույքից առօրեական,
Դարձնում եմ աչքս այն կինջ, կապուտակ
Յերկինքի վերա անցած ժանկության,

Յերբ նուչնպես եյին իմ որերն անցնում
Անհոգ խաղերով, քաղցրիկ յերգերով,
Ինչպես վըտակը դալար ափերում
Սահում և մեղմիկ կարկաչ հանելով։

Այդ քո պատկերն ե, սեր աստվածային.
Դու իբրև մի շող կենդանի լուսով
Միշտ բորբոքում ես սիրտը մարդկային
Սպրնլ անվհատ անվախճան հուսով։

22

* * *

Այս որերումը ընդհանուր սուգի,
Զարդված սրտերի, գառն հառաչանաց,
Ցերբ մենք միշտ պատրաստ մի ծանր կռվի,
Վատնում ենք ուժիս դեռ չըկազդուրված,

Ցեվ այս կռվի մեջ ահիղ, սոսկալի,
Ուր վոր գլուխը նենգավոր բաղդից
Անհետանում է, վորպես մի ճըճի,
Հալթված վոսկեղոծ յերկաթի բաղկից,

Ուր միայն մեկի ծառն յերջանկության
Բուսնում է տասն ավերակներից,
Ուր մի ժպիտը ծագկում է միայն
Հարյուրավորի աղի արցունքից,—

Ցես դեռ անվընտաս շարունակում եմ
Իմ ճանապարհը, դեռ հավատալով
Թե գուցե մի որ և յես գտնում եմ
Այն, ինչ չը կամի բաղդը տալ սիրով,

Բայց յեթե և յես տանջված, չարչարված,
Գըլուխս խոնարհեմ իմ ճակատագրին,
Մորատակված հուսով, արյունըս սառած,
Իբը աշնան տերև քամու առաջին,

Ընկեր սիրելի, դու չըմոռանաս
Հիշել անունը մատաղտա յերգչի,
Վոր պիտեր տանջվիլ, սիրել հանապազ,
Գուցե՛ յերջանիկ որվան արժանի։

23

* * *

Դարձյալ նոր տարի. թող ուրախանան
Բաղդավոր կյանքով վերածընութեան,
Ում ճակատագիրն այդ վիճակել է,
Ով միշտ հուսացել և ըսպասել է։
Բայց ինձ ի՞նչ պիտի բերի նոր տարին,
Վո՛չ արդյոք նոր ցավ իմ տանջված սրտին...
Ա՜խ, վոսկի շողը մի նոր զգացմունքի
Ինձ մի նոր վշտի ալբյուր պիտ լինի։

Զքնաղ արարած, վոր մի հայացքով
Անմեղ մանկութեան, մի անուշ ժպտով,
Կարող ես կյանք տալ լուսե քնարին
Ցեվ վոգևորել քուն մտած հոգին,
Ցես հասկանում եմ վոր չեմ արժանի
Վայելել սերը քո քնքուշ սրտի.
Անմիտ խոսքերով յես չեմ կամենում
Խռովել հանգիստդ այդ քաղցր հասակում։

Վո՛չ, քեզ սիրելով, քո վառ պատկերին
Ցերկրպագութեան դարձնում եմ բազին
Իմ մաշված սիրտը և ակնածութեամբ,
Անկեղծ արցունքով և անհուն զգացմամբ,
Միշտ պիտ ազոթեմ, տանջվիմ և սիրեմ,
Սերըս աշխարհից ծածուկ պիտ պահեմ.
Ցեվ լոկ մի խոսքըդ բարեկամութեան
Ինձ յերջանկութեան պիտ տա անսահման։

24

* * *

Տըխուր կըզիչը քնարը ձեռին
Վաղրում եր անրադդ յուր ճակատագիրը,
Քնքուշ ձայնները խորտակված սրտին
Զուռնային տալու մի խոսք կարեկիր։

Դառնացած հոգով նա խորասուզված
Անցած օրերում, ուղում եր այնտեղ
Գտնել այն հանգիստ, վոր կըզիչին տանջված
Տալ չեր կամենում աշխարհը ոգեղ։

Բայց և այն գատարկ վորպես անապատ,
Հիշողութիւններ անցած մանկութեան,—
Կուսի ջերմ սիրտը գլխին հուսահատ
Միայն պարգևից հանգիստ վրկութեան...

Վահ, թույլ ուժը և ինձ, ընկեր նագելի,
Այս քաղցըը որին ցանկալ վոր, պատած
Անկեղծ սիրովը մատաղ քերթողի,
Ծաղկիս դու չքնաղ, իրեև վարդ փթթած.

Յեվ քո անարատ ըղդայուն հոգին
Լինի ինձ ազնուր վառ յերջանկութեան,
Քո անբիծ սերը կյանքիս խավարին
Ծագե արշալույս նոր բաղդի գարնան,

25

* * *

Ինձ մի սիրիր. անբաղդ օրիս
Այլ սերն ինձ չի խնդութիւն.
Դաժան վշտից խեղդված հոգիս
Ել չի առնի հարութիւն։

Ծածուկ կիրքը ինձ պիտ տանջէ,
Ցեւս չըկամիմ քեզ սիրել,
Բայց իմ սիրտը միշտ պիտ խնդրե
Ինքդուշ սրտիդ մոտ լինել...

Ցեվ պատրաստ եմ քեզ հավիտյան
Լինել անկեղծ կարիկիդ,
Ցեվ թող բեռը քո տխրության
Ջըհեռանա իմ սրտից,

Ինձ մի սիրիր... թող ախտավոր,
Մաշող սիրտ փոխարեն
Մտերմություն մեզ բաղդավոր
Կապե կապով բոցկղեն։

26 * *

Ցերեկի նորան վոր սեր և ապատ
Յուր զգացմունքներին,—սիրել և տեղ,
Վորին բռնության չի տալ հուսահատ
Բազդիցը զրկած յուր կյանքն անիծել.
Վոր յերկնից հետ հաշտ, ներդաշնակ հոգով,
Չե դարձել գերի անթիվ կրքերին,
Կարող և սերը վոգունել ժպտով
Ցեվ նախատելով մերժել անգութին.

Ցերեկի նորան վոր շընորհք ունի
Սիրել անձնվեր և անկեղծ սրտով
Սրբել քրտինքը վաստակավորի
Ցեվ տառապյալին խընամել փութով.
Ցեվ յերկրպագու փրկչի սուրբ խոսքին
Անտրտունջ բաշխե յուր ձեռի լուման,
Ցեվ կարեկցաբար արհամարհվածին
Բաց անե դուռը մըխիթարության...

27

* * *

Զգում եմ արդեն, հանգչում և հոգիս,
Եվ չը կա բոցը վոգևվորության.
Զուր և քո խրախուս, զուր և, սիրելի՛ս,
Եվ ինձ չի ծագի արևը գարնան։

Եվ ամպկալից կյանքը աշխարհի
Յեվ վոչ սիրն անուշ յուր յերաղնեբով
Այն հըրապուրքը չունին վաղեմի,
Այն քաղցրությունը և այն մեղմ գորով...

Վաւվաուն կյանքից յես դեռ չըքաղած
Յեվ վոչ մի ծաղիկ, արդեն ուժասպառ
Ընկած եմ վորպես մի ծերուկ մաշված,
Յեվ վայելչությունն արդեն ինձ ուսար...

28

ԱՆԳՐԱԳԵՏ

(Սիբոկոմլիից)

Յերբեք մեկին չեմ նախանձում յես աշխարհի յերեսին,
Միայն, դթագին դուք պարոններ, նախանձում եմ
ձեր բազդին։
Ա՛խ, դթայեք գեղջուկ վորբիս, մի լավութիւն
մխայն արեք—
Տըվեք մի թերթ ինձ ձերմակ թուղթ, մի փետուրն
գրիչ ավեք,
Յեվ ինձ գրել սովորըըրեք, սովորըըրեք լաւ, շուտով,
Վոր գըըրիչս կայծակից էլ արագ թռչէ գրելով.
Վոր պատմելով թղթի վերա յես ձեզ ցույց տամ ամեն
բան—
Մեր աշխատանք, ձեր չարչարանքն ու ձեր խաչը
վիշտ-թշվառ...
Կը հայտնեի, ինչ ցնորքներ, ինչ մտքեր կան իմ
գլխում,
Մի վողջ աշխարհ ցույց կտայի յես աննման պատկերում...
Բայց այժմ անհնար չքանում են բոլոր իմ քաղցր
երազներ.
Յես անգրագետ, յես անուս եմ... Սովորըըրե՛ք,
պարոննե՛ր,
Կը գրեի յես առաջուց, ինչ եմ տեսնում յերազում...
Այս յերազներն այնպես շքեղ, հրաշալի են...
Յեվ դաշտում
Ահա գեղջուկ մատաղ աղջիկն հունձ է անում յեռանդով.
Նորան հրեշտակն յերկնքիցը ժպտում է վառ աչերով...
Յերևի թե կարեկցում է նա հնձվորին... Յեվ նորա
Սրտաուխիկը կամի սփոփել յուր յերգով քաղցրաձայն...

Կըգրելի, ինչպես ամառն արշալույսն է վայլփայլում,
Յեվ քարերին զարնըվելով կայտառ ջուրն է խոխոջում.
Ի՛նչպես արտում ցորենի հետ զրույց է անում
մեղմ քամին,
Յեվ աղոթքի հրավիրում է փոքրիկ զանգը մեր ժամին.
Յես աղոթել կամենում եմ, բայց չգիտեմ աղոթքները—
Յես անգրագետ, յես անուս եմ... Սովորցըրե՛ք, պարոննե՛ր։

Ազնիվ գործ է՝ թե մարդ գրել յուր խոսքերը կարենա,
Բոլորն, ինչ վոր մտածում է, բոլորն, ինչ վոր գըլուխը գա,
Գրչով պատմե այն ամենը, ինչ դիզվել է յուր սրտում,
Ճշմարտությունն միշտ քարոզե, բարի գործի մեծարելով.
Լավ է նույնպես, թե կարող է, գըչով կծու խոսքերին
Պատասխանե—սուսերի պես կհարվածե չարերին։
Յես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսյալ
թշնամուն՝
Սիրտս այրվում է, պատասխան չունեմ բնավ զորությունն,
Յեվ զուր տեղը յես տանջվում եմ, և հուզվում եմ,
և դողում,
Յեվ ձիմիայն թղթի վրա անմիտ կերպով խազխազում.
Ինձ ծաղրում են, և ամոթով կարմրում են իմ այտեր...
Յես անգրագետ, յես անուս եմ... Սովորցըրե՛ք, պարոննե՛ր...

Շատ լավ բան է գիր իմանալ։ Գրագետ է վաշխառուն.
Գրագետ են դատարանի ծառայողներն անկշտում.
Գրագետ են դատավորն է, նոցանն է դրախան աշխարհի,
Յեվ առանցով էլ նոքա գրում են, նոցանն է դրախան աշխարհի,
Իսկ այդ գրելն ինչ փուչիթ վոր խեղճ մարդու հոգին
պիտ հանի...

Շուտով, շուտով, գրի՛չ ավելք, սովորցըրե՛ք գործ ածել
Կամիմ գրել ազգիս համար, նորա համար աշխատել.
Յեվ յես նորան կը պաշտպանեմ չարագործից, հիմարից,
Յեվ յես նորան կը պատրաստեմ լավագործից...
Կարատգրեմ ավետարանն յես բոլորը ըսկզբից...
Ա՛յ դու, սագ իմ ճերմակթևիկ, քեզ ավել եմ կերակուր,
Քեզ սիրել եմ—փոխարենը թևիցդ ինձ մի գրիչ տո՛ւր.
Սիրուն դու սագ, տո՛ւր, խնդրում, եմ ինձ թռչելու ցնծագ
թևեր,
Ուր ամենքը գըրագետ են.— Սովորցըրե՛ք, պարոննե՛ր։

29 ՊՐԵՐԱԴՈՎԻՉԻՑ

Ցոլուն սաղերը կապույտ յերկնքում
Յերգում են անուշ մլասին խմբված,—
Յեվ ըզգուշութեամբ կամաց են յերգում
Վոր չզարթեցնեն յերկիրը նիրհած.
Ա՜խ, ամբողջ որը շրջող վոտներից,
Անվերջ աշխատող կուռ բազուկներից,
Ամուր բաբախող մարդկանց սրտերից
Խեղճ մայր—յերկիրը սաստիկ և հոգնած...

886

30

* * *

Գեղեցիկ որեր, ծաղկավառ որեր,
Իմ ցնորամիտ պատանեկութեան,
Գիտեմ, վոր շուտով չարագուժ ամպեր
Կը պատեն յերկինքն իմ սիրուն գարնան.
Գիտեմ՝ վոր արևն, վոր հիմա պայծառ
Ծիծաղում է ինձ, պատիր հուսաներով
Լոկ խոստանում է իմ կյանքի համար
Ծաղիկ բուսցընել վոսկե շողերով։

Յեվ այն բոլորը, ինչ ինքնահավան
Ստեղծում է միաքըս վառված բորբոքված,
Զըքանալու յի շուտ ծուխի նըման.
Յեվ այն պատկերը սիրած փայփայած,
Վոր մխիթարն է ամայի կյանքիս,
Գիտեմ պիտ ցնդի, ինչպես մի յերազ
Հուզված ուղեղի, վոր ցուցց է տալիս
Յերբեմն անբաղդին մի վիճակ անհաս։

Բայց զարձյալ քաղցր եք, գեղեցի՛կ որեր,
Ընտանե՛ սրտիս... Ո՞վ գիտե հետո
Իմ տանջված հոգին ինչ նոր նոր ցավեր
Դեռ պիտի տեսնե. ծաղիկը սիրո,
Վոր հիմա թոշնած մի հիվանդ ժպտով
Դեռ նայում է ինձ, արդյոք ըլընավին
Պիտի չըմեռնի՞... գուցե և շուտով
Լուռ փոթորիկը ճայթի իմ գլխին։

Լուղտրդի նըման չես ծովն եմ ընկնում—
Աբդյոք մյուս ափն ինձ պիտի հանե՞ն
Գոռ ալիքները... պինվորը կռվում
Գիտե՞ իրանցից վո՛չք պիտի ապրեն...
Գոնե գոռ ղըհոց չերագները հիմա
Ափնիվ վայելքի բերում են ժամեր.
Մ՛ես, որ նյայել լինիք, ձեզ չեմ մոռանա,
Գեղացիկ որեր, ծաղկավառ որեր։

886

31 ԳՅՈՒՂԻ ԺԱՄԸ

ՏաՆ—դո, տաՆ—դո... Նագո՛ւ, վեր կաց,
Աբևն արդեՆ մայը և մանուա.
Տես, ԽաթունՆ եվ գործը պըծած
ՓողոցումՆ և, ժամ և շտապում:
Ժամը տվիՆ—տաՆ —դո, տաՆ —դո,
Տեր, փառքըդ չմտա, տաՆ—դո, տաՆ—դո...

Շուտով նախիրՆ հանդից կը գա.
ԳըՆանք վոր շուա եվի յիտ գանք,
Կովը կթենք, թըՀ—թըՀ կաթ տա,
Կովը կթենք, մեր ցամք հոգանք...

Ա՛խ, Նագո՛ւ ջան, չես իմանում—
Եգուց եվի աղան կը գա,
Նորա սիրտը միշտ անկշտում,
Եվ ամպի պես պիտի գոռա.

«Շուտով, Գրիգո՛ր, փողերը բե՛ր...—
Եվի չկա՛. կովըդ հանկիր»...
Ա՛խ, Նագո՛ւ ջան, այՆ ինչ բան եր,
Մ՛իտք և հերուս... Տե՛ր, դու փրկիր:

Հայրիկիդ արդեՆ գըՆացել և
Վոր փող ճարի. յիՆքը պիտի գա,
Տևսնենք մեկը խղճացել և...
Ա՛խ, սև որը աերՆ եվ չըտա:

Շուտով, Նազլո՛ւ, կընանք ժամը,
Ապթիք անենք. քո ձայնն աստված
Շուտ կըլըսի—այս անգամը
Մեզ չի թողնի անկով, անհաց...

Բարի մարգիկ միշտ կը լինին,
Հայրիկը հետը փող կը բերի.
Փողը կը տանք չար ազային
Վոր մեր ըիժոն էլ չըխըլ լի...

Տան—դո, տան—դո... Նազլո՛ւ, կընանք.
Սրևն արպեն ծայր է ծոնում,
Եգուց սեռնանք, վոր վեր կենանք,
Ի՞նչ նոր արև է մեզ ծագում...
Ժամը տվին— տան—դո, տան—դո.
Տե՛ր, փաւքըդ չմա. տան—դո, տան—դո

886

1)

32 * * *

Յես քեզ սիրում եմ, սուրբ գեղեցկության
Անարատ հրեշտակ, տիպար մաքրության.
Սիրում եմ վոչ վառ աչերիդ համար,
Ոչ ցոլանում և քո հոգին պայծառ,
Ոչ վարդ այտերիդ, նազուկ շրթունքիդ,
Վոչ վարդ այտերիդ, նազուկ շրթունքիդ,
Ոչ ծաղկում և քաղցր յերկնային ժպիտ...

Այդ անմեղության, այդ անբիծ հոգին,
Ոտար աշխարհի ագեզ ախտերին,
Այդ սիրող սիրտը, չերմ սիրան անխաբդախ,
Այդ՝ վառ հավատը մանկության խաղաղ—
Ահա թե ինչը, մանո՛ւկ պաշտելի,
Յես անկեղծ սրտով քեզնում սիրեցի։

Յեվ սեղան կանգնած յերկրպագության,
Հալվե ու դմուռս, կնդրուկ սրբազան
Քեզ պիտի ճոնեմ, թե սերն իմ սրտի
Քեզ պես պիցուհուն չի զոհ արժանի։

886


33

Բանէ, քանէ կամեցել եմ
Հանգիստ գտնել կյանքիս մէջ,
Յեվ միշտ սիրտս բորբոքել եմ
Յերազներով յես անվերջ։

Ինձ աշխարհը չը կամի տալ
Անդորրութիւնն իմ խնդրած,
Դառնարկ հուսով չուզե մընալ
Սիրտս մաշված, խորտակված։

Յեվ չեմ խնդրում անկարելին...
Մի սիրտ, մի սիրտ ըզգայուն,
Վոր և սիրվեր և սիրողին
Բերեր սիրո վառ գարուն...

886



Ա. Հովհաննիսյան
[1923–4]

34

* * *

Ամենայն անգամ, կերբ տեսնում եմ քեզ,
Ախլոք աչերիդ նայում եմ զմայլած,
Ցեվ հանկարծ անփորձ մի մանուկի պես
Ցէս կարմրում եմ հուզված, շփոթված...
Ամենայն անգամ վորքան էլ տրտում
Ինձ տված լինիմ մաշող մտքերի,
Քո ներկայութիւնն ազբյուր է լինում
Ինձ համար ուրախ, զըվարթ ժամերի։

Այս ինչ է արդյոք, ո՛վ կուլս նազելի.
Մթթին սեր արդեն. ոհ, չեթե այդպես—
Թող ուրնեմ, հոգյակ, նվերն կերկնքի,
Այս աստվածեղեն կայծն հասնի և քեզ.
Կուզեյի է քո արյունը վառված
Սիրո վոխորիկ հաներ քո սրտում,
Կուզեյի տեսնել քո հոգին խառված,
Արցունքի շիթեր է քո աչերում...

886

35 **ՀԱՏԻԿ**

Լուսյակը բացվում է. շուտա արտը պընամ,
Պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի.
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև որերը ամքան արևի։

Թաղեմ քեզ, հատի՛կ, և գարդըս քեզ հետ
Թե աստված ուզեց, դու կանաչեցիր,
Թող գարդըս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կըկլնն տուն գարձիր։

Յեվ ջերմ ազոթքով սիրտդ առջև
Յես ձեռ կը վառեմ, յես խուհնկ կը ծըխեմ,
Վոր քեզ պարզևե մի առատ անձրև,
Վոր քեզ միշտ սիրով նայե խնդագին։

Բայց թե այդ շնորհին մեղքիրես համար
Արժանի չլինիմ, ծուլ կը գարձնիմ
Յես տաք քարինքը ճակտիս արեան,
Վոր քեզ, իմ հատի՛կ, ծարավ չըթողնեմ։

Ծըլիր, կանաչի՛ր, վոսկե ասլանով
Ծաձկիր իմ արտը վողջ ալիծաձան,
Նոր այն ժամանակ անուշ շըշյունով
Ձո՛ւր չարդված սրտիս մի քուն հանգստյան։

36 ՋԱՏԻԿ

Դարձեալ գարուն, և խնդագին
Աբթնանուշ և բընութիւն,
Պարգեւում և արևն յերկրին
Նուր հնորհատու զորութիւն։

Ցեվ սթափում և մի նոր կյանքով
Կանաչ տերև, թավիշ խոտ,
Ցեվ բերում և վողջույն սիրով
Ջեզ վերյուռը քաղցրահոտ։

Ցեվ կենսաբուխը այս վառ գարնան
Գեղեցկութիւնն վոգիւից
Կամի հուսալ մի պատասխան,
Ներդաշնակ խոսք աշխարհից։

Բայց խռովահույզ միտքը ձարդկան
Ըսպասում և այն որին,
Յերբ սերը մեծ ու անվախճան
Պիտի հաունե վերսաին։

Յեղբայրական սուրբ համբուրով
Մարդիկ մխայնոց մոռեցած
Վողջագուրվել անվոխ հոգով
Պիտի շտապեն սեր գրկած։

Կը գա այդ որն, եւի նորեն
Մարդիկ մեծ սերն անվախճան
Ամբողջ ատրով պիտի թաղեն
Մինչև նոր աշն հորիզոն...

37

* * *

Ա՜խ, ի՞նչպես, հոգյակ, կը կամենայի
Քեզ հետ միասի մենակ գոնե մի վայրկյան,
Յետ, թեպետ զրկված գլխանքից բաղդի,
Խնդրել քեզանից խոսք համակրութեյան։

Մեր բոլոր կյանքը անցնում է չնչին
Փոքրիկ կրքերով, ունայն հոգսերում,
Անմիտ կռվի մեջ, ուր չունի մի պին
Վեհ, ազատ հոգու առաքինութեյուն։

Յետ յես տեսա եմ վայելչութեյունը
Կյանքի անխորհուրդ յեռուն խնջույքի,
Ուր տիրապետում է սեւ չարութեյունը,
Բուրմունքը չըկա սիրավառ սրտի։

Կուզեյի գոնել հանգիստ յերգի մեջ,
Մի զեղուն, մաքուր, հոգեւորական յերգի.—
Բայց սիրտը դատարկ, և յես մի անշունչ
Կարոտ եմ բոցոտ, անհուն զգացմունքի։

Յետ քեզ եմ դարձնում, հոգյակ, իմ աչեր,
Լի մի խանդակաթ սիրով անսահմանն...
Բայց ամառող հոգուդ արդյոք իմ խոսքեր
Պիտի հասնի՞ն թե՝ լոկ ձայն պիտ մընան։

38 ՑԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ

Քանի դեռ մատաղ արյունը յեռուն
Յերակներիս մեջ զարկում և ուժգին,
Յեվ ծաղիկներով կյանքը զարդարուն
Խոստանում և մեզ դրախտ յերկնային,—
Սեր չքնաղ, դու յես համբույրըդ տալի
Մեր ախտաբորբոք այրվող շրթունքին,
Բազդի խաբեսիկ համբույր թունալի,
Ինչպես վոսկեվառ յերազ հիվանդին։

Բայց կը գա ժամը, յերբ հրաժարական
Պիտի տանք վոչնչյին բոլոր պատրանաց,
Յեվ անուշաբույր կյանքի քաղցրության,
Յեվ անազորույն դառն հառաչանաց,—
Յեվ ահա գունատ մահը կը դրոշմե
Յուր սառն համբույրը մեր սառ շրթունքին,
Յեվ գիտեմ վոր նա պիտի չբխալե
Մեզ փաղաքշելով յուր անկյանք կուրծքին։

40

* * *

Ինքուլ տողերում չես պիտի յերգեմ
Սրտիս թագուհու նազելի պատկեր.
Յես նորա առաջ զոհ պիտի բերեմ
Հոգուս անմեկին բոլոր զգացմունքներ։

Թե շունչ կա բերնումս և սրտումըս հույս,
Դեռ չե ցամաքել արցունքն աչերիս,—
Այդ դու չես, հոգյակ, վոր ծագում ես լույս
Այս խավարի մեջ անապատ կյանքիս։

Յեվ չես կը հյուսեմ պսակ քո գլխին
Վառ արշալուսո վոսկի շողերից,
Յեվ քո կուսական ցողկու կուրծքին
Կը խըլեմ բույրը հարավո վարդից,

Յեվ կառնեմ ձեռքս յոթնագի քընար,
Կը հնչեցընեմ յերգըս վոլորուն,
Թող լսեն մարդիկ, ճանաչեն աշխարհ
Անմահ դիցուհուս սուրբ գեղեցկությունը։

39

* * *

Յիս անմառունչ կընում եմ ճանապարհ
Իմ հեգհեղուկ բաղդին տրված ինձ խոնարհ.
Բայց այն որից ելար վողջունքըս հրաժեշտի
Իմ մանկութեյան քաղցր որևրին յես տըվի,
Յերբ յես թռչունը ճաշակեցի պիտութեյան,
Յերբ խաղալիք չարձա մարդկանց նենդութեյան,—
Յես ասացի՝ աշխարհ, քո վողջ պարգևներ
Խաբկյութեյուն, դառարկ, անմիա ցընորք եր։

Յես չըկամիմ վոչ քո փառքը, պիտութեյուն,
Վոչ քո վոսկին և վոչ խարդախ սառութեյուն.
Չըկամիմ քո արյանը գնած սարպենին,
Վոչ կարճատև կուսի սիրո վարդենին.
Ա՛յն մեղրը վոր դու վոսկեզոծ բաժակով
Տալիս ես ինձ ժպտածիծաղ չերևսով,
Միայն ծածուկ մահադեղ և կործանողղ,
Ծաղկափունջըդ միայն փուշ և ծակոտող...

Աշխարհ, յես քո կը հավատամ վայելքին,
Կը հավատամ յերջանկութեյան մարդկային,
Յերբ վոր ձգես դու կեղծավոր այդ դիմակդ,
Յերբ վողջունես մի նոր կյանքի արեգակդ,
Յերբ անխընա արդարութեյան խարազան
Քո սրտիցը խըլե սերմը չարութեյան
Յեվ ականջըդ բանա լըսել յերկնային
Անճահ սիրո սաւրը բարբառը անուշիկին։

41 * *

Յեվ այս գարուն կանցնի շուտով,
կը թառամի մանուշակ,
կը ծածկվի սև՛ վարագուրով
Յերկնից դեմքը անուշակ։

Միայն սերը ձիշտ կը մընա
իմ սրտումը կենդանի.
վոչինչ սիրող սրտի վերա
Բռնանալու ուժ չունի։

886

42

* * *

Յերբ յես նստած եմ տխուր և ինչիկ
Պատանիների անհոգ շրջանում,
Վոր քեզ շուրջ պատած, իմ ընկերը քաղցրիկ,
Հաճոյանալ են այնպես ցանկանում,
Վահ, դու մի կարծիր, թե այն ձեծամիտ
Հպարտությունն և շրթունքըս կապում
Յեվ ուրախության բաղդավոր ժպիտ
Ամպամած դեմքիցս հեռու չեն պահում։

Յես լուռ եմ լինում. բայց թե քո աչեր
Հոգուս խորքերը թափ անցանելին,
Դու կը տեսնեյիր թե ինչ զգացմունքներ
Այնտեղ բորբոքված, կուտակված եյին։
Յես չեմ կամենում խղուր վրդովել
Իմ վառ, յերջանիկ հոգեմտալություն,
Յես կամիմ լռիկ սրտումըս պահել
Սիրուն պատկերիդ անվերջ քաղցրություն։

Ահա հասնում և և խորին դիշեր.
Դու ճաշակում ես հանգիստ անխռով,
Իսկ յես քուն չունիմ և յերկար ժամեր
Անցնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով.
Պատկերըդ առաջիցս ել չի հեռանում,—
Խորին դիշերով ազոթքի համար,
Թունքս մոռացած, յես վեր եմ կենում,
Որհնում եմ, հոգյակ, որերըդ պայծառ։

43

* * *

Յերբ յես տեսնում եմ, որ ունայնասէր
Աշխարհը այսօր պսակում է փառքով
Նորան, որին ինքն հետո պիտ ծաղրիր
Նախանձով վառված, մի աղքատ հոգով,—
Յես կամենում եմ այն՝ կեղծ յերեսին
Տալ ճշմարտութեան սուրբ խոսքն անկաշառ,
Իբր ահեղ փոթի վորոտ՝ ականջին
Հասցնել մի մեծ, սոսկալի բարբառ,—
Հոգ նէյիր, ով մարդ, հոգ գառնաս դարձյալ
Յեվ յեթե մի յես բոլորիս վախճան
Անվերջ յերազով ապրիլ և հուսալ
Միայն մի թիզ հող վերջին հանգստյան,
Ի՞նչն է մեզ սոխպում անմիտ պարծանքով
Յուցամոլութեյան, մանկան արժանի,
Փառքի պսակը հյուսել մեր ձեռքով,
Վոր մեր վոտնկրին կոխան պիտ լինի։
Մենք կը տապալենք այն վեհ բարձրութեյուն,
Վոր մենք ենք կանգնում իբրև աշտարակ,
Յեվ խրոխտ շենքի հոյակապութեյուն
Կը մնա մեզ իբրև ախո՛ր ավերակ...

44

* * *

Ինչպես վտակ յես կը թափեմ
Աչքերիցըս արտասուքը,
Յեվ նոցանից կը լուացընեմ
Ես քեզ համար վառ ծաղկունք։

Յեվ հընազանդ իմ վիճակին
Յես կը տանջվիմ հանապազ,
Լինէ մկայն, ընկե՛ր անգին,
Յերջանկութեյունդ անպակաս։

Գիտեմ, վոր ինձ չես մոռանա,
Յերբ յես իջնեմ գերեզմանն,
Յեվ կը հիշես, վոր յես մեռա
Քեզ մաերիմ, սիրակա՛ն։

45

* * *

Յերբ մառաղ մուսաս ժպիտն յերեսին
Առաջին անգամ ինձ յերևեցավ,
Նա գեղեցկութեյան, սիրո պատկերին
Յերկրպագելու ինձ պատվիր տվավ։

Յես ուսա յերգել և յերգում եմ
Անվարժ տողերով հրաշքները գարնան,
Նազելի վիշար կուսական սրտի,
Անուշ վայելքները սիրո արբեցման։

Անցան տարիներ, և նորքին մի ձայն
Մի նոր հուր վառեց իմ հուղված հոգուն,
Յերբ վերստ ինչպես կապար ծանրացան
Կյանքի պիտույքը, ձարպկան չարութեյուն։

Սիրո զվարճութեյան մեղեդիների
Ժամանակը չէ, ով անհոգ յերգիչ։
Դուրս յեկ ասպարեզ մոհաուիթ կռվի,
Թունով թաթախված ձա կարող գրիչ։

Անխնա դատի՛ր յեղեռնագործին,
Մեծատան յերեսն այրի՛ր ամոթով,
Մեր բոլոր ախտեր ցույց տո՛ւր աշխարհին,
Այլասերակութեյան անարգ պատկով։

Թող վոր չարութեյուն ասբասիլ տեսած
Աւժանի պատուէն ըստոր գործերի,
Յեվ կեղծավորը ուժանիվ յեղած
Թող յուր վոսկիզօծ կինամիը հանի...

46

* * *

Լինում է րոպե, կես անիծում եմ
Յեվ իմ վիճակը և ամբողջ աշխարհն,
Յերջանիկ մի որ, կես մտածում եմ,
Բաղդը չի բանա յերբեք ինձ համար։

Ջե՞ կարող եյի և կես բերա ուժով
Կամ մի սառըաքարշ շողոքորթությամբ
Հաշտվել մարդկանց հետ, և պատած վոսկով
Հոչակ ըստանալ պատվավոր անվամբ...

Բայց վո՛չ. չըկամիմ գըլուխս խոնարհել
Սրյունով կանգնած մեծափայլ կուռքին,
Յեվ վոչ կարող և իմ սիրտը գրավել
Շլացնող փառքի վիշտյուս դափնին։

Իմ հոգու ձայնին կես հավատում եմ,
Յեվ աղքատության ու յերդի համար
Կես իմ գըլուշակին ահա պարզում եմ—
Յեվ այսուհետև հավատս պայծա՛ռ։

886

47

* * *

Զքնա՛ղ մանուկ, հրեշտա՛կ գեմքով,
վար մի գրախտ յերկնային
Աստանում ես հուր աչերով
Յեվ այդ ժպտալը հնշտագին,

Թուլլ տո՛ւր կուրծքիդ շուշանապեղ
Հոգնած գլուխըս հանդչէի,
Յեվ մեռաքսի մաղիը շքեղ
Լինէին նորան հովանի։

Ճաշակել եմ վարուց արբենն
Յես թեւչնն և մեղրը սիրո,
Բայց ինձ հանդիստ գեռ տըված չնն
Աբցուննք, ժպիտն իմ հուսո։

Դու այժմ, իբրև նոր արշալոյս,
Ինձ նոր լապտէր ես պըշակում.
Սիրո՛ւն մանուկ, ցաված հոգուս
Արդյոք դու էլ չես խաբուե։



Հ. Հովհաննիսյանը Փարիզում
1889

Հրատարակվում է առաջին անգամ
Սեխախանության ՀԽՍՀ Գրական թանգարանից

48 **26 ԱՊՐԻԼԻ**

Անպտուղ կյանքիս քսաներկու գարուն
Անցան գընացին, վորպես մի վայրկյան...
Ինչո՞ւ ապրեցա, ինչո՞ւ չեմ ապրում—
Մի թաքըս չե կարող տալ ինձ պատասխան։

Յեվ իմ մանկության սերը ցնորամիտ,
Յեվ անկեղծ սրտի վոգևորություն,
Յեվ քաղցր աբստասուք, և վոսկե ժպիտ,—
Ա՜խ, ո՛ւր ես. ո՛ւր և ձեր անուշություն։

Գիտությունն ինչպես մի թուր դանդաղկոտ
Անընկատելի վարակից հոգիս,
Ինչպես ցուրտ ձմեռ մի թաքըս կասկածոտ
Բաղեց, խորտակից ծաղիկը կյանքիս...

Իրըև յերերուն յեղեգն առվակում,
Տեսնում եմ պատկերս և սարսափում եմ.
Լսում եմ մարդկանց յերգերը արտում,
Անմի՛տ ու զառմոիկ, և տաղտկանում եմ...

Յեվ յերջանկությունս թև անդարձ կորավ,
Փշրված ինչպես տխուր փըլատակ,
Թև անհոգ տավղի ձայնը մարեցավ,
Յեվ մընաց ինձ լոկ նորա հիշատակ,

Գոնե սրտիցըս հիմա չհեռանար
Նոր ցնորքներիս տիպար սիրելի,
Տանջված հոգուս մեջ կենդանի մընար
Բուռըն փոթորիկ ադնիվ կըրքերի։

886

49

* * *

Դու արտասվում ես և չես ամաչում
Այդ անկեղծ սրտի արտասուքներից,
Յեվ գիտես, վոր գուբ հանգիստ ես խնդրում
Հուսահատության տառապանքներից։

Ա՜խ, վոՒր չար ձեռքը քնքուշ թշերիդ
Վաղաժամ քաղեց վարդը կենսաբույր,
Թաղցր շրթունքիդ խըլեց վառ ժպիտ,
Ճակատիդ դըրեց թախիծը տխուր։

Այդ վանդակի մեջ դու վոսկեզոծած,
Սոխակի նըման մոռացած յերգեր
Հալվում, մաշվում ես, թևերըդ խուզած,
Ջուհիս, սիրելի՛, արտացավ ընկեր։

Հուսա դու, խեղճո՛ւկ, հուսա. թող լինի
Վշաի հրեշտակը քեզ հովանավոր.
Ո՞վ գիտե, գուցե պայծառ վիճակի
Ոըը դեռ ծագի և քեզ փառավոր...

50

* * *

Ահա քեզ ձեռքս, ընկե՛ր թանգագին,
Սեղմի՛ր դու նորան անվախ, անհատած—
Բարեկամ և նա լքյալ թշվառին,
փորձուբեյան բովում կրշտերով ծածկված,

Թող ծանր վշտից անցած որերի
Հանգչի քո սիրտը գոնե մի վայրկյան—
Սրի՛ իմ դիրկը, ընկե՛ր սիրելի,
Ձեռ իմ ջերմ կուրծքին որթևի նորան.

Ձեվ յավակուբյան այլող արցունքով
Ծանչանքիդ այդ կուռ շղթան կոծանեմ,
Դուցե և սիրտ դյուբյական շողով
Մի րոպե յես քեզ հանգիստ պարգևեմ...

31

* * *

Թող այսօր մութն և քեզ համար արև,
Ջաքսամանդ հագիս, թող անվերջ ցավով
Բաղդն իբրև խորթ մայր բերի քո առջև
Կյանքի բաժակը, լի դառն թունով,—

Կը դա և մի որ քո վառ արշալույս,
Դու կը մոռանաս անցյալի ցավերը,
Յաղող վիճակի կը ցոլա քաղցր հույս,
Վայելվորության կհոսին արցունքները...

886

52

* * *

Յես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում
Տալ սիրտըս, հոգյա՛կ, քեզ ընտավ պերիկ—
Մի անկյուն նորա անմեկին խորքում
Մ՚էլ սիրո համար չես կամիմ պահել։

Չերմոցում սընած դու վարդ նազելի,
Արցունքի մի շիթ չե կաթել թշիդ,
կյանքի փոթորիկն անվե՛րջ, անդադար,
Դեռ քո շրթունքիդ չե խըլել ժպիտ։

Յեվ անհոգ խաղով, ինչպես թիթեռնակ,
Ճրագի բոցին դու մոտ ես վազում,
Յեվ չես հասկանում թե համաճարակ
Հրդեհն է այդպես քեզ հրապուրում...

Տես՝ թշվառության հազարալեզու
Բոցը բորբոքված խնդրում է զոհեր,
Տե՛ս՝ այստեղ խառնած իրար մոտ աճյուն
Վերջին են սպասում քանի՛ անբաղդներ...

Յեվ դուցա՛ համար չես սեր եմ պահում,
Այլ ճակատագրի խորթ վորդուց համար,
Վորոնց առաջին դուռը չե բանում
Մխիթարության՝ քարասիրտ աշխարհ...

Տո՛ւր ինձ, սիրելիս, և քո սերն անբիծ
Այս հառաչանքի հովիտը տանիմ—
Գուցե արցունքը ցամաք աչերիս,
Մաշված ճակատիս թախիծը խլեմ։

886

53

* * *

Յերբ նա դեռ նոր եր լույս աշխարհ տեսել,—
Դառն աշխատութիյան, կարիքի զավակ—
Ամանք ստացավ սիրել և գործել,
Ճակատին ծանրը խաչի նշանակ։

Յեվ նա մեծացավ, և կյանքը մտավ,
Յեվ հավատարիմ մնաց յուր խաչին.
Հանդուգն լուղորդ՝ ալյաց մեջ ընկավ,
Մրցում եր, պիտում վրկութիյան ափին,

Աներկիւղ ձաքով, հավատով հզով
Բարդում եր յուր խաչի քաղցրութիյուն,
Ինչպես խարազան յերկաթի խոսքով
Նա հալածում եր շահ ու բանութիյուն,

Բայց ինչ. չարանենգ քուրմերը ուժի
Մահաթույն լեղի արբուցին նորան,
Կարմիր յերկաթով նշանը խաչի
Ջնջեցին պայծառ ճակատի վերան...

Յեվ հավատարիմ յուր կոչման մեռավ՝
Սուրբ ճշմարտութիյան անբիծ նահատակ,
Իսկ սիրտ նշանն անեժան գրոշմվեցավ
Շատերի սրտում մեկի փոխանակ...

54

* * *

«Սովորեցե՛ք բարութիւն անել, վորոնեցեք իրավունք, ուղղութիւն ցուցե՛ք զրկվածին, վորբի դատը տեսեք, վորբևայրու դատը պաշտպանեցեք».
Մարգար. Ցեսայա, Ա. 17.

Մի թողնիր, յերգիչ, քնարըդ կախած,
վոր նորան ժանգով տարիքը պատեն,
վոսկի լարերին դու վոգեվորված
Զարկի՛ր մատներով, թող դարձյալ հնչեն։

Թող հնչեն նորից հին յերգը անմահ
Յեվ վառեն սիրով սրտերը մարդկան,
Թող նորա նորից որհներգեն անահ
Գործերը բարվո և կարեկցութեան։

Ինչպես չե կարող ձմեռն արգիլել
Գալուստը շքեղ ծաղկաբույր գարնան,
Նույնպես ճշմարիտ խոսքը խափանել
Չե կարող ձայնը անթիտ չարութեան։

55

* * *

Հասիր, սիրելիս, քեր վոսկի քընար,
Ցես կամենում եմ ցրվել իմ թախծ,
Տեսնել եմ ուզում իմ կյանքն ել պայծառ
Յեվ վիշտը վանել հեռու իմ սրտից։

Բավ և ինչ լացի, հերիք արտասուք.
Սրցուհնքի տեղակ թող աչքերս բղխեն
Վառ ցողի շիթեր, քաղցր ինչպես կնդրուկ,
Թող կյանք տան ծարող իմ անհուշ սրտին։

Սուտ և, կարող եմ ես գարձյալ սիրել
Զոհելով բոլորն ինչ ունի հոգիս,
Զի, դեռ կարող եմ ես անուշ յերգել
Զքնաղ պատիվերը իմ սիրականիս։

Կուզես ինձ առիր, ահ իմ թագուհի,
Կուզես ծիծաղիր զպացմունքիս վերան.
Հավիտյան մընալ քո ձեռին գերի—
Զրկա այլ վիճակ ինձ յերջանկության։

56

ԱՇՈՒՂ

Ասի՝ աշուղ, ու՛ռ չունդուրըդ, մեզ բան ասա սրտալի.
Կարոտ ենք քու անուշ ձենին, մի բան ասա սրտալի.
Սրտի խոսք ենք ուզում քեզնից, վոր վեր հանի մեր հոգին—
Առ՛ չունդուրըդ, դարձո՛ւ աշուղ, մեզ բան ասա սրտալի։

Գիտենք, վոր դու միշտ տանջվում ես հազար ու մի ցավերով,
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.
Զես լվանա եդ խոցերը արտասուքի ծովերով...
Առ՛ չունդուրըդ, ցավո՛տ աշուղ, մեզ բան ասա վշտալի։

Լուսը մընալով մեր վերքերին դու չես անի դեղ դարման.
Ալաբաշխարհք գիտի՝ չըկա մեր դարդերին չափ, սահման,
Մոնջուելյունն ել նըշան հո չի՞ մի գովելի հատկութեյան—
Ա՛ռ չունդուրըդ, մեզ բան ասա, թող խոսքըդ ըլնի ցավալի։

Եղվես խոսքեր շատ ենք լսել, ել կլըսենք անտըրտունջ,
Մեր չխոսկան ընկերուցն ե՝ մըտացել ենք անտերունջ.
Լավ և ազատ լաց ընկիլը, քանց դարդ տանիլն անժուռնչ,
Ասա՝ լսենք, ինչ անենք, վոր խոսքըդ կըլնի վողբալի։

Տհանում ես, վոր մենք թմրած ենք, քունն անուշ և մեզ թըվում.
Ե՞ը ես դու ել մեզ ըսկսիս ձաշող քընիցն հաղթըվում.
Առ՛ չունդուրըդ, տուր լարերին, կըրակ վառիր մեր սրտում,
Մեզ տանիս նոր շունչ տվող մի բան ասա սրտալի։

57

ՅԵՐԳՑԻՆ

Թող յերբեք հնչի նվերգաշնակ
Ազատ սրտի վառ դեգմուհք,
Թող զարթեցնեն համարճակ
Մեր քնեցած ըղգացմունք։

Վառիր դու ձեր սրտերում
Հուրը ազնիվ կրքերի—
Յերկրպագու յենք կանգնում
Ճշմարտութեյան պատկերի։

58

* * *

Սիրտն դլուխըդ կուրծքիս խոնարհած
Դու լալիս եյիր և ինձ մրմնջում.
«Անգութ, հերիք չէ, կես այսպես տանջված—
Անսահման ախս դու չես նկատում»։
Ցավ լալիս եյիր այնպես կաթոգին,
Գոհար շիթերը քո արտասուքի
Ինչպես հուր՝ ջարդված սիրտըս այրեցին,
Թեպետ յերազ եր այս, իմ նազելի։

Իսկ կես անդադար, վշտիցըս խեղդված,
Վազրում եմ ախս—դու չես նկատում.
Իմ ախտը յերգը քո անվամբ հյուսված
Ցրտացած սիրտըդ ըընդալ չէ շարժում։
Ա՜խ, ինչ յերջանիկ կես կը լինեյի,
Ցնծեի յերազում թախած արցունքիդ
Դոնե կերկու շիթ իրավ տեսնեյի,
Իմ վշտի հրեշտակ, այդ վառ աչերիդ…

887

59

* * *

Ամենայն անգամ, երբ թևիևամիա
Դիպչում է մուսաս սրտիս լարերին,
Քնքուշ մատներով խլում է ժըպիտ
Ցավ գընում թախիծն իմ անհոգ ճակտին,—
Անցած պատկերնեը խուռըն յերամով
Լցվում են սիրտըս, զարթնում և հոգիս,
Ցավ մխաքըս հնոու թռչում և սիրով
Նազելի աշխարհն մանուկ օրերիս։

Ցավ կամենում եմ սեր յերգել միայն
Ցավ քաղցրությունը մաքուր հասակի,
Անուշ ժամերը անմեղ խնդության,
կենդանի հրճվանք կուսական սրտի։
Բայց միշտ ակամա լարերը բևկրևկ
Տխուր են հնչում արհներգը սիրո,
Ել չե յերևում ինձ սերը յերկնիկ
Իբրև վառ գեղմունք յերջանիկ հոգվո։

Ցավ միշտ լսվում է մի ձայն լարերից,
Վորպես հառաչանք պաղատագին սրտի,
Ել չե հեռանում նա իմ ականջից,
Այդ ձայնն անմեկին մի խորին վշտի.
«Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավիր,
Ուր լսվում է լոկ հառաչք լալագին,
Քո քընարիցը թող ուրախ ձայներ,
Քո քընարիցը թող ուրախ չըլինի»...
Ո՛վ թշվառ յերդիչ, քնավ չըլսվին։

60

* * *

Դու չըկամիս, ով կուռս, լինել
Իմ տանջանքին ճանապիկ,
Դու չըկամիս հըրաժարվել
Այդ քո անհոգ վիճակից։

Բայց թե սիրտըս դու տեսնեիր,
Ճանաչելիր իմ հոգին,
Ինչ և վիշտը—կիմանայիր,
Կը սիրեիր դու յերջին։

Շատ գոհարներ վառ, աննըմանը,
Ալիքներուն են թաղված,
Շատ զգացմունք, սե՛ր անսահման
Սրտիս խորքում են պահված։

61

* * *

Ասում են. «Պոյնա, մենք չենք կամենում
Արտասուք տեսնել, լսել հառաչանք.
Ինչ ես քո այրող վիշտը մեզ պատմում,
Ինչ ես դու վողբում քո աչվերդ տանջանք.
Մենք միայն վայելք ուզում ենք կյանքից,
Հրճվանք, խնդություն և ուրախ տոներ.
Մեզ անհոգ ժամեր յերգի՛ր վոգևից,
Կյանքի խնջույքը, պինով բաժակներ»...

Ցավ դու լսում ես անմիտ ցնծության
Ճիչերի՝ արձակած անդուռն բերանից,
Ցավ չես սպասում մի ապնիվ ղպացման,
Մի հասակ սիրո նշույլ զոցանից...
Տեսնում ես շուրջդ կարիք և զրկանք
Ցավ ըտերկության ճնշող ղեթանիք.
Ցեղաչյրքըդ, կյանքից չհասած գլվանք,
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցավեր։

Չես կարողանում քնքուշ մաոներով,
Վոգևորության յերկանիկ ժպտում,
Դիպչել լարերին, թե հյու քնարով
Ցերգելու լինես սի անհոգ խնդում։
Ցավ կատաղում ես, վոր քո զգացմունքին,
Վչնչ հոգուդ չկա մի խոսք համակիր,

Հուսահատում ես, վոր քո քարոզին
Մարգարեական՝ չունես ունկնդիր։

Բայց հանգիստ մնա, կը գա ժամանակ—
Կանցնեւ խավարը մոլեռանդության,
Կը գա նոր սերունդ, զգալու ընդունակ,
Լուսածին վորդիք սուրբ ազատության.
Ցեվ արքայական քո բայց ճակատին
Հպարտ սարսինին կը փայլի փառքով,
Ցեվ քո թունալից թվող տողերին
Մարգարիտ կշարեն սիրտ արցունքով...

887

62

* * *

Քեզ մոտեցա սեր հուսալով,
Պայծառ դեմքիդ նայեցի,
Ցես—խաւարած վշտի ամպով,
Դու—արշալոյս նազելի,

Ցես ասացի. «Ինձ քոյր լեղիր,
Ցեղիը ընկեր յաւակից,
Սիրես, յերգես դու ընդունիր
Նվեր տանջված մի սրտից»։

Բայց դու, զավակ փարթամութեան,
Զը հասկացար յերկիս աղքատ.
Դու—նույն անհոգ թռչնակ գարնանի,
Ցես նույն յերգիչն հուսահատ...

63

* * *

Մընանք բարով, սրև, գարուն
Յեվ խնկալուչը ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.

Մընանք բարով, համբույր և սեր,
Դեմքով հրեշտակ կույս չքնաղ,
Վայելչուհյան պայծառ ժամեր,
Ջաղցը ժպիտ, կյանք մատաղ...


Աղքատուհյուն յես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Յես քընարըս նըվիրեցի
Վիշտ յերգելու և տանջանք։

64

* * *

Դու ծագումդ ես, ինչպես վարդը հարավի,
Բեզ փարում է առավոտյան շողն վոսկի,
Յեվ ցողում է ծագկանց բուլբը քո կուրծքին
Զեփյուռն անուշ՝ գուրգուրալով հնչապին.
Յեվ աստղերը շողշողալով ճակատիդ
Բեզ ժպտում են պիշերները խնդամիտ.
Թեթեվաքայլ յեղնիկի պես նազ ասլով,
Հավնցնում ես ճոտող սրտեր աչերով։
Բայց չգիտես դու քո ուժը, սիրելի,
Մի ամիտ ես, անփույթ, իրրև ազատիկ.
Ա՛յդպես, մաշող սիրո բուռըն փոթորիկ
Դեռ չե հուզել մանուկ կուրծքըդ դեղնցիկ...

Յեվ իմ միակ ցանկությունն ե, վոր անբիծ
Սիրտդ զգար սիրո հրճվանք ու թախիծ,
Յեվ գուրգուրանքն հասկանայիր զեփյուռի,
Յեվ սիրտդ թունդ զարկել տար բուլբը վարդի,
Յեվ ըզգայիր, վոր բացի խաղն, անհոգ էյանք,
Կա ակամա արցունք, և վիշտ, և տանջանք։



Հ. Հովհաննիսյանի «Բանասեղծություններ» անդրանիկ ժողովածույի իննիագիր անվանաթերթը Պետերբուրգի գեմմենական կոմիտեյի մակագրությամբ։

Հրատարակվում է առաջին անգամ
Ս. Եփափանության ՀԽՍՀ Գրականության թանգարանի

65

* * *

Միայն այն կապրի, որը միշտ և անմահ—
Սուրբ գեղեցկութիւն և սուրբ գաղափար.
Վեհ միտքը ազատ կենդանի կըմնա
Ու սերն անձնազոհ՝ խեղճ յեղբոր համար...

887

66

* * *

Արագն եկավ լափին տալով,
Ծեռ քարերին, ափին տալով.
Վ՛ախտիզ խոզնի չես իմ գարդը,
Ջոր գլուխս տափին տալով։

Ա՛յ իմ Արաղ, Ջուրըդ վարար,
Սիրուն յարիս չարաք անաք.
Ձես չըհասա իմ մուրազին,—
Արնիզ, յարար կարոտս առար։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարոտ ճտացի չես իմ յարին.
Ատոծ սիրես, հրվաձ սրտիս
Ջուզար բերես եկող տարին։

Գիշերն անքուն վիր կըգրնեմ,
Աբրասուռնքս գետ կըշինեմ.
Արնիզ, ծեզը Ջրիդ չառած՝
Իմ սև գարդը քեզ կը բերեմ։

Կասես՝ շողքը քարին ընկավ,
Կըրակըն իմ սրտին ընկավ.
Կամար ունքիդ, Թուխ աչքիդը
Յաճե իմ Ջիվան Ջանին ընկավ։

Արագն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Վաթսեղ թաղեմ չես իմ դարդը,
Ջոր գլուխս ափին տալով...

887

67

* * *

Հրաշալի գիշեր... խաղաղ քուն մտած
Հանգչում է բնութիւն քնքուշ յիրագով.
Պայծառ յերկնքում լուսինը վառած
Նայում է յերկրին սիրահար աչքով.

Այսպիսի գիշեր այրված սրտակին
Յուր բույրն անուշիկ վարդն է պարգևում,
Այսպիսի գիշեր մատաղահաս յերջկին
Առաջին սիրո շունչն է խառնում...

Յեվ սիրտս մտնում մի այսպես գիշեր
Յես զոհ լերեցի նենգավոր կուսին.
Եվ այնուհետև անցան տարիներ,
Հանգիստ չտեսավ իմ տանջված հոգին.

Յեվ հիմա մուտս այսպիսի գիշեր
Յերևում է ինձ փուշ պսակ գլխին,
Յեվ յերդում եմ յես քո կուռ շղթաներ,
Սարսուռ հայրենիք, իմ ծնյր տիրապին...

68

* * *

Ինչպես քաղցր լերազ ուրիդ կանցնին,
Անդադրդ կըմաբի, ինչպես գիշերվան
Մի ձայն մեառնող, հոգուդ կըլսատեն
Ամպերը մռայլ դուր յերկրայութեյան.

Ինչպես մոլորված մենակ ուղևոր
Հանկարծ կըկանգնես և հարցուում կը ասես.
«Ա՛խ, դու ո՞ւր թռար, իմ որ փառավոր.
Բաղդ, ինչ ճանապարհ ինձ պիտի ցույց տաս»...

Յեվ նոր կըտեսնես, թե ինչպես անցան
Անապատդ, անմիտ քո կյանքի որերդ,
Անհետանալի ինչպես ծուխ գարձան
Վառ սրտիդ, մտքիդ բոլոր ցնորքները։

Յեվ ուշ կը տեսնես, թե քո առաջին
Վերչափ մեծ գոթծ կար արուեստյան գաշտում
Յեվ ինչպես գետին գըլորված կաղնին
Կը մընաս մենակ, հուսահատ, սրտում...

69

ՆԱՊՈՆԻՅ

Ընկեր իմ, յեղբայր, դու վաստակաբեկ յեղբա՛յր իմ
տանջված,
Ով վոր եվ լինես դու, մի վհատիր.
Թող հնձն թշվառ, անարդարութեյամբ, չարիքով լցված
Դառն արտասուքով վողողված յերկիր,
Թող վոր խորտակված վոտնակոխ լինի քո սուբբ իդեալ,
Թող անմեղների արյունն հորդանա,—
Հավատա՛, յեղբա՛յր, կըգա ժամանակ—կըկորչի Բաալ
Ցեվ նորից յերկիրն սեր կըսիրանա։

Վոչ շղթաների զաժան բևռ ատկ, վոչ փուշ պսակով
Ցեվ վոչ ծանր խաչ կորացած ուսին,—
Նա աշխարհ կըգա մի նոր զորութեյամբ և մի նոր
փառքով,
Բաղդի պայծառ ջահն անհոգպողդ ձեռքին,
Ցեվ եվ չի լինի աշխարհում արցունք, վոչ թշնամութեյուն,
Վոչ ճոռոմված շիրիմ և վոչ ըտրուկներ,
Վոչ կարատութեյուն, անլուս, մահառիթ սև կարատութեյուն.
Վոչ սուր, վոչ մահու խայտառակ պատներ։
Գիտեմ, իմ ընկեր, չե մի պահիր հույս, վոչ ցնորք
վաղանցիկ
Սիրո անճկալի գալուստը պայծառ.
Զորս կողմըդ նայի՛ր—չափազանց արդեն ճնշում և
չարիք,
Ցեվ խիտ և արդեն գիշերը խավար
Տառապանքներից աշխարհը կընկճի՛, և կըթուլանա
Նա անմիտ կռվից, արյան մեջ խեղդված,—
Ցեվ դեպի սերը, մեծ սերն անճնազոհ, աչքը կամբառնա,
Աչքը՝ վշտալի ապերասով լցված...

70 ՄՆԱՍ ԲԱՐԵՎ

(ՏԵՂԵԼՈՒԹԻՒՆ)

Պաղպաջուն առւիկ, սահ՛ր դեպի ծով,
Հանդարտ գըլորի՛ր ալիքըդ վճիտ.
Ել չեմ գալ յերբեք խըռոված հոգով
Յես այցելութեան սիրուն ափերիդ։

Սահ՛ր մարգերով և հովիտներով,
Թարձ՛ր, սիրելի՛, հորդառատ մի գետ.
Ել չես տեսնելու ինձ հուզված սրտով,—
Վո՜հ, մընաս բարև, ընկե՛ր իմ, հավետ։

Վերագ խոնարհած կվողբա ուռենին,
Կը լսվի այտեղ շրշյունը բարդու,
Մեղուն կը ճախրե քո կանաչ ափին.
Բայց դու ինձ յերբեք ել չես տեսնելու։

Վոսկեվառ շողեր գարնան արեվի
Ալիքներիդ հետ ուրախ կըխաղան,
Լուսինը քեզ հաշտ գուցե դեռ ժպտի,—
Բայց ել չես տեսնիլ դու ինձ հավիտյան։

887

71

* * *

Թևպետ խեղդված եմ կյես դաժան վշտից
Ցավ սիրտս մաշված անմխիթ հուսահրով,
Թևպետ մինչ այսօր խարված եմ կյանքից,
կարոտ տեսնելու մի անկեղծ դորով.
Թևպետ դառնությամբ հոգիս և լցված
Ցավ դանդաւոում եմ չար բաղդիս վիրա,
Այդ այս աշխարհում կյես միշտ հալածված՝
Ցավ վոչ մի սփոփանք ինձ համար չկա,—

Բայց դու մի հիշիր իմ դառն վիճակ,
Խաբիր ինձ դարձյալ շքեղ ցնորքով,
Թե դեռ ինձ համար գարնան արեգակ
կը ցոլա պայծառ, դոհար պսակով,
Թե արծաթափայլ ամոթխած լուսին
Գողտրիկ հայացքով դեռ ինձ կը ժպտի,
Թե ծով-ծով աչքեր անհման կուսին
Սիրտս անուշ տենչով դեռ հուզվեն պիտի...

72

ՊՈՅԵՏ

(Նադառնից)

Թող քո յերգում չեռա հուրը լարկուբյան,
Թող յերգդ ալըլ հոգի անկեղծ արցունքով,
Թող արձագանգ լինի աղնիվ ցանկուբյան,
Վոգևորե հայրենիքի սուրբ սիրուվ։
Նորա ամեն թող ձայնն առաջ մեզ կոչե,
Հուշ նեբշնչե անեզ մարտից ընկճվածին,
Անմահուբյամբ թող անկածին պսակե,
Նշավակե յերկչոտուբյանիր փախչողին։
Սուրբյան հետ և խավարի կռիվ մտած՝
Ճշմարտուբյան, լուսո համար մարտնչենք,—
Այն ժամանակ քո առաջին խոնարհած՝
«Դու պոյետ ես», քեզ հրճվանքով մենք կասենք։
Թող յերգդ հնչե, վորպես վսակ կարկաչուն,
Վոր սահում և մեզմ հորձանքով արծաթի,
Վորպես ազբյուր յեռան հուսներ, ցանկուբյուն,
Ցեվ ուժ լավի և մի ծիծաղ կենդանի։
Թող մոռացվինք մատաղ ձայներ լսելով,
Թռչնեք քեզ հետ յերազների այն աշխարհ,
Ուր չեն թափվում դառն արտասուք տանջանքով,
Ուր կա հանգիստ, դեղեցկուբյուն սիրավառ.
Զվարճանանք՝ թողած ամեն վիշտ, հոգսեր,
Ցեվ մանկուբյան անուրջներով մենք ապրենք,—
Ցեվ մենք կորհնենք այն ժամանակ քո գործեր,
«Դու պոյետ ես», քեզ հրճվանքով մենք կասենք։

73 ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշում եմ, սիրուն պիշեր եր գարնան.
Լուսին և աստղեր մեզ ժպտում էյին...
Մի զմայլեցուցիչ, նազելի զգացման
Անձնատուր յեղած՝ լուռ եր իմ հոգին.
Նոր սիրտը զարթած՝ յես սպասում էյի
Սիրո առաջին քնքուշ բերկրության,
Յեվ հուզվում էյի, և դողում էյի
Ամեն հրապուրքից վառ դեղեցկության։

Յեվ յես հիշում եմ—ձեռքս սեղմեցիր
Այն սիրուն պիշերն առաջին անգամ.
«Յես քոնն եմ,—գողարիկ ձայնով ասացիր,—
Ուխտում եմ, կյանքս ել քեզ պարգև յես տամ»։
Բո մատաղ ձայնիկն իմ հոգին այրեց.
Յես ճանաչեցի այն որն ինձ ասելած.
Դըրախտի նըվագ ականջիս հնչեց—
Սիրո հրեշտակն ե,—սիրտս ինձ ասաց։

Հիշում եմ— ախուր պիշեր եր աշնան.
Մենք նստած էյինք մենակ սենեկում.
Յեվ դու ինձ համար շունչ էյիր գարնան,
Թեև դուրսը ցուրտ՝ անձրև եր մաղում։
Այրվող շրթունքիս համբույրներ տալով
Շընչում էյիր դու ինձ վոգիդ.
«Մենք յերջանիկ ենք, հոգյակ, մեր սիրով
Ավելի քան թե անմահներն յերկնից»...

Ժամանակն անցավ, դու չերջանկացար.
Մենակ ինքնագի չես իմ վշտի հետ...
Տանջվող ընկերիդ դու շուտ մոռացար,
Յեվ իմ յերազները չքացան անհետ։
Ցեղանիդ սիրուն սեաչ շատերին,
Բայց ուրիշ մեկին սիրել չկարացի.
Սիրաբոս դատարկ է. անցած որերին
Յես «մընաս բարև» արդեն ասացի...

888

74 ՄԱՐԻԱ ՆԻԿՈԼԱՅԵՎՆԱ ԱԿԻՄՈՎԱՅԻՆ

Կուզեյի լինել կարկաչուն վտակ,
Վճիտ ալիքը զրահատ բուրմունքով,
Յեվ առավոտյանն, ինչպես յոդ հասակ,
Յերեսդ վոսոդել զոհար շիթերով։

Կուզեյի լինել սոսի հովասուն,
Համարձակ փուած կանաչ սաղարթ
Յեվ միշտ ընկյին այդ գեմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շրշյունով։

Կուզեյի լինել ծաղկոցում բույված
Քաղցրաբուրյար մի վարդ, յերկինքից արժանի,
Յեվ սիրո ժամին, խանդիցս աբրած,
Զարդարանք լինել կուրծքիդ գեղանի։

Յեվ շող գառնալով զարնան արևի՝
Կուզեյի պայծառ աչերուդդ վառվել,
Կամ ինչպես քնքուշ վոսկեվառ գոտի
Զքնաղ իրանիդ փաթաթվել, փարել։

Լուսափայլ ատաղիկ կուզեյի գառնալ,
Քաղցր մանկան պես ծիծաղն յերեսին,
Ինչպես ադամանդ շողշողել, յոլալ,
Ո՛վ իմ թագուհի, քո բաց ճակատին։

Կուզեի լինել լուսին ամոթխած,
Արծաթի վայլով մազերըդ շոյել,
Այտերըդ դրվել, սիրուց բորբոքված,
Դողդոջ շրթունքիդ համբուրըները ըմոշմել։

Կուզեի լինել սիրահար սոխակ
Ցեվ ձեռիդ վերի, վանդակում փակված,
Ականջիդ հնչել հրաշալի նըվագ,
Միայն որը ասել քո հոգուն զմայլված։

Ցեվ կախարդական տաճարում կանգնած
Կուզեի տեսնել ես քեզ Աննահիտ,
Ցեվ յերկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ վեղեցկուհյան անմահ տիպարիդ։

75 Ա. ՊԵՏԵՈՖՓԻՆ

Յեա դուբա եմ գալիս գաշտը ամայի –
Ձը կա մի ծապիկ, գարզարև նոլան.
Ձը կա և մի վոսա, վորիկ սոխակի
Մեղնդին հնչեր քնքուշ, քաղցրաձայն,
Խաֆար և պիշեր, յերկնակամարում
Ձև յոլում վոչ մի լուսավառ աստղիկ –
Ամպեկս ժամանակ, լռնչեա և լինում,
Վոր մխա եա ընկնում, նազելի ազջիկ:

Դու մխա եա ընկնում, և ամենայն բան
Փոխվում և այսանդ. պայծառ և պիշեր,
Յեվ ճանապարհիս բացված են վարդեր,
Յերգում և այնտեղ սոխակն անուշ.
Ամայի գաշտն և լյուբր ծապիկներով,
Յերկինքդն եվ վառ և վայլուն աստղերով:

76

ԿՅԱՆՔ

Վորպես մի անուրջ դու պիտի անցնես,
Լոկ ունայն տեղը հուզիլով արյուն.
Ամեն քաղցր լուձ դու պիտի տանես,
Անհոգ բերկրութիւն, և սեր, և ավյուն։

Մանուկ որևիցե քո հուսով ապրած,
Մենք քեզ ենք սպասում անձուկ կարոտով.
Բայց միշտ թռչում ես դու թևեր առած,
Յեվ մենք միշտ նուկնն ենք խորտակված սրտով։

Ջնչին վշտերով միշտ քո տառապանք՝
Արժանի ել չեն յերբեք վեհ հոգուս,
Վայելքըդ առ ժամ՝ միայն զառանցանք
Կարող են լինել տհաս պատանուս։

Տուր մշտականաչ հրաշագեղ գարնան
Վառ, յերանավետ, անանց յերազներ.
Թող մենք անձնատուր մի անհուն զգացման
Անվիշտ քուն լինինք որևիր, տաբիներ.

Կամ բաց մեզ մարտի ազատ ասպարեզ,
Անշղթա ձեռքով չարի հետ կռվենք—
Կամ անմահութեյան փառք պսակև մեզ,
Կամ ինչպես ճճի՝ վոտի տակ կորչենք...

77 ԴԱՇՏԻ ՎԱՐԴԸ

(Դյութեյից)

Փաքրիկ տղան մի վարդ ահասավ,
Սիրուն վարդը դաշտի միջին.
Ուրախ ուրախ շուտ մոտեցավ,
Որ լավ նայի սիրուն վարդին։
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Մանուկն ասաց. Քնդ կը քաղեմ,
Ա՜յ իմ վարդիկ դաշտի միջին։
Վարդիկն ասաց. Փշեր ունեմ,
Դու ձեռ մի տալ՝ կարմիր վարդին
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Զար յերեխան վարդը քաղեց,
Սիրուն վարդը դաշտի միջին.
Վարդը նորան խիստ ծակծկեց,
Բայց և գերի ձընաց ձեռին։
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

78

* * *

Դու յերևեցար, ինչպես վառ պարնան
Լուսաշող այգի նշույլ վոսկեթույր.
Դու յերևեցար — ժպիտդ անհման
Բաղցր ևր վերթ սիրո առաջին համբույր։

Ծաղկոցում լացվող քեզ վարդ կարծեցի,
Դըրախտի վայելք տեսա քո աչքում...
Ա՛խ, այդ աչերիդ յես զոհ բերեցի
Յեվ անհոգ վիճակ և սրտիս խնդում։

Յեվ յեթե դու ել խաբում ես, ով կույս,
Սեր չե խոստանում հայացքդ էքնաղ,
Թե այս անգամ ել ուշանչն և իմ հույս,—
Դարձյալ պիտ սրհնեմ հաստկըդ մատաղ.

Պիտ սրհնեմ յես այն, թեպետ կարճատև,
Բայց վեհ, հոգեղմայլ երջվանքի համար,
Վոր հոգուս բերիր դու, ինչպես արև,
Ինչպես խնկաբույր մայիս կենարար։

79

* * *

Արդ, իմ հոգյակ, իմ գիրկը արի,
Կախարդիր դու ինձ լացոտ աչերով.
Անուշ պատրանքով անցնի որ, տարի—
Ցեխ չը հագնամ քո համբուրներով։

Գըլուխըս կուրծքիդ՝ վառ աչքիդ նայեմ,
Թող ինձ նախանձեն անմահներն յիրենից.
Մի ժպտիդ համար յես կ'երաժարվեմ
Առանց զղջալու բոլոր աշխարհից։

Վա՛չ փառքը նորա, վա՛չ անարգ վոսկին
Գրկախառնութեանդ և վոչ մի վայրկյան
Յերբեք չեն արժել, հոգյակ իմ անգին։

Արի, կախարդիր, թեև վաղանցիկ,
Բայց քաղցր յերազով վոչնորութեան,
Վա՛հ, դու իմ ամենուկ գշխո՛ դեղեցիկ։

888

80

* * *

Ճնշմամբ եկի բուբասանդում,
Աղավոտ եր մայիսյան,—
Ինդուժ եկի, զվարճանում,
Ուրախակից ընուքյան։

Ինհոգ խաղով չես մոռեցա
Քնքուշ բացված ալ վարդին,
Անուշ հոտիկ չկշտացա,
Զմայլեցա ալ վարդին։

Մեկ ել տեսա՝ մատաղ կուրծքին
Զազիր վորդն եր բուն դրել.—
Վաչ նազելի իմ ալ վարդին,
Կյանքի թևդն եր կտրվել

888

81

* * *

Անցիր, ահ՛ ամպ, դու իմ սրտից.
Հացվիր, յերկինք կապուտակ.
Տխուր, խավար թռչխալի մէջից
Յոլն, գարնան արևգնկի:

Թող պատառվի այս ցուրտ ձմրան
Սգո հանդերձ տաղտկալի,
Յեվ շողշողա մանուկ բնութեան
Վառկե ժպիտ ցանկալի:

Յեվ բերկրութեան արտասուքներ
Այս լեռներից թող հոսեն.
Թարմ կանաչին ջինջ առվակներ
Բազուկ ավետիք թող խոսեն,

Թե մայր յերկիրն աղատվեցավ
Ձուռ կուռ, ճնշող կապանքից.
Նոր ցնծութեան յերգ լսվեցավ
Հեք արտուտի բերանից...

888

82

* * *

Ո՛վ իմ խղճուկ կյանք, խաունուրդ սոսկալի
Մանուկ հավատո, չար յերկբայությյան,
Ախուշ պատրանաց, խոկմանց վշտալի,
Յեվ հատակ սիրո, և՛ առեւտրության.
Թաղալիք ես դու նենգավոր բաղդի,
Հոդմաւոր նավակ ալեծուփ ծովում,
Անհանգիստ թռչնակ մի վտարանդի,
Պարզամիտ տղա փորձության բովում...

Վորպես խոովահույզ լեռնային վտակ
Գլորվում ես առաջ արագ, անդադար.
Ալիքդ անհամբեր քերելով հատակ՝
Վոլորում են, իրրև պանդուխտ վշտահար.
Թեզ չեն կանգնեցնում քո դալար ափեր,
Վոր սիրով գրկած սահանքդ ալեկոծ,
Անուշ հանգստյան կարդում են հրավեր,
Կանչում են զարնան սիրուն ծաղկանց ծոց.

Յեվ յես կանգնած եմ ահա բընության
Հրաշալյաց առաջ, մոլորված մաքով.
Ջե՛, ինձ համար չեն այս գեղեցկության
Բոլոր հրապույրները իրենց պատրանքով...
Հոգիս լի յավով՝ նայում եմ միայն
Թե ուր են թռչում սրընթաց ալիք,
Յեվ գիմ պիտի տաճն ինձ մի պատսպարան
Սրընացող կյանքիս կոհակները գալիք.

83

* * *

Կար մի ժամանակ, լեբազում եյի—
Թե պիտի գանեմ անգուլ վաստակով
Ցես հանդիստ, վորին կարոտում եյի
Տանջված, վշտաբեկ, անհուն փափաղով։

Անցան տարիներ. չկա վայելքի
Նախկին բոցավառ անուշ յանկությունն,
Չկա սրտառուչ հրապուրյքը ցնորքի,
Վորով միշտ քաղցր և ծաղիկ մանկությունն։

Սիրտս դատարկ ե, վո՛չ կյանքի հոգսեր,
Վո՛չ աշխատություն չեն կարող ինձ տալ
Այն իմ կորուսած վոսկի լերազները,
Մատաղ որերիս սիրուն լղհալ։

Ցեվ կյանքը անա մի վայրի անտառ,
Ուր յես մոլորված քայլերս եմ ուղղում,
Առանց տեսնելու մի նշուլ պայծառ,
Ուր միայնությունս եմ միայն վողրում։

Իբրև մի նավորդ ալյաց լերևսին
Գընում եմ անհուս, վշտերիս ընկճված...
Ցեվ պիտի հասնի՞մ մի որ վարոսին,
Կյանքի կատաղի հոսանքիս վերկված։

84 ԱՆՀՈՒՆԸ

(Լեոպարդիից)

Սիրել եմ միշտ այս բլրակ
Յեվ այս տունկեր, վոր իմ աչքից
Խլում են հեռու կամարն յերկնից.
Յերբ նայում եմ նստած մենակ
Այս ամենին, յես այն հեռուն
Եմ յերազում, ուր լռութիւն
Ու քաղցր հանգիստ սպասում են ինձ,
Յեվ անկիւզուղ, և անթափիծ
Բայց յերբ քամուց տերևների
Շրշյունն ե ինձ մեկ էլ հասնում,
Այն լռութիւնն անխզելի
Մտքիս մեջ ե պատկերանում,
Անհունի մեջ յես յես խորասուզ
Դարերն այնժամ բերում եմ միտ,
Հիշում եմ և խրոովահուզ
Ապրողներին հիմա անմիտ:
Յեվ իմ հոգին անվախճանի
Ծովումն հալվում և ընկղմած.
Վահ, թե ինձ այս ովկիանի
Դիրկն ընդուներ համատարած...

889

85

* * *

(Լեռպարդիից)

Սիրո ցընորքներ, վա՜ռ յերազներ...
Նոքա հոյակապ զործի յեն պատճառ.
Յեվ զեղաժպիտ կուսի հրապուրներ
Տալիս են նոցա միշտ կյանք ծաղկավառ.

Բայց և նա ընավ սեր չի ճանաչում,
Ուր սիրտը յերկչոտ ծնում է քընած,
Յերբ ահով մրբկից յերկինքն և գոչում
Յեվ ցնդանում են ալիք կատաղած...

Յերբ ամպերի մեջ կորած լեռներին
Զարկում են ուժգին հրըեղեն շանթեր,
Միայն խանդավառ աղատ աչերին
Պատկերանում և ցընորք անվեհեր.

Ո՛վ կանայք, ով վոր սասրոգութեամբ
Ծուռնկ և խոնարհում չար բաղդի առաջ,
Ով վոր լուռմ և, ըստուկ զգացմամբ,
Յերբ հայրենիքի բաժինն և հառաչ,

Ով յերկչոտութեամբ փախչում և դաշտից,
Ուր վոր պողպատի ցոլում են սրեր,
Յեվ չուզե զրկվիլ անփառք հանգստից,—
Վա՜հ, նա չիտե սիրել ձեզ, կույսեր։

Յերբ նա ձեզ մատ պա՝ ափերս շրխունքին,
Հետայե՛ք դուք լուռ արհամարհանքով.
Թուլամարթի, ըսատր, յերկչոտ սարուվհներին
Դուք մի պատկեք սիրտ պատկով։

389

86 ՄԱՆԿԱՆԸ

Յերանի՛ քեզ, անհո՛գ մանուկ,
Դու անարա՛տ, դու դեռ անբի՛ծ,
Դեռ չըբացված գանձ ես ծածուկ,
Մաքուր շող ես պարնան յերկնից։

Դու հավատով դիմում ես կյանքը,
Յեվ սպասում ես յերջանկությունը.
Յեվ քեզ համար կյանքի տենչանքը
Վորպես մի վարդ կամ յերգ սիրուն է։

Դու չըգիտես թե ինչ վշտեր
Սառվում են սիրող հոգին,
Դու չես տեսնում թե ինչ փշեր,
Բուն են դրած վարդի մեջին,

Դու կը տանջվիս և՝ վիճաբաս,
Ինչ և կյանքի դառն արտասուք,
Կանցնին որեր, և վերջապես
Կը դա թախիծ, սիրուն մանուկ...

Բայց և դարձյալ քեզ յիրանի՛.
Դու ապրում ես, յիս ապրեցա.
Դու դեռ գարնան այգ դեղանի,—
Իմ վերջալույսն մոտ և ահա...

890

87

* * *

Յերգիր, հոգյակ, յերգիր, իմ մանուկ.
Զայնիկը անուշ հուզում է հոգիս.
Անցած ավուրց ցընորք վաղանցուկ
Փայլ և տալիս այս մարող կյանքիս։

Գուցե դու կես, վոր կյանք պիտի տաս,
Մաշված սրտիս այս դառն որերում.
Յեվ յերանելի թե դու հավատաս,
Վոր քո յերգիցն կես նոր եմ ապրում։

Վառ զգայմունքի այն մոռցված լեզուն
Թոթովում է ահա ականջիս.
Ահա նախկին սեր, խանդ և ավյուն,
Անցած չքնաղ պատկերն առաջիս...

Յերգիր, հոգյակ. հոգեզմայլ յերգով
Տուր մոռացոնք ծերացող սրտիս.
Վշտի, թովիչ ինձ, և քնքուշ ձեռքով
Տուր քաղցր հանգիստ հոգնած ճակատիս։

88

* * *

Ամենայն անգամ, կերբ կու միայնակ,
Հետու աշխարհի անվերջ աղմուկից,
Մաքիս հետ ընկած մանուկ եմ անկյակ
Ցնվ նստում լեյլն, հոգիս թափանցվից,
Սեղանիս առաջ, սիրածս անկյունում,—
Թուղթ ու գրքերիս գառնում եմ, ասում.
«Ո՞ւր է ձեր նախկին հրապոյր թովչական,
Ո՞ւր գաղտնիքը ձեր սիտիչ պորսւթյան...

Դուք լուռ եք հիմա և իմ մաքերին
Չեք կարող ցույց տալ ազատ ճանապարհ,
Այս անմիտ կյանքի խորհուրդն անմեկին
Ինձ համար գարձյալ գիշեր է խավար։
Թե մի հրեշ է դա առասպելական
Ահեղ ու գրավիչ, այլ անպատասխան—
Վարպետ մի Սիրեն կախարդում է ձեզ
Ցնվ թունավորում մի նենգ ոձի պես»...

891

89 ՔՈ՛Ւ ՅԵՂԻՐ, ՀՈԳՅԱ՛Կ

Քո՛ւն յեղիր, հոգյակ, թող քաղցրը նիրհով
Աչերըդ փակվին ջերմ կուրծքիս վերա.
Սիրո անուշիկ մեղեդիներով
Թող մինչև նոր այգ ականջդ հնչանա։

Քնքուշ վարդերով յիս կը զարդարեմ
Քո գլուխն ու կուրծքդ, որբան փափկութեյան.
Քնիր, թագուհի՛ս, մինչև լուսադեմ,
Մինչև արտուտներն յերկինք սըլանան։

Յեվ յերբ առաջին նշուլն վոսկեփայլ
Արևը ձըգե կուսական դեմքիդ,
Թող քեզ պարթեցնե իմ սիրո դայլայլ,
Բոցավառ համբույրս այդ վարդ շրթունքիդ։

891

90 **ՅԵՐԱՉ**

Տեսա՝ իմալ խաղաղութեյան դիցուհին,
Ձքնաղ, վորպես մատաղ գարուն ծաղկավառ.
Տվել իր արևն վայլը նորա աչերին
Յեվ շուշանի ճակատըն եր հավասար։

Իմալ, լսերից յուր հետ բուրմունք յեդեմի,
Յեվ ջերմություն, և հույս, և յերջ մայիսյան,
Ջևրին բռնած կանաչ վոստիկ ձիթենի,
Շարժեց ոդում, գարձավ ասաց նա մարդկան.

«Թող մեծ սիրո և հաշտության շողերից
Ջեր միտքը ուշտ, սրտերը գութ ընդունեն.
Անցյեք ձմեռ, և նոր գարուն լուսալից,
կենաց գարուն, թմրած հոգիքն վողջունեն։

Ջարն հեռանա, և ձեր աչքերցն արտասուքը
Հոսե վորպես մաքուր վտակ հորդառատ.
Ամանորյա բարյաց փթթին ձեզ ծաղկունք՝
Հույս կենդանի և հաստատուն միշտ հավատ»։

Բայց... գարթեցա, և վոչ բուրմունք յեդեմի,
Վոչ ջերմություն, վոչ լույս, վոչ յերջ մայիսյան...
Ցերը մեզ համար պիտ կանաչի ձիթենի,
Ախ, վոՀրն արդյոք կլինի տարի նոր գարնան։

[892]

91 ԱՇՈՒՆ

Արևը վերջին անզոր շողերով
Վռանկզոծում է կատարը լերան.
Կանդնած է անշարժ անտառն անխոով.
Չե լսվում արդեն ճռվողը ծիծռանն...
Ցորս կողմս եմ նայում. տեսնում եմ ահա
Յերբեմն միայն մի տերև պղպնած
Գլորվում է տխուր ցուրտ գետնի վերա,
Լսվում է նորա շրշյունը մարած։

Ախ, այդ վայրը թափվող գեղին տերևներ
Սիրաս են գրավում անտարաւնջ վոգով.
Ինձ պաշարում են տխուր յերազներ,
Միտքս յերկրայութեյան ափողվում է ամպով.
Ես ծոցն եմ ձգտում, ուր մայր—բընութեյուն,
Կամիմ հաղորդվիլ քո լուռ հանգստյան
Վտեմ խորհրդին. չե կը դա գարուն—
Կրկին կըփայլես ժպտով մանկական...

Ինչո՞ւ կարող ես դու մահու քողով
Ծածկվիլ ու քնանալ անշուք ու լռիկ
Յեվ հառնել զարձյալ, յերբ յուր ջերմ շողո
Աղտա ճակատիդ արևը գողտրիկ։
Իսկ մեզ՝ վոր չունինք գիվանքը կենաց,
Գրկում է շիրիմն անգթարձ, հավիտյան,
Յեվ մեր առավոտ, վշտով անցուցած,
Անվերջ գիշերում առնում է վախճան...

Բայց սիրում եմ քեզ, հանգչող ըընութիւն,
Դու մի այլ մանվան հանդերձ ես զգենում.
Յեվ իմ մեջ ուժգին յուսում ե արյուն,
Յերբ այդ սգավոր պատկերդ եմ տեսնում...
Զգում եմ բերկրած, գարնանդ հիշելով,
Վոր այդ ցնորք չե, կա անմահութիւն ..
Յեվ գիրկդ եմ ընկնում, հոգիս անխոով,
Քեզ կամիմ միանալ, ով մայր ըընութիւն:

892

92

ՀԱՄԱՉՈՒ

(Ա. Պլեչչեյեվից)

Հառաջ աներկյուղ, առանց վարանման,
Ցեղըս՛յրք, դեպի գործ դիմենք սխրալի.
Ցերկինքուն արդեն մեր սուրը փրկության
Ցես այլը տեսա վառված լուսալի։

Ջեռք ձեռքի տված հառաջ միասին
Ընթանանք, ցեղըս՛յրք, վատահ ու անահ.
Ցեվ ապավինած գիտության դրոշին
Թող մեր միությունն աճի, ամրանա։

Մենք ճշմարտության ազատ բարբառով
Մեղք ու ստություն կը պատուհասենք,
Ցեվ քնեածներին զարթեցընելով
Դեպ ճակատամարտ հառաջ կը տանենք։

Ցեվ չենք ըստեղծել կուռքեր մեզ համար
Մենք վոչ յերկինքում, վոչ յերկրիս վերա.
Ամենայն բարիք թող տա մեզ աշխարհ—
Ցերկրպագություն չենք անել նոցա։

Մենք մաքուր սիրտ վարդապետ կլինինք
Ցնանկ սղքատին, մեծատուններին,
Ցեվ դորա համար թող վոր հալածվինք—
կը ներենք մենք մեր թշնամիներին։

Յերանի՛ նորան, որ դու մաքառման
Յեվ հոգսերի մեջ յուր կյանքն ե մաշել,
Պըղերգ ու խաբղախ ծառայի նըման
Յուր քանքարն հողում անշահ չե թաղել։

Սուրբ ճշմարտութիւն վառված վրեպես ջահ,
Թող մեր ուղեցույց աստղիկը լինի.
Յեվ հավատացե՛ք, աշխարհիս վերա
Ազնիվ ձայնն ի զուր չպիտի անցնի,

Լսեցե՛ք, յեղբայրք, ձեր յեղբոր խոսքին.
Բանի մեր մատաղ յեռում են ուժեր՝
Հառաջ ու հառաջ դիմենք միասին—
Ինչ ել բաղդը մեզ վիճակած լիներ։

893

93

* * *

Մի՛ վհատիր, յեթե ավերը
Ցավ սուգն ընկավ քեզ բաժին.
Թող սարկութեյան մռայլ պիշերը
Ահ չըբերև քո սրտին,

Թե յերդգ անուշ սուրբ բերկրութեյան
Եյ տեղ չունի աշխարհում,
Թե շղթայի հիմա գաժան
Շաչյունն ե լոկ քեզ հանում,

Մի՛ վհատիր, յէլ ասպարեզ,
Ա՛ռ յոթնատի քո քընար
Ցավ տանջանքի որհներգ տուր մեզ,
Վողբի ազբյուր մեզ համար,

Կամ թող հնչեն հզոր լարեր,
Վորպես փողը հաղթական,
Թնդան ուժգին թմրած սրտեր,
Փայլի սուրբը խաչ վկայութեյան...

Ցավ քո ձայնը թող վորոտա,
Ինչպես ամպրոպ խավարում,
Թուխպը ցրվի, փայլակ ցոլա
Արյամբ փրկված աշխարհում։

[893]

94

* * *

Բացվեցավ գարունն... Հոգիս ըսկըրաւթյամբ
Սըլանում է վեր, ալնտեղ՝ ուր սիրով
Ծիծաղում է ինձ մի յարկինք անամպ
Վոսկի արևի պայծառ շողերով։

Կուզեյի յերգել. քաղցր ու նվրդաշնակ,
Կորով ձայնով, և վառել սրտեր,
Վոր յերգըս, վորպես գարնան հորդ վտակ,
Սար, դաշտ ու անտառ, ձորեր թնդացներ։

Յեվ իմ նըվագած հուսո մեղեդին
Նոր կյանքի գարուն կավետեր մարդկան,
Յեվ մաքուր հավատն, ինչպես շող այգին
Նը ցրվեր խավարն մռայլ գիշերվան։

Յես սեր կերգեյի, բայց և ազնիվ մարտ...
Այլ, ա՛խ, ցրտերից խամրեցավ գարուն,
Թոշնեցավ սրտիս անուշ կոկոն վարդ,
Կապվավ և և լուռ վտակ կարկաչուն։

[895]

95 ՏԵՆՋԱՆՔ

(Շիլլերից)

Ա՛խ, յերանէ այս միգապատ
Աոր անդունդիցն ահռելի
Դուրս թռչելու յես մի ազատ
Ինձ ճանապարհ գտնէի։
Մշտահանաչ սիրուն զգեստով
Ահա այնտեղ բըլուրներ.
Ա՛խ, թե հուժկու յես թևերով
Սըլանայի դեպի վեր։

Մի յերկինային անդորրութեան
Լսում եմ արդ նըվագներ,
Բաղցր բուրմունք անուշ զարնանէ
Բերում են ինձ մեղմ հովեր։
Սաղարթի մէջ գեղաժպիտ
Վոսկի պտուղներ շողշողուն,
Յեվ ծաղիկներ մշտափթիթ
Իմ հոգին են կախարդում։

Վո՛ւհ, ինչ չքնաղ պիտի լինի
Անվերջ լուսո այն աշխարհ,
Յեվ ի՜նչ անուշ ու սքանչելի
Այնտեղ ոդը կենաբար։
Բայց հնդկատան իմ առաջին
Մոնչում է գայլուկով.
Նորա ալիքը մոլեգին
Պատում են ինձ սարսափով։

Ահա նավակն այստեղ կանգնած,
Բայց, ա՛խ, չըկա նավավար...
Հառա՛չ անտառ ու անկասկած—
Նա շունչ կառնե քեղ համաքեր
Լոկ հավատա դուռ աներկմիտ,
Բա՛ց դուռ, սիրտ ա՛ռ ու հոգի—
Հրաշքրով կըացվի քո առաջիդ
Սիրուն աշխարհն հրաշալի։

1895

96

* * *

Հեղիկ կարկաչով վազում են ալիք,
Փարում, փայփայում ափերը կանաչ.
Ջրերի վերա կախված ուռենիք
Նոցա հետ խոսում են լալահառաչ։

«Մե՛ վազեք, ալի՛ք, կացե՛ք, կոհակնե՛ր.
Մի՛ թողնեք չքնաղ այս վայրն հանգստյան
Ցեվ վայելեցե՛ք քաղցրութեյան ժամերը,
Մինչ ժպտում և ձեզ շողն արեգական։

«Ա՛խ, դուք չեք տեսնում, կանցնեք այս լուռը—
Ցեվ կը պղտորի ձեր ջուրը վճիտ.
Այնտեղ մյլ յերկիր, ա՛յլ ափեր տեսնը,
Այնտեղ կը գրկե ձեզ արյան հովիտ։

«Այնտեղ հողն արյուն, արյուն են սաթեր,
Ջինջ ակբյուրներն եվ կարեվ են արյուն.
Վտակը քերում արյունոտ քարեր,
Թառամեցնում և ծաղկավառ գարուն։

«Դողում և յերկինք սրի շաչյունից,
Մթնել են վոսկի արևի շողեր.
Վա՜հ, մե՛ հեռանա, սիրուն պետ, մեզնից,
Մե՛ վազեք, ալիք, կացեք, կոհակներ»...

Բայց... ձռակլեցավ յերեսը գետին.
«Ի՞մ քուչր, յեղբայրն ևն այն ակն ու վտակ»—
Գոչեց, զարկվեցավ սարսած ափերին
Ու հառաչ անցավ կոհակ առ կոհակ։

895

97 **ԳԱՐՈՒՆ**

Մի նոր, հրաշալի կյանքով շունչ առած
Թպտում և բնությունն, զերդ մանուկ չքնաղ,
Ցեվ նոր զորությամբ յերկիրն և զաբթած,
Ցեվ յերկինքն հստակ ու գեղածիծաղ։

Այս խորհրդավոր պահուն յես մենակ
Ծնկաչոք ահա քեզ եմ աղոթում,
Նաչեցյալ վերկիչ, քո հովանու տակ
Ցավատանջ սրտիս իղձերն եմ բերում։

Թող այս բերկրալից գարնան ջերմ արև
Իմ հայրենի տան վերա էլ փայլի.
Մի որ, գեթ մի որ, թող քո առաջև
Այնտեղ հեք ծիծռան որհներգը լսվի։

Թե անցյալ և մեր ձմեռ ցրտաշունչ,
Թե անպարտ արյունն հասցրեց վարդերը,
Ցեվ տառապելոց վողբերն ու տրտունջ
Դարձան զոհության խաղաղ մաղթանքներ։

[695]

98 **ՍԳՈ ՈՐԵՐ**

Թև վոգևորվել կարող ես կրկին,
Թև կարող ես դեռ կըրակվիլ վշտից,
Սի՛րա իմ չարաճանջ, այս սուգն ահագին
Հեքիաք ե, վոր դու պատռվիս ցավից։

Բարդ բարդ կուտակված ամպեր քո գլխին,
Սորանից ել սև կը լինի թախիծ...
Ա՜հ, թող արտասուքն իմ մարած աչքից
Հեղեղի նման թափվի դառնագին։

Թէ, սիրա իմ, դու դեռ այնքան աննկուն,
Վոր այս ցավին ել պիտի դիմանաս.
Թէ այնքան ե դեռ քո հոգյան հատատուն,

Վոր սպասում ես, թե կը շողա արև,
Նոր ույժ ու նոր կյանք գարձյալ կստանաս,
Գարձյալ կը ծաղկի գարուն քո առջև...

[896]

99 **ՄԱՅՐՍ**

Հոգեթաղ ցավով ամենայն գիշեր
Ցնս քուն եմ մտնում արտասուքն աչքիս,
Ցեվ խուռն լերամով տանչող պատկերներ
Շուտ պաշարում են տառապյալ հոգիս...

Մինակ ապրեցա, կարոտ գգվանքի,
Փորձով յես ուսա խորհուրդը կյանքի,
Որքա սևացավ այրող կրքերից,
Ջրգնտա յերբեք մի սիրտ կարևկից,

Ցեվ քուն եմ մտնում ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեթաղ ցավով—
Հանգիստ չեն տալիս սև սև պատկերներ,
Վոր պաշարում են ինձ խուռն լերամով...

Ցեվ ահա դու յես, վոր ինձ այդ պահուն
Ցերևում ես, մայր, պսակով զարդարուն.
Դու գրկում ես ինձ սիրով կաթոգին,
Գոչում ես՝ «վերդի» ձայնով անմեկին,

Ցեվ տեսնում եմ յես քո փշյա պըսակ,
Ոտքերով ծածկված քո սիրուն ճակատ,
Ցեվ մի թափանցիկ նուրբ շղարշի տակ՝
կուրծքիդ հոսող արյունը կաթ-կաթ,

Աչքդ աղերսալիր տեսնում եմ վերա՝
կանչում եմ քեզ «մայր» յես ձայնով նրվազ,
Ցեվ կրկին յերնում անքուն, վշտահար—
Ա՛խ, մայր, ինչ անես վորդիդ քեզ համար...

100

* * *

Ցավ յեկավ պարուն, և անցավ ամառ,
Բայց յես չտեսա մի պայծառ արև,
Ցավ կարկաչահոս վտակը կայտառ
Լոկ արյան շիթեր ցայտեց իմ առջև։

Ցավ յեկավ թռչունն իմ հայրենի տան—
Լալաձայն վողջույն առա նորանից։
Ա՜խ, վողբով յեկար, կռնչնկ սիրական,
Ցավ անջատվեցար վողբով ինձանից։

Թռչնեցան ծաղկունքն իմ անուշ յերկրի,
Սառույցը կապեց արյունոտ վտակ։
Եվ պիտի ծաղկի կուրծքը սարերի,
Արդյոք կը տեսնեմ աղբյուրներն հստակ...

Յերանի մեկ ել աչքս բանայի,
Ցավ դու, իմ շեն տունն, այժմ գերեզման,
Ավետաբերիդ յես ընդունելի,
Լսելի որհներգ քո վերածնության։

[896]

101

ՍԱՐՆ Ի ՎԵՐ


Դեպի վե՛ր, դեպի վե՛ր... Անվերջ և ուղիս,
Հոգնեցան բազուկներս՝ այս կռվում անդուլ,
Սպառեցավ և վերջին ուժն էլ ծնկներիս—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, քաջասիրտ գինվոր։

* * *

Ավելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Ավելի թող սպառնա անդունդն ահավոր,
Դեռ չունչ կա բերանում, շարժվում են ձեռքեր—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, ահ արի գինվոր։

* * *

Դեռ հեռու չի կատարն անամոլ ու հսկայ,
Բայց յերթն չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհեր գինվոր։



Ովարն ի վեր բանաստեղծության ինքնագիրը

Հրատարակվում է առաջին անգամ
Սեփականությունը ՀԽՍՀ Գրական թանգարանի

102

* * *

Հավատում եմ — ժեռնվու չի սուրը դաղափար,
Յեվ անմահ և, վոր մեռնում ե նորա համար.
Հավատում եմ — չկա վոչինչ հավերժական,
Բայց սուրը դործի ուժը դյուրթիչ չունի վախճան։

Մի վհատիր, հառաջ գընա, անբա՛դ յեղբայր։
Թող խորտակվի բայց ովկիանում նավդ հողմավար,
Թող դայրանա գլխիդ մրրիկ ահեղաշունչ
Յեվ մոլեգին կլանե հորձանք դիդ անմոռունչ...

Բայց հավատա, դու չես հաղթված, վոչ ուժն հաղթող —
Յեվ նոր քաջեր կելնեն անշուշտ քեզ հաջորդող,
Յեվ կը գրավին նոքա այն ավը ցանկալի,
Յեվ նոր ապտոդ փայլը փառքիդ կը բորբոքվի։

Թող ավերվի հայրենի տունն հիմնահատակ,
Բայց քանի հուրն առկայծում ե դեռ մոխրի տակ,
Նորա կորուստն, վա՛ռ, մի՛ վողբալ դու սպավոր —
Իրրև փյունիկ նա կը հառնե անշուշտ մի որ...

[896]

103

* * *

Ցերը լռում եմ յես, այս վիշտն անագին
Հանգիստ չե տալիս իմ տանջված հոգուն.
Սիրտըս կտրատում, մաշում են կրկին
Այս լացն ու հառաչ, հուսահատութիւնն։

Յեվ ասում եմ յես. հանցանք և լռել,
Ցերը այսչափ մեծ և և անծայր չարիք.
Մ'իթե պիտ ապաւինք, վոր մեզ անարգել
Հասնե և վերջին անհնչի մրրիկ։

Յեվ խոսում եմ յես. բայց ևլ չի հնչում
Գարնան ցնծալից իմ հին մեղեդին...
Յես ևլ միայն կոծում, միայն հառաչում--
Իմ լացն եմ խառնում ընդհանուր վողբին։

[896]

104

* * *

Զուռնիմ քեզ համար, ընկեր թանկագին,
Սրտառուչ, քաղցրիկ վազեմի ձայներ.
Ա՜հ, բնկերիկ լարերն իմ խեղճ քնարին
Շուտով սորվեցան յերգել սև որեր։

Կռիվ և այս կյանքն, և այդ կռվի մեջ
Վերքան անպատասխ, ուխտ մեր ուխեր.
Բայց մենք գնում ենք մի հուսով անվերջ
Յեվ չունենք վոչինչ մենք այլ քաջալեր։

Նույն ակարուԹյամբ մենք վոտք ենք կոխում
Ահա նոր տարին, և առաջնեբիս
Մեր նույն առաջնորդ աստղիկն ենք տեսնում—
Այդ լույսն և, պոտ գեռ լույս և տալիս։

Յեվ քանի վառ և, չև հանգել կրակ,
Հառաջ, միշտ հառաջ, ընկեր թանկագին.
Կյանքն իբրև մի հեղեղ՝ կոհակ առ կոհակ
Շարժվում և, փրկում միայն քաջերին։

[897]

105

* * *

Կուզեյի հնչեր տավիղս մեղմիկ
Սրտառուչ նվագ, անուշ դայլայլիկ,
Ցեվ վառեր սրտեր սիրո կրակով
Դիմել դեպի գործ միաբան հոգով։

Կուզեյի հնչեր իմ վիոլն ահարկու,
Թնդացներ սրտեր յուր ձայնովը հուժկու,
Քնածը զարթներ, թուլլն արիանար
Կռվելու ցմահ սուրը գործի համար։

[897]

106 ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Քեզ ըսպասող չըճընաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն.
Դավքդ ասող չըմընաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն։

Սև-մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր գառան արին,
Մեզ վայ ըներց ես տարին—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Բյուլբյուլը գա՝ թող ձեն տա,
Ել ձվ պիտի չըզ կնդա,
Ել վճիռ սիրտը կը թնդա—
Զուր ես գալի, ա՛յ գարուն։

Բյուլբյուլն յեկավ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կա՝ զարդ չունի—
Ել ա՛վ ա՛ւոր զարդ չունի—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Դու չես ըներիր հավքերին,
Վճռց տեր ըլնին ըրներին,
Սող տեղ չկա մեր յերկրին—
Զուր ես գալի, ա՛յ գարուն։

Աշուղի բերանը փակ,
Սազ-քյամանչին փակի տակ,
Սիրտն ա երվում անկրակ—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Ֆեզ ըսպասող չըմընաց,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքըդ ասող չըմընաց—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

[897]

107

* * *

Գարնան կարկաչուն վտակի ափին
Մոլորված մաքով չես նստած եյի
Ցեվ նայում եյի պղտոր ջրերին,
Պեսպես յավերով տանջված սիրտըս լի։

Ցեվ փունջը ձեռիս քրքրում եյի,
Ծաղիկներն մեկ մեկ ջուրն եյի ձգում,
Ցեվ պղտոր ալիք գարնան վտակի
Միշտ հառաչ եյին անդադար ւ լորում...

Ցեվ աչքըս ջրին՝ ասում եյի յես.
«Կյանք, դու էլ մեկ մեկ որբըս ինձանից
Խլում ես պղտոր այդ վտակի պես։

Ինչպես ծաղիկներն իմ փնջի միջից՝
Անհետանում են անուշ յերազներ—
Սիրտ իմ, դրախտ եյիր, և դարձար ավեր»։

897

108

* * *

Ահ, չես գիտեմ. թշվառ կեղբայր,
Ծանր և խաչը տակար ուսիդ.
Ճակատագիրն, իբրև խորթ մայր,
Չե ժպտացել դեռ կիրեսիդ։

Գիտեմ՝ վաղուց ես դու սովոր
Անցնել անքուն կիրկար գիշեր,
Յեվ արցունքով, ըերդ սպավոր,
Մեկ մեկ համբել կյանքիդ որեր։

Բայց դու գիտե՞ս, վոր դեռ անվիշտ
Չե տեսնված մի հոդածին,
Յեվ չեղածի հուսով և ձիշտ,
Վոր տալիս ենք կյանքին մի պին։

Հավատում ենք, թե կը գա որ—
Բազդը կերազ չի թվիլ մեզ,
Թե կը բացվի նա փառավոր
Առավոտյան վառ շողի պես։

Թե կը ցամքի դառն արտասուք,
Լուսյա կը դառնա այս սև գիշեր,
Կը փարատվին կսկիծ և սուգ—
Կը գա մայիս շընորհաբեր։

[897]

109

* * *

Ցերը տեսնում եմ, ինչպես պայծառ
Ցեվ անարատ զգացմունքով
Ծմբլում ենք այս տոնի համար
Մենք վիտուխյան անունով,
Վերանում են մութ կնճիռները
Իմ ամպամած ճակատից
Ցեվ գնի առ ժամ վիշտն ու հոգսեր
Հեռանում են իմ սրտից,

Ցեվ ասում եմ չես հավատով.
Ահռելի չէ այս գիշեր,
Թե ձոր փայլին մի ջերմ լուսով
Առավոտյան վառ շողեր,
Ցեվ այս որն և այդ առավոտ,
Ձոր բացվում և ճերմակ մեջ—
Թող այդ լուսը լինի աղոտ,
Միևյն ինա միշտ անշեջ։

110

* * *

Մենք միասին գնում ելինք ճանապարհ.
Դու վաստակած՝ հանկարծ վհատ կանգ առար
Ցավ ասացիր. «Ցես յերկինքն ել մթագին
Դառ փոթորիկ և պատրաստում մեր գլխին»։

Բարդ-բարդ ամպեր թող կուտակվին, թանձրանան,
Ամպրոպ ճայթի, շանթեր փայլին մեր վըրան.
Զվհատինք, և միշտ հառած անվրդով—
Դիտեմ, ընկեր, տեղ կը հասնենք արևով։

Ցավ մենք ասանք, անցանք դժվար ճանապարհ,
Պահ մի կրկին արևն ելավ վոսկեվառ.
Բայց չխաբվիս դու այս փայլից կարճատև,
Դեռ շատ փոթանք բաղդը կհանե ձեր առջև։

Կը գայրանա, կը կատաղի չարութիւնն
Ցավ դեմ առ դեմ մենք կը տեսնենք թշնամուն.
Նա սպառազեն և ահարկու, մենք՝ անզոր,
Ցավ մեր շարքեր կը նոսրանան որեցոր։

Ցավ կը խլե նա մեզանից լավերին,
Ցավ կը հասնեն սգո որեր մեզ բաժին.
Կը հալածվինք, կը տառապենք մենք յերկար,
Բայց և կապրենք—մեռնելու չի սերմն արդար...

Ինդիավորված անկածներէ արյունով՝
Յերկիրն ալ պոռալ կը սա յերկունքով.
Ժամը կը գա, կը դաշարի փոթորիկ,
Յեվ հաղթութիւն կը վաստակեն մեր վորդիք։

1897

111 ՏՈՆԱԿԱՆ ՅԵՐԳԸ

Տավիղը ձեռին յերգիչը մանուկ,
Վարպետի առաջ մտախոհ չոքած,
Անվարժ մատներով լարերին փափուկ
Զարկում եր մերթ մերթ ահով ու հուզված։

Յեվ հնչում էյին լարերն վողբաձայն,
Դողդողում էյին, ոգի մեջ ցնդում,
Ինչպես հեկեկանք սգավորի տան
Կամ ճմրան քամին ձյունապատ դաշտում...

Յեվ ժպտաց վարպետն, ասաց դառնությամբ
«Յերգել ուզեցիր դու տոնի համար...
Բայց չի՛ վոր միայն յերկնքումն անամպ
Փայլում և արև ջերմագին ու վառ.

«Յեվ մի՛թե ցավոտ սրտիկ կը թռչեն
Ցնծության և վոչ վշտալից ձայներ.
Ա՜խ, վոսկի լարեր պիտի հառաչեն,
Մինչ աշնան ընդան խամրած են սրտեր»...

112

* * *

Գիտեմ ինչո՛ւ, երբ մառախլապատ
Կախված է լերկինք, և սրտիս վերան
Վիշտ է ծանրանում, և մինչ հուսահատ
Տեսնում եմ մթրիկ ցրտաշունչ ձմրան,—
Ցեղս յերազում եմ մի չքնաղ գարուն,
Վոսկի արեով և ջերմ և պայծառ,
Կանաչ դաշտերալք, լեռներ զարդարուն,
Վտակն առաջիս վճիտ ու կայտառ։

Գիտեմ ինչո՛ւ, երբ տեսնում եմ յես,
Ինչպես սաստկանում, ածում է չարիք
Ցեղ անպատրուչն դաժան Սֆինքսի պես
Ալում և մատաղ մեր կյանքի ծաղիկ,—
Ցեղս մտածում եմ, վոր այս չարիքն ել
Պիտի չըմընա անվերջ, անվախճան.
Թե չար, թե բարի, խնդ թե վիշտ անել՝
Կանցնեն ղերդ յերազ, ինչպես ամեն բան...

113

* * *

Ցերթ կյանքի ուռայն հոգսերից ճնշված
Ցես վհատ հոգով իմ շուրջն եմ նայում,
Տեսնում եմ չնչին կրքերով լցված
Բոլորիս հոգին՝ ասում եմ սրտում,
Թե աղնիվ խոհեր, վսեմ ըղդացմունք
Ել չեն մատչելի մեր քար սրտերին.
Թե դրքա վորպես մի ալ մատաղ տուհնկ
Ծամբացան, յերբ ժանտ փչից հյուսիսին։

Բայց տհա, մինչ մենք իբրև տգավոր
Վողբում ենք պայծառ հույսերի ավեր,
Մինչ դեռ չքացված խավարում և որ
Ցեվ վհատության տիրում մեզ դիշեր,—
Լսում եմ մի ձայն, վոր չերմ հավատով
Դորձի յև կոչում մեզ լքյալներիս.
Վերքեր և վողբում նա խոցված սրտով,
Բայց յուր սերը մեզ ավանդ և տալիս։

Ցեվ ասում եմ յես, թե կանցնի խավար,
Կը վառվի կրկին հուսո արշալույս,
Ցեվ ցանկալի որ կը գա մեզ հաժար,
Կը շողա բադդի ժպիտ սիրահույզ...
Ցեվ նախնյաց վողին մոռացված դամբանից
Մեր խեղճ աշխարհում, վորպես մի փյունիկ,
Կը զարթնի փառքով ավերակներից,
Գարնան պես մատաղ ու միշտ դեղեցիկ։

114 ՊԵՐՁ ՊՈՒՇՅԱՆԻՆ

Հայրենիքիդ ծառ ու ծաղկունք,
Վար ու քարափ, խոր ձորեր,
Անմահական անուշ ակունք,
Արագածի քաղցր հովեր,

Շինականի չարչ ու բարին,
Ուրախութիւն, դարդն ու ցավ—
Թե ավեցին քո հանճարին,
Կարող վրձինդ չարժվեցավ.

Ցեղ պատկերներ չքնաղ, սիրուն,
Կենդանացան՝ շունչ առած.
Նոքա միշտ թարմ, ինչպես գարուն,
Հոտ են բուրում հայրենյայց։

[*899*]

115

* * *

(Պուշկինից)

Ձեզ չեմ ափսոսում, իմ գարնան տարիք,
Վոր անցաք ուշացն սիրո ցնորքով.
Վոչ ձեզ, գիշերվան պայքարները գաղտիկ,
Վոր լերկել եմ ես հեշտաճաշն սրնգով.

Ձեզ չեմ ափսոսում, նենգիա ընկերներ,
Պըսակ ու թասեր անհոգ խրախճանքի,
Ցավ վոչ ձեզ, ժառաղ կուլաները գեղանի.—
Մաքիս հետ ընկած՝ չունեիք վռոսանքներ։

Բայց ձեր դուք արդյոք, հոգեմայլության
Մառաղ հույսերի խաղաղ բոպեներ.
Ո՞ւր և հուրն ու խանդ վոգևորության...
Ա՜խ, յեկե՛ք կրկին, իմ գարնան որևր։

899

*
* *

116 (Պուշկինից)

Ազմկալից փողոցում
Թե տաճարումն յես լինիմ
Կամ խնչուլքի ժողովում,—
Իմ մտորմունքն յես ունիմ։

Ասում եմ յես. տարիներ
Կանցնեն, ու մեզ հավիտյան
Պիտի գրկեն սև պիշեր—
Մեկինս ել արդ մոտ է ժամ։

Կաղնի տեսնում մենավոր՝
Որհնում եմ յես, թե ինձ ել
Կը թաղե այս ալեոր,
Ինչպես նախնյացս է թաղել

Բնքուշ մանուկ գլվիկիս՝
Ասում եմ. կայց դու բարով.
Տեղըս յես քեզ եմ տալիս,
Ծլիս, ծաղկիս քաղցը որով։

Ցեվ ամեն որ, ամեն ժամ
Մտածմունքս է անպակաս,
Աչխատում եմ խնտնամ
Մահուս տարին վերահաս։

Յեվ ահ ուր բապդն ինձ կը տա մահ —
Ճանապարհին թե կռվում.
Թէ հոգիան և մերձակա
Իմ պաղ մարմնին ըսպասում։

Յեվ անդգա թեպետ դիս
Մեկ և ուր եվ վոր փախ,
Բայց հայրենի իմ հողիս
Կուզեյի մոտ նա հանգչի։

Յեվ դրան մոտ իմ շիրմի
Կյանքը ձառող թոդ խաղա,
Յեվ բնութիյունն անհոգի
Միշտ եվ չքնաղ շողշողա։

[899]

117 ԻՆՁ ՈՒ ԻՆՁ

Որևէս անցյան անպտուղ.
Սիրտը վորպես դերեզման
Լուռ և արգելն, և յեքկլուղ
Ինձ չե ազդում վոչ մի բան...

Կորցնելու բան չունիմ,
Վոչ գտնելու ել մի հույս.
Մեկ ե, ուր ել վոր լինիմ
Մեկ ինձ համար՝ մութն ու լույս։

Բայց յեթե կա հիրավի
Հրաշքն ասածն աշխարհում,
Ցեվ հրաշքով կըվառվի
Հանդած կրակն իմ սրտում,—

Կամրացնեմ յես նորան,
Ինչպես մի բերդ անառիկ,
Իմ խեղճ անմա՛տ մանկությյան
Ցնորքներն ել իմ խաբուսիկ։

900

118

* * *

Ալագյազ քարձր սարին
Ջին ա կիտվել կատարին.
Սարի ճամբեք, բաց եկ՛ք,
Եթամ, հասնեմ իմ յարին։

Ա՛խ, իմ ճամբեն քարոտ ա,
Սիրտս երված, յարոտ ա.
Ղարըբի որն ըլնի սև,—
Ազիզ յարի կարոտ ա։

Յարիս տեսա, լալիս եր,
Լալիս, գլխին տալիս եր.
Ճամբա տվե՛ք, այ սարեր,
Ջևռով սրի՝ գալիս եր։

Են ինչ դուշ ա են քարին...
Սիրտս կաթում ա արին,
Ա՛յ իմ թառլան, թև տուր ինձ,
Թռնեմ, հասնեմ իմ յարին։

Վաղ գարնան քաղցր առտուն
Ցնծում ես ցնծա՛ս ցաւագին
Ապրի՛ս ապրի՛ս, մեռա՛ս ցնծա՛ս.
Ցրիա՛ս հառնում իմ հոգին։

Ա՛խ, իմ մանկութեան ցնորա՛ք ես,
Անդարձ կրակած, հեռա՛ւ ես.
Գարնան օրը ցնծա՛ս ուռա՛ս,—
Մինչ յոյսի ճառագա՛ք ես։

Ելար տխուր, լուսնկո՛տ,
Լուսո՛ւ, ցնծա՛ս արագ՛ ես։
Հանգչեա՛ց տա՛ւիղ, այդ ուրա՛խ
Ցնծագո՛ւ արի՛ւ ցոլքն ես։

Ես կ՚ուզեմ ցաւագին հառնել։
Անդարձ հեռացա՛ւ ու ա՛յնքա՛ն—
Այնքա՛ն թաւալա՛ւ, բա՛ւ տա՛ւ ինձ,
Ցնծա՛ս, հանգի՛ստ իմ հոգիս։

12 յունա 1901 Պետ.

«Վաղգայազ բարձր սարիկ» բանաստեղծության ինքնագիրը
Հրատարակվում է առաջին անգամ
Անձնական արխիվ ՀՈՍՀ Գրական թանգարանի

119

* * *

Ջաթիճնում է յերկիրը... Անուշ կարկաչով
Վազում են ջրեր, և առավոտյան
Կենարար հովիկն արդեն ջերմ շնչով
Շոյում է մատաղ կանաչը դաշտան։

Ահա և սարյակ. դալար վոսկի վրա
Կանդնած ճոխողում, սուլում և կայտառ,
Թևեր թափ տալով վողջունում է նա
Վառ արշալուսի ժպիտը պայծառ։

Յեվ ձմեռն անցավ. բայց դու, իմ ընկեր,
Տրտնջում եյիր, սրտնեղած, սրտում—
Յեվ վաղուց չեր այն—թե մոայլ օրեր,
Թե ցուրտն ու խավար հոգիդ են ճնշում։

Ա՛խ, վոչ ըընության, այլ կյանքի ցրտից
Վախեցե՛ր, յեղբա՛յր. ձմեռ եր յերեկ,
Իսկ ալսոր գարուն, զվարթ, ծաղկալից...
Իսկ մե՛նք, մենք արդյոք կը ծաղկի՛նք յերբեք։

902

120 ԱՐԾԻՎՆ ՈՒ ԱՐՏՈՒՏԸ

Արծիվը կանգնած սև ժայռի գլխին
Հանդիստ ու հպարտ նայում է չորս դին.
Յածն ամպեր ձերմակ լողում են ձորում,
Վերևում վճիտ յեթերն և ծորում։
Յեվ ձյունագագաթ լեռների արքան
Չորս դին է նայում, ասում ինքն իրան.
«Ինձնից բարձր ել ո՛վ կարող է սլանալ,
Այս վեհ բարձունքին ինձ պես տեր դառնալ»։

Հանկարծ յերկնքի անհուն կապույտից
Անուշշ ճովողյուն հնչեց բերկրալից։
Արծիվն ահավոր նայեց դեպի վեր,
Տեսավ՝ ուժգին չէ աշխարհին միջա տեր.
Արտուտը վոգբրիկ մինչ յերկինք հասած,
Աբևի վոսկի փայլովն վողողված,
Գովքն էր գեղգեղում կենսաբեր գարնան,
Մահամերձ յերկրի որհներդն հարուքյան։

121

* * *

Լուռ կաց, սիրտ իմ. այս աշխարհում
Դարդ իմացող չես գտնի.
Մեզ պետներին ջուրն և լերում,
Ջուրն ել մի որ կը տանի։

Գետի յերեսն ընկած տաշեղ՝
Մենք դնում ենք հա առաջ.
Հանգիստ չունինք և վոչ մի տեղ,
Լսող չկա մեր հառաչ։

Լուռ կաց, սիրտ իմ. ուրիշներին
Ափսոս և մեր ցավը հայտնենք.
Դարդն ընկեր և մեզ անմեկին,
Մինչ գերեզման կը տանենք։

904

122

* * *

Պատկած եր նա ցուրտ մահճում
Յեվ լսում եր, թե ինչպես
Դուրսը հողմն և հառաչում
Յեվ մերթ լալիս մանկան պես։

Դուրսը մութն եր. կես գիշեր...
Յեվ նա հիվանդ, ցուրտ մահճում,
Յերազում եր ջերմ շոգեր
Յեվ անձկությամբ հառաչում...

[908]

123

* * *

Լուսնակ պիշներ, անքուն պիշներ
Դարդիս հետ եմ յես մենակ.
Սև յերազներս, սև-սև հուշեր
Հոգիս արին ավերակ։

Ուր վոր յեղբայր անվանեցի,
Ինձ թշնամի համարվի,
Յեվ յես ամուր պատանեցի
Շիրիմ-սրտումս իմ սև ցավ։

Ա՛խ, և մեռել, և կենդանի՝
Վոչ յելք ունի, վոչ վախճան.
Դարդս եվ ուրիշ անուն չունի—
Կյանքիս ընկեր անբաժան։

124

* * *

Ա՜խ, իմ անուշ, վոսկի որկր,
Յերազի պես դուք անցաք.
Ինչպես տավղի քնքուշ լարնր
Ջայն ալիցիք ու անցաք։

Հանգավ իմ խանդ, սեր ու ավյուն,
Սիրտըս թոշնեց դիրդ ծաղիկ.
Ալեց ինձնիից մոայլ աշունն
Իմ անուրջներ դեղեցիկ...

Ու միայնակ, որ ու գիշեր,
Վիզըս ճըկած բեռիս տակ,
Ջնզ եմ հիշում, անուշ որկր.
Ա՜խ, այս ինչ շուտ դուք անցաք։

125

* * *

Աչերիդ մեջ լալդս և վառվռում
Բաղդի աստղիկ—անուշ յար.
Սիրտըս դարդոտ, սիրտըս տրտում՝
Քեզ եմ կանչում, անուշ յար։

Աշունն չեկավ, թառամեցան
Նաշխատն ծաղկունք պարտեզին.
Դու ինձ համար վարդ ես գարնան,
Ցես միշտ կարոտ քո տեսին։

Ամ, այս ախուր բուք ու մթնում
Իմ սոխակն ես մխիթար—
Քնքուշ կերգով կեղեմական
Կախարդեցիր ինձ, անուշ յար։

Սիրող սրտիդ ապավինակ,
Թող ծառանամ վողջ աշխարհ.
Ամեն բանով կյանքից խաբված
Գրկումդ հանգչեմ, անուշ յար։

126

* * *

Որը ձիննց, ճամբես յերկար…
Ուժևրս հատան, յես մենակ.
Ա՛խ, ձեր ես դու, ա՛յ անջիդյար,
Ինձ ձեր թողիր մեն-մենակ—

Ջո ճամբեն եմ բռնել գալիս—
Դու փախչուժ ես, անգութ յար,
Ել ինչ ես ինձ նշան տալիս,
Ի՞նչ ես քցում քարեքար։

Արևս անցավ. սիրուդ համար
Սիրտս երվեց անկրակ…
Ա՛խ, դու անուշ իմ յերգող յար,
Ինչո՞ւ թողիր ինձ մենակ։

127

* * *

Ա՛յ վարդ-աղջիկ, մոտ արի՛,
Քեզ եմ կանչում, մոտ արի՛,
Նաղլնւս աղջիկ, շնւկ աղջիկ,
Քեզ եմ կանչում, մոտ արի՛։

Վարդերի հետ խաղում ես,
Ցերեսիս ծիծաղում ես,
Երված սիրտս քաղում ես—
Քեզ եմ կանչում, մոտ արի՛։

Աչքերդ ծով, ունքերդ կամար,
Աղջի՛, սիրտս ձեր տարար.
Բյուլբյուլ դառա քեզ համար—
Քեզ եմ կանչում, մոտ արի՛,

128

* * *

Հայրենի տան լես ինձ տեսա --
Վառ զարուն եր խնկարույր·
Լռուում եյին լերկնից վերա
Մանրիկ ամպեր վոսկեթույր։

Մեղմիկ շնչում եր գով քամին,
Ծառ ու ծաղիկ որորում.
կարկաչահոս վտակներին
Ծիծառն վողջույն եր ընդուում...

Բայց այդ ուրախ բնութեյան տոնին
Մեկը չեկավ՝ խնդակիցը·
Մութ եր պատել մեր սրտերին,
Թռչուն եյինք բունավեր։

[908]

129

* * *

Յերբ գարնան առաչին ծիծեռնակի հետ
Նոր կյանքի մի վառ շունչ լցվում է հոգիս,
Յերբ պղտոր վտակի ալիքներ վեռ վեռ
Տալիս են մի քաղցրիկ վողջույն հենք սրտիս,—

Զգում եմ, վոր մաշված ուչերս են պարթևնում,
Զգում եմ, վոր դեռ ևս մոտ չե ծերուխյունն.
Նոր յերգի դյուխական ձայներ եմ լսում,
Յեվ մատաղ հուր-բոցով յեռում և արյունս։

Բայց յերբ վոր գարնան հետ լսում եմ մարդկանց
Ամպագին ավետիք, թե քրիստոս հարյավ,
Ա՜խ, բոլոր հրապուչյուններն ատում եմ սրտանց
Յեվ գարնան բարիքներ մոռանում դյուրավ։

Զգում եմ յես կիսիքն այլ ուրախուխյան
Յեվ տեսնում, վոր միայն մի որվա համար
Ամենքս էլ սուրբ անունն առնում իրրև բերան
Յեվ առանց ըղդայման կրկնում տղայարար։

Յեվ միշտ էլ այդպիսի սրերն ավելի
Մատնել են տալին, թե վերքն է պակաս
Մեզ հոգու զորուխյուն, թե ինչպես յերկրի
Ուչն և մեզ քաշում դեպի վայր հանապազ։

[908]

130 ՅԵՅԵՑԻՑ

Մի՛ ափսոսիր անցած որերիդ,
Եվ մի՛ ցանկար դու դարձը նոցա.
Ըզդառնանաս թող վշաից հոգիդ,
Թե վաղեմի բաղդըդ միտըդ գա։

Մի՛ ափսոսիր. հետ չես բերելու
Ինչ վոր յեղել, գնացել և արդեն.
Ով, շուտով, քո ճամբան հետուս
Վոտ դիր, ընկե՛ր, կապմ ու սպառազին։

Տեսնում ես ծոմը առաջդ հուզված.
Ո՛ն, շուտ հառաջ. նավակդ և սպասում...
Վայ և նոցա, վոր կյանքին անցած
Վհատ հոգով նզովք են ասում։

Իսկ դու, ընկե՛ր, ազատ, համարձակ
Դու ծոմը ընկե՛ր ու մի՛ վախենա.
Ցեվ յեթե քեզ ըսպառնան անհագ
Կատաղած ալիք, կովիր ու հուսա՛։

Ցեվ հավատա՛—յերկիրն ավետյաց
Նոքա մի որ քեզ պիտի հանեն.
Ազատությունն ու սերդ յերազած
Այնտեղ լաժին քեզ պիտի լինեն։

Ինչ վոր զարնանը անցած օրերին
Կորցրել ես դու, տառապյա՛լ յեղբայր,
Բոլորն այնտեղ կը գտնես կրկին,
Իմ հուսահատ ընկեր վշտահար։

Մի՛ ափսոսիր ուրնմն անցյալիդ,
Եւ մի՛ ցանկար դու զարձը նորա.
Զըզտունանա թող վշտից հոգիդ,
Թե վաղամի լաղդըդ միտըդ գա։

[908]

131 ՀԱՅՆԵՑԻՑ

Այս լինչ յերգ և հեշտագին
Թափանցում և խորքն իմ հոգուն.
Հնչիր, յերգ դու զարնայլին,
Ջայնիկդ հասնի մեզ հեռուն։

Հնչի՛ր, հասի՛ր այն տնակ,
Ուր ծաղկունք են բողբոջում.
Այնտեղ կլինի իմ հոգյակ՝
Կըտաս նորան իմ վողջույն։

[908]

132

* * *

Ժպտում են ինձ այգ աչերըդ պայծառ.
Յեվ հոգումս նորից ծաղկում և պարուն.
Մատաղ յերազներ, իղձեր բոցավառ
Հուզում են դարձյալ իմ սառչող արյուն։

Յեվ քո առաջին, վորպես պատանի
Անվորձ ու յերկչոտ, սիրով յերկյուղած,
Աչքերըս հառած դեմքիդ գեղանի,
Համբիդ գերի՝ ճուում եմ կանգնած։

Ի՞նչ ես դու բերում իմ տանջված սրտին,
Ո՛վ կույս հրաշագեղ, իմ հրեշտակ սիրուն.
Ջե՞ արդյոք այգ նոր մի պատրանք կրկին,
Սիրատենչ հոգուս մի նոր վորձություն։

133

* * *

Արի՛, ընկե՛ր, արի՛ վողբանք միասին,
Թող ուրիշներն ուրախ ասեն ու խնդան.
Արցունք միայն բաղդը տվավ մեզ լաժին,
Ջարչարանքով տոկալ մինչև գերեզման։

Այս և թեև անդութ որենքն աշխարհի...
Մենք ցավերով սի տեղ ընկանք ճանապարհ.
Վայր ել ընկանք, վեր ել կացանք, բայց արի,
Բայց աննկուն միաց ձեր հոգին վշտահար։

Այսօր խոնջած, հյուծված մարմնով կես ճամբին,
Մեզ սիրտ տվող պայծառ աստղին նայելով,
Մնացինք ձեռնակ ձեր վշտի հետ անմեկին,
Ցեվ ալրվում ենք անզոր, անշահ տենչերով...

Մեզ համար չեր կյանքի բարիքն ու խնդում.
Մշակ եյինք, այդ ել միայ մեզ լաժին—
Թաթնյալ հառաչ, անմխիթար ու տրտում,
Բայց ձեռք ձեռքի՝ հառաչ գնանք միասին։

134 ՅԵՂՈՒԿ ՆՈՐԱՆ...

Հուսահատիկ, ջարդված, կարևոր սրտով
Ցնս քեզ մոտեցա, գովանք հայցեցի.
Դու այնպես անուշ, համայիլ ժպտով
Ինձ ընդունեցիր, դու, կույս նազելի։

Ցեվ գլուխս հոգնած քո չքնաղ կրծքին
Ցեքադրում եյի վոսկի յերազները,
Վոր պատեց, պաղեց մոռացված եյին,
Ինչպես վաղեմի մեղեդու ձայները։

Դու քո ափսոսդքն իմին խառնեցիր,
Իմ անուրջներով թևավորվեցար,
Ցեվ յերգերս ապքատ թանգ համարեցիր,
Քան կյանքն աներազ, վոր կը տար աշխարհս։

Բայց... լեզուկ նորան, վոր գին ե տալիս
Կուսի հեշտալից. ջերմ գովանքներին։
Հրապուրիչ ե նա, վորպես վառ մալիս,
Ցեվ դյուրավոխոխ՝ վերդ որ գարնայինն։

911

135

* * *

Ի՞նչ գիշեր և հրաշագեղ, աստղալից ու լուրթավետ.
Պայծառ լուսինն յերկնքից ժպտում, խոսում և ինձ հետ.
Աստղուքյուն ամեն տեղ. վա՛չ մի շշուկ, վհչ մի ձայն...
Յերազներ են յերամով ինձ այց գալիս լռկլյայն
Յեվ խըռովում են հոգիս, ալեկոծում ծովի պես—
Ա՛խ, իմ դարդերն՝ աճեի կոհակներ են գնդապես։
Գարնան չքնաղ ջերմ գիշեր, սիրո գիշեր հեշտագին...
Վողջում, հնծում ես, անքուն միայն տանջված իմ հոգին.
Որս սևցավ վաղաժամ, թև են առել սև հուշեր,
Այրում և ինձ անկրակ կախարդական այս գիշեր։
Ա՛խ, իմ իղձե՛ր, վառ իղձեր, իմ անուրջներ վաղեմի,
Ջևդնով եր կյանքն ինձ համար գեղեցիկ ու սիրելի.
Ջեզ եմ ուզում կարոտով, սիրտս վառնք դուք նորից,
Մի անգամ եկ թող վոր լամ արտասուքով քեզ կրկին...

136

* * *

Ապրել ու տանջվել, ապրել ու տոկալ,
Լռիկ, անայնակ, անհույս, անխնդում,
Միշտ ել հալածված բազդից վոխակալ,
Գնրի աշխարհումս, ինչպես մուկ բանտում...

Որևցոր հալվում մեղրամոմի պես,
Հատնում են ուժերս, և խանդ, և ավյուն.
Մանուկ իդեալիս եմ կարոտում յես,
Ել բացվելու չե ինձ համար պարտեզս։

Ցավ սիրտս, վոր մի տավիղ ես անուշ,
Հնչում ես, վորպես կարկաչուն աղբյուր,
Ա՛խ, այսոր բևեռեկ լարերը քնքուշ,
Մահու ղբոշմով լռել և ախուր...

911

137

* * *

Յերբ խոր փիշերով, ցուրտ անկողնիս մեջ,
Բունը իմ աչքիս հետու չի փախչում.
Յեվ հոգուս վերա սև հուշեր անվերջ
Յերկանի նման ծանրանում սրտում,

Յերբ մելամաղձոտ աշնան յերկնքի
Պղտոր լուսնյակին ել մարում ե խպտոր,
Ու պատերը մութ իմ խեղճ սենեկի
Գրկում ինձ, ինչպես մի շիրիմ խավար,—


Թվում ե ինձ, թե հետու, մենավոր
Գերեզմանի մեջ դիակ եմ անշունչ,
Բայց յերազում եմ, թե դու անմոռուն
Կանգնած ես կողքիս լուիկ, սպասող,
Յեվ չեմ արցունքիդդ, հոգյակ իմ անգին,
Յես հարուստյուն եմ առնելու կրկին։



Հովհաննես եւ Զարուհի Հովհաննիսեաններ

(1892)

Հրատարակված է առաջին անգամ



138

* * *

Մենակ, միշտ մենակ — ինչ յերջանկութիւն.
Մի պիրկրակին քերկրութեամբ լցված,
Լսում եմ մատաղ սրտիս բաբախուն,
Համարում ամեն վայրկեանն անցած:

Հեռու աշխարհի անմիտ ժխորից,
Ամեն խռովահույզ կրքերից ազատ,
Վշտիս անձնատուր ու անցավակից
Փայփայում եմ իմ տենչերն հարազատ:

Վա՛հ, ինչ անպատում հոգեմտլութեամբ
Յերազում եմ յես, այսպես միայնակ
Իրրև յերկնային մի մոլար ինչ ամպ
Ցնդել յերկնքում անհուն կապուտակ.

Ինչպես ձյուն մաքուր լեռան գագաթին
Արևի շողից հալվել կուզիլ,
Մարգեր շոյելով անցնել մեղմագին
Ինչպես առաջուն գարնան զեփյուռի.

Կամ սիրով արբշիռ, ինչպես պատանին
Մատաղ սիրուհու գրկումը անուշ,
Գլուխս դրած յերկրի ջերմ կրծքին՝
Յուր հետ հավիտյան քուն լինել անհուշ...

139 ԻՄ ՄՈՒՍԱՆ

Յեւ միամիտ մանուկ եմի տակավին,
Հոգիս ցնցեց դողարիկ մի ձայն լերկնային.
Մենութեան մէջ չնաշխարհիկ նվագից
Յեւ արթնացա և, իբրև նոր կապանքից
Ինձ զգալով ազատված,
Ցելա նորա՛ն վրդոնելու, այն դյութին,
Վոր մանկական ցնորքներիս մէջ մթին
Պատկերացավ մի աստված։

Յեվ մէգապատ յերկնքի տակ հյուսիսի
Տեսա նորան, վորպես չքնաղ դիցուհի
Յերազիս պես հրաշագեղ ու անմարմին,
Համակ ճաճանչ, համակ հրապուրյր անմեկին,
Անուշ ձայնով դյութիական
Նա ինձ կոչեց, նա ինձ տարավ դեպի կյանք,
Դեպի մի սուրբ, նվիրական աշխատանք,
Ազնիվ պայքար անվախճան։

Յեվ շշնջուն եր ականջիս մեղմագին
Յուր սրտատուչ խորհրդավոր մեղեդին
Անձնանվեր սիրո մասին ու գործի,
Վեհ անհչների ու խանդավառ իդեալի։
Յեվ բերկրությամբ յես նորան
Հետևեցի հլու, վորպես սիրաշար,
Յեվ նորա յերգն ընտանի յեր ինձ համար,
Ինչպես որոր մայրական։

Յեվ սրտիս մէջ ասես վարդեր ծաղկեցին...
Յեվ վոգևից յես յերգեցի հեշտագին

Ազատութիւն, սէր ու արև և պարուն
Ցեվ քրանաթոր աշխատանքի վհհութիւն։
Անցան տարիք, և այսօր
Մղում են ինձ կյանքի ալիքն հղձանուտ,
Գլխիս վերա բարդ-բարդ ամպեր սև ու մութ
Կուտակված են ահավոր։

Ու չքացա՛ն իմ յերազները վաղեմի...
Ցեվ մ'թնե ինձ դու, իմ կյանքի պիցուհի,
Այսպես ցայսոր պատրում եյիր սիրելով,
Վոր պահեցիր աչքս աքղած ցնորքով...
Սիրտս խոցված կարևեր,
Ձեր կարոտով մ'թնե իջնեմ գերեզման,
Ա՛խ, ոնր եք, ոնր, հոգուս գարնան ծիածա՛ն,
Իմ վոգեշունչ յերգ ու աեր։

140 ՀԻՆ ՑԵՐԳ...

Յերկինքն անուշ, ոդն անուշ,
Բացվից մայիս, հոտն անուշ.
Սոխակն լսկալ առնելու
Իր վարդի կարոտն անուշ։

Յնկ, նազելիդ աննման,
Մայիսի վարդ աննման,
Բացվիր վարդի դուռ նման,
Տևաքըդ անուշ, բուլբդ անուշ։

Յես քո կանաչ թփին թառ՝
Քո սոխակն եմ սիրահար.
Մարող սրտիս բոցավառ
Կյանք թող տա համբուրդ անուշ։

[912]

141

* * *

Մըրիկն անցավ. ցրվեցան ամպեր.
Յետ խնկարուէր ծաղկունք ու թիթեր
Շողշողալով ժպտում են կրկին
Վերջալուսի վոսկի շողերին։

Բայց իմ հոգին, ինչպես թխպամած
Մոայլ յերկինք, մընաց ու մընաց
Կարոտ լուսի, կարոտ ջերմութեան,
Յետ որս անցնում մոտ և իրիկվան։

912]

142

* * *

Յերապն եր անուշ, վոր ոդեղեն թևերով
Մանուկ որից միշտ դեպի վեր, դեպի վեր,
Սուրբ գեղեցկություն ջինջ սահմաններն անխոով
Թաշում եր հոգիս կարոտակեզ կարևեր։

Պայծառ իղձերի, սիրո տենչով հարաճուն,
Ամպերի վրա յես կանգնեցի ինձ համար
Յերկրպագության աննյութ խորան իմ աստծու,
Իմ աղոթավոր մրմունջների վեհ տաճար։

Յեվ ապրում եյի բերկրությանս հետ յես ձենակ.
Վոչ վոք չեր տեսնում ծաղկած գարունն իմ սրտի,
Լոկ ինձ լույս տվող շքեղ վառված արեգակ,
Ինձ թևավորող չքնաղ պատկեր նազելի...

Այլ անցան որեր... յես կամեցա և ծարդկանց
Ցուցց տալ իմ աստծուն. նոցա հոգում կամեցա
կենդանի տեսնել մաքուր ցնորքն այն անանց,
Վորով կյանքս միայն՝ դեղեցիկ և ու անմահ.

Յեվ խորտակեցին մաքուր հավատս ու հույսեր,
Պղծեցին տաճարն ու փշրեցին սուրբ սեղան.
Ջև տեսնում վոչ վոք հոգուս արցունք ու հույզեր,
Մենակ եմ գարձյալ... իմ վշտի հետ անբաժան։

143

* * *

Հոգիս սև պարդ և մաշում,
Սիրտս լալիս և ախուր.
Ա՛խ, ձեր կարոտն և քաշում,
Իմ հայրենի հող ու ջուր։
Ձերապներին մշտական
Տիրուհին ես պաշտելի,
Իմ այցելուն վիշտերման
Վշտի անքուն ժամերի։
Ձեվ այս ոտար յերկնից տակ
Աղոթում եմ քեզ համար,
Իմ հայրենիք ավերակ,
Ջքնաղ յերկիր ու թշվառ...

915]

144 ՀՈՒՇԻԿ

Մտավ արևն, ազիզ յար,
Լույս եմ ուզում, գնաս արի.
Գիշերն անատող ու խավար,
Ո՞ւր ես, լուսնյակ, գնաս արի:

Ծովը ծփում, վշվշում,
Աչքս քյած ջրերին
Են իրիկունն եմ հիշում,
Կարոտ անուշ պատկերին...

Են իրիկունն ել խավար,
Ծովն եր ծփում, վշվշում.
Դու հետս եյիր, անուշ յար.
Են կարոտն եմ դևս քաշում:

Լուսնյակ, աստղեր պետք չեյին
Ջուխտ արև եր լույս տալիս.
Շողուտ, ցողոտ աչքերին
Ջանըս մտատղ լույս յարիս:

Են շողն ու ցողն եմ ուզում,
Ինձ եմ կանչում, յար, արի,
Սիրտըս ծովի պես հուզվում,
Ինձ և մընում, շուտ արի:

145

* * *

Ահա և մայիս. ծաղկում ևն վարդեր...
Բայց մռայլ և յերկինք, և ծովը հուզվում
Դաժան հյուսիսի շնչից մահաբեր։
Ա՛խ, իմ խեղճ սիրտն էլ պարուն և ուզում
Մեզճ սիրտս ավերակ անլույս ու անլույս,
Այս ծովի նըման միշտ խըռովահույզ։

Ի՞նչ զաղանիքներ ես ծոցումդ պահել,
Ծո՛վ դու ալեոր, անժպիտ ծերուկ.
Ի՞նչ վիշտ և արդյոք քեզ այդպես պատել...
Ցես էլ անմռունչ իմ դարդը ծածուկ
Տանջված հոգուս մեջ փակած քեզ նըման
Հեսըս կը տանեմ մինչև գերեզման։

146 ՅԵՐՊԻՍ ՀԵՏ ՄԵՆԱԿ

Быть без людей, быть одному...
В. БРЮСОВ

Յերպիս հետ մենակ, յերպիս թևերով
Թռչեմ, վերանամ
Յեթերքը հատակ, խորունկ լինչպես ծով,
Թռչեմ, վերանամ։

Հեռու աշխարհից, չինչ կապուչյան մեջ
Լողա իմ հոգին.
Ազատ ու անբիծ յերազով անվերջ
Լողա իմ հոգին։

Յես լուսյա եմ ուզում, լուսյա տրվե՛ք ու սեր
Գնե՛ք յերազիս մեջ.
Իմ սուգն անպատում, սգերգիս թևեր
Գնե՛ք յերազիս մեջ...

916

147

* * *

Դուբսը ձմեռ. քամին սուլում,
Հառաչում է վողբագին...
Ցես—խցիս մեջ մինակ, տրտում,
Ցանկվում է լուռ իմ հոգին։

Ցեվ ցնորքի գինուց արբած
Սիրտըս, դերի վշաերի,
Բնդմեվ է լոկ թևավորված
Ու ցնորքիս տիրուհի։

916

148

* * *

[Վ. Բրյուսովին]

Այնտեղ ուր յարդ դաբաւոր
Տեսնում էլին ավերակ
Ու բուերի սգավոր
Լսում վոգիերգը մենակ,

Դու, ով քերթող վշտալի,
Քո հեռավոր հյուսիսից
Շունչ զգացիր կենդանի
Յեվ հնադարյան մեր թախծի,

Յուլյ տվիր, վոր աշխարհին
Մենք յերգ ունենք յերգելու,
Մենք վոր սարուկ ենք տակավին...

Ոհ, այն ճիչն և մեր հոգու—
Շիրիմներից զեպի վյանք
Լուսավոր ու անկապանք։

916

149 ԾՈՎԻ ԱՓԻՆ

Ծովի ափին խոովահույզ
Կանգնած էմ յիս մինաւոր,
Հոգիս մոայլ ու անհույս,
Գլխիս ամպերն անաւոր։

Ու նայում եմ յիս հեռուն.
Այնտեղ ալիք լռնացած
Զայրանում են ու յեռում
Յեվ փրփրադեղ ընկնում ցած,

Յեվ գալիս են վտաքիս տակ,
Փշրվում են առաջիս
Յեվ իրենց յերգը վայրագ
Մռնչում են ականջիս...

Ի՞նչ են ասում դու ալիք,
Ի՞նչ են վշշում անդադար,
Ա՞ւմ ձեռին են խաղալիք
Կամ վոչխում են ձեզ համար...

Ա՜խ, իմ հոգին խոովահույզ
Քեզ նըման միշտ ազատ,
Ծո՛վ, դու մոայլ ու անհույս,
Վոչխում ե հար մինաւոր։

150 ԲԱՂԴԸ ԴԱՐԲԻՆ

Շաինդ ու շաաաչ, վորտա ու թնդյուն,
Վիթխարի կայծեր,
Ծիրանի բոցեր...
Յերկինք ու յերկիր պատել և արյուն։
Աչխարհը դարբնոց, և Բաղդը դարբին,
Հսկա, անսասան, կուռ քաղկով սալին
Կռանն և զարկում, հարված առ հարված,
Մահու յեռանդով կուլը Բաղդը դարբին։
Ձեվ հրաբուխ քուրան՝ ժոռնք բորբոքված,
Ժայթքում և անվերջ փիշեր ու ցեղեկ
Կըռեվու ահեղ յերկաթը հրաշեկ։
Ձեվ գնում գալիս
Սալին և տալիս
Բաղդը յուր կռանն. հարվածն անսարրեր
Ձեվ չախչախում ե, և աեղծագործում
Տիեզերական սալի վրա կյանքեր
Անհագ դարբնոցի հրեղեն ծոցում։
Ապրեր են մեռնում, և նորից ահա
Առնում հարուբյուն այլ ազգեր մեռած.
Կուլը Բաղդը դարբին կըռանը հսկա
Անխորտակելի բազկովը բռնած
Զարկում ե, զարկում,
Կյանքեր և կոփում։
Արյամբ վողողված յերկիր ու յերկին,
Մարում են կյանքեր, վայ տկարներին,—
Մահու յեռանդով, հարված առ հարված,
Յուր մուրճն և զարկում կուլը Բաղդը դարբին։

ԲԱԼԼԱԴՆԵՐ ՅԵՎ ՊՈԵՄՆԵՐ

151 ՁԿՆՈՐՍ

(Գյոթեից)

Ջուրը վշվշուա՛, ջուրն սր պիղանուում.
Ձկնորսը նորա նստած եր ափին,
Անխռով, հանդարտ կարթին եր նայում,
Սառը քնի մեջ ընկղմած հոգին։
Ցեվ մինչդեռ կարթին նայում է նստած,
Ահա պատառվում, բացվում են ալիք,
Ցեվ դուրս է գալիս Ջրիցը հուզված
Նորա առաջև մի կույս գեղեցիկ։

Ցեվ անուշ յերգում, ասում է նորան.
«Ի՞նչու ես վարսում իմ հպատակներին.
Խորամանկ խելքով մանել ես գարան,
Մատնում ես նոցա մահացու տոթին։
Բայց լինչ յերջանիկ, յեթե իմանաս,
Ջրի խորքերումն ապրում են ձկները,
Դու ել ցած կիջնես, հենց լինչպես վոր կաս,
Ցեվ սիրով, քաղցրիկ կանցնես քո որեր։

Մ'էթե վոսկեշող արևն ու լուսին
Ծովի յուրա գրկումը չեն գովանում,
Ցեվ գեմքը նոցա Ջրի յերեսին
Ավելի չքնաղ չե պատկերանում։
Ցեվ պայծառ յերկինք գրավիչ չե քեզ,
Ցերը վճիտ Ջրումն է նա նկարված.
Ցեվ քո խակ պատկերն, յերբ այնտեղ նայես,
Քեզ չե հրապուրում դեպի ծոցն ալյաց»։

Ջուրը վշվշում, ջուրն եր դիպանում,
Վոտները թրջում բոթիկ ձկնորսին.
Անուշ ցանկությամբ հոգին եր լցվում,
Ասես այն սիրո հույզն եր առաջին
Ցեվ կույսը նորան չնրգում եր, թովում,
Ցեվ ձկնորսը խեղճ իրանից դնաց.
Ցեվ կույսն եր քաշում, ինքն ել հետևում,
Ահա և անհետ չրե տակ մնաց:

881

152 ԱՐՏԱՎԱԶԳ

Զարկեցէք, դաբբինները, կըռանը սալին,
Զարկեցէք կըռանը—շղթայքն ամբանան,
Անիծյալ արքայի կապանքն ամբանան.
Զարկեցէք, դաբբինները, կըռանը սալին։

Ահարկու ամպերը յեկան ժողվեցան,
Ծեր Մասսայց ճակատին սև քող փաթթեցին,
Գոռում և փոթորիկ գաղանի նըմանն,
Հառաչում, սուլում և կատաղած քամին։

Զարկեցէք կըռանը. խորունկ քարայրից
Ահա չար հոգմի հետ հասնում են ձայները...
Ցոլացավ վայրկը—արքայի աչքից
Դեպի վեր թռչում են բարկութեան կայծեր։

Կամի նա յեղանել վրեժխնդիր հոգով
Յուր անվերջ տանջանքի թուչնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նորա ծանրը շղթաներ։

Մըտերիմ գամփռները կրծում են կապանք,
Կրծում են անգադար կապանքն արքայի...
Արտավազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Յեվ դեռ շատ հեռու յե վախճանն աշխարհի։


Ցեվ անզոր չարության քո կուռ հարվածները
Դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին—
Մենք սպասում ենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաչա և յերկինքը մեզնում աշխարհին։

Բայց յեթե քարացած՝ մենք չենք լսելու
Նոր կյանքի կոչն հուժկու, և վերածնության
Սրբարար ավազան մեզ չև փրկելու,—
Արտավազդ, փշրվի թող մեր կուռ կըռան.

Մենք ել չենք զարկելու յերկաթի սալին
Թող կրծին զամփռերդ վոսքիդ չղթաները,
Արձակվին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի լուրելու կոտրած, ավե՛ր...

Բայց վո՛չ. հավատում ենք դեռ մենք փրկության,
Մեզ մի նոր յերկինքից նոր լույս կը բացվի,
Ցեվ սեսնում ենք ահա արդեն ծիածան
Մենք ազա՛տ, լուսավոր մի նոր վիճակի...

Զարկեցեք, զարբիններ, կըռանը սալին,
Զարկեցեք կըռանը—չղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցեք, զարբիններ, կըռանը սալին։



Վ. Բյուսովի գրի անվանաթերթը՝ նեղինակի մակագրությամբ

Հրատարակված է առաջին անգամ
Սեփականությունն ՀԽՍՀ Գրական Թանգարանի

153

ՅԵՐԳԻՒ ԱՍԵՑՔԸ

(Ուլանդից)

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի ղեյակ—
Հոյակապ եր, փառքն հասել եր մինչ ովկիան կապուտակ.
Շուրջը փռված ծաղկապսակ անուշաբոյր պարտեզներ,
Թարմ, զովաշունչ շատրվաններ ցայտում եյին վառ շիթեր։

Յեվ բազմահազթ այնտեղ նստող գոռոզ աքքան հոպշատ
Բազմած եր յուր գահի վերա մոտյլ դեմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհավիրք եր, կատաղությունն աչքերում,
Նորա ամեն խոսքը—կորուստ, արյուն եր նա միշտ գրում։

Այս ամրոցը յերկու ազնիվ յերգիչ գնացին մի անգամ.
Մեկն ալեզարդ, մին պատանի վոսկեգանգուր ու փարթամ.
Տավիղն ուսին, մի գեղեցիկ նժույգ հեծած ծերունին,
Նորա կողքին գնում եր առույգ ծաղկահասակ պատանին։

Ծերունին ասաց յուր ընկերին. «Պատրաստ յեղիր
իմ վորդյակ,
Մեր սրտառուչ տաղերն հիշիր, յերգիր պատա, համարձակ.
Յերգիր և վիշտ, և խնդություն մատաղ ձայնով դու հզոր,
Գոռ արքայի քարե սիրտը պիտի շարժենք մենք այսօր»։

Արքեն շքեղ և այուներարդ նոքա սրահումն են կանգնած.
Գահի վերա թագավորը և թագուհին են բազմած.
Նա սիրապանծ, ինչպես փայլը արյունավառ հյուսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսյակին լուսալի։

Զարկեց ծերուկն վոգևորված նուբը լարերին՝ մատներով,
Ճոխ արձագանք տվին նոքա լիահնչյուն ձայներով.
Ցնվ գնդվեց տաղ յերկնարժան չքնաղատես պատանին,
Ինչպես համբուռ վոգիների և խլացայն ծերունին։

Նոցա յերգն և գարուն և սեր, յերանավետ վոսկեղար,
Ազատության, խոսք ճշմարիտ, արիության գործ արդար,
Ցնվ հնշտության ամեն վայելք, վոր հուզում և սիրտ մարդկան,
Ցնվ այն ամենն, վոր կարող և մարդուն տալ տիպ վեհության։

Պալատական ասպետները ծաղու խոսքեր մոռացան,
Ցնվ անվեհեր դինվորները հզոր յերգից հաղթվեցան.
Խակ թագուհին՝ սիրտը շարժված, աչքին արցունք բերկրալից,
Ահա հանեց ձգնց յերգչին չքնաղ մի վարդ յուր կուրծքից։

«Գայթակղեցիք դուք իմ ազգը, կամիք խլել և իմ կինն»,—
Ահեղ գոչեց, դողաց ձարմով թագավորը մոլեգին.
Ձգնց սուսերն, ոդում ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Վոսկեհնչյուն յերգերի տեղ կուրծքից արյուն դուրս ցայտեց։

Ասես մրրիկ խկուլն ցրվեց այն ունկնդիր ամբոխին.
Ցուր վարպետի գլխումն հոգին փչեց դժբաղդ պատանին.
Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նստացրեց յերիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացավ վշտահար։

Ցնվ դուրս յեկավ, կանգնեց բարձր գարպասի դեմ ծերունին
Ցնվ ձեռքն առավ տավիղն, ամեն տավիղներից ձեծազին.
Ձարկեց նորան կճյա սյանը, փշուր փշուր խորտակեց,
Դեպի ամրոցն ու պարտեղներ սոսկալի ձայն արձակեց.

«Վայ քեզ, խրոխտ դու ապարանք. Թող վոչ մի ձայն
քաղցրության,
Լարի հնչյուն, յերգ չլսվի քո հարկի տակ հավիտյան,
Այլ սարսուկների յերկչոտ քայլեր և հառաչանք, հնծության,
Մինչ չար վոգին վրեժխնդրության քեզ գարձընե
սև աճյուն։

«Վայ ձեզ, և դուք անուշաբույր, գարնանածեղ պարտեզներ.
Տեսեք ահա մանուկ յերգչի դեմքին սառած տանջանքներ.
Թող սորա տեղ դուք թառամիք, ալբյուրներըդ ցամաքեն,
Գալ որերին Թող քար կարած և ամայի ձեզ տեսնեն։

«Վայ քեզ, նզովքդ յերգիչների, վայ քեզ անմրգ
մարդասպան.
Աբյուռնպսակ փառքի համար մարտրդ լինի Թող ունայն.
Թող մոռացվի քո անունը մշտապիշեր խավարում,
Ինչպես մանվան վերջին հառաչը, սեվ ձայն, ցնդի
Թող ոդում»։

Ծերուկն ասաց, և յերկինքը լսեց նորա պաղատանքը.
Պարիսպները փոշի դարձած, կործանված և ապարանք.
Բարձր մի սյուն դեռ վկա յի անցյալ ավուրց փառավոր.
Այն ել շուտով պիտի լինի մի փլատակ սպասող։

Ըրկա բուրմունքն այգիներից, շուրջը միայն անապատ,
Ըրկա վըտակ, սաղարթախիտ չը կա մի ծառ սուվերաշատ,
Ցնվ չե հիշում մի սարեկիր կամ յերգ անունն արքայի—
Այսպես ահա կատարվեցավ անեծքն ահեղ յերդչի։

154

ԳԵՐԻ ԱՐԱՓԻԼԸ

(Առաքիից)

Գերի արապին, ինչպես բանտարկված,
Բարձր պարսպի հետևն է փակված.
Կուզեր նա թռչել ու անցնել ծովեր,
Բայց, ափսոս, խնդճի խուզած են թևեր։

Ցավ ըզգում է նա յուր անզոր վիճակ
Ու պահում զլուխը թևերի տակ.
Կուզեր մարիկ տալ, բայց, ավաղ, ինչքա՜ն—
Բարձր պատերն են կանգնած առաջին։

Կարող է տեսնել նա յերկինքամբար
Ցուր մութ, նեղ բանտից, բայց ինչո՜ւ համար...
Ամպաղեղ թռչում է ազատ կարավան,
Ինքը՝ ծառանված զառըն գերությյան։

Ցավ նա անհամբեր սպասում և վշտով,
Վար մեջքին բռանին թևերը շուտով.
Վա՜հ, այն ժամանակ չար գերությունից
Կըթռչե ազատ աշխարհ լուսալից։

Ահա ցրտաշունչ աշունն և փչում.
Արապիները տաք տեղ են թռչում.
Թշվառ, ինչպես սարուկ, նա անհամարձակ,
Վշտապին ու վրդով, շըջում և մենակ։

Լսում է հանկարծ վերից կըընչյուն.
Այդ նորան ծանօթ կռունկների չէ չուն...
Ականջ է գընում չարաւանջ գերին
Ազատ յերամի ուրախ յերգերին։

Կամենում է նա նորից փորձ փորձել,
Ծուռած թևերը բարձր տարածել.
Բայց այլոց նման, ավաղ, նա ազատ
Չէ կարող սլանալ յերկիրն հարազատ։

Անբաղդ արագիլ, խեղճ կալանավոր,
Ել այն հաղթական դու չէս թևավոր.
Թե գորանան էլ թևերըդ ուժգին,
Ջոհ պիտի լինին անգութ դանակին։

889

155

ՅԵՐԱՇԽԻՔ

(Դամոն յեվ Ֆինտիաս)
(Շիլլերից)

Դիոնիսիոս բռնավորի մոտ գընաց
Դամոնն՝ առած հանդերձի տակ մի դաշույն.
Նրան կապեցին թիկնապահներն խիստ,
«Ասա, վերադ ինչո՞ւ էիր սուր պահած»։—
Յեվ նա մռայլ պատասխանեց կատաղած.
—Ուզում էի քեզնից քաղաքն ազատել,
«Աշխի վերա կարող ես լոկ այդ քավիլ»։

Դամոնն ասաց. «Պատրաստ եմ յես մեռնելու.
Կյանքիս խնայել յես չեմ խնդրում քեզանից.
Սակայն թե շնորհ պիտի անես յերբեք ինձ,
Գեթ յերեք որ ժամանակ եմ հայցելու,
Գընամ քրոջս յուր փեսային հանձնելու.
Բարեկամիս թողնում եմ քեզ գրավական,—
Թե չը գառնամ՝ իմ տեղ սպանիր դու նորան»։

Յեվ դու արքան մի նենգ ժպիտ յերեսին
Փոքր ինչ խորհեց, ապա դարձավ ու ասաց.
«Յես քեզ կը տամ յերեք որն այդ քո խնդրած.
Բայց պայմանի յեթե որերըն անցնին,
Յեվ յես յեկած դու չըլինիս դու կրկին,
Նա, իմացիր, քո փոխարեն կը մեռնի,
Իսկ քո պատիժն այնուհետև կը նըվիլ»։



. Հովհաննիսյանի ծնողները՝
Միջին յեվ Ամուր Հովհաննիսյաններ
[Հրատարակված առաջին անգամ

Ցեվ նա յևկավ յուր մահմին. «Ինձ արքան
Հըրամայից, վոր իմ մահվամբ խաչի վրա
Բավևմ հանդուդն այն խորհուրդն վոր հղացա.
Բայց ընդորհնց յևրևք ավուր ինձ պայման,
Վոր կատարևմ քրոջս հանդևան հարսնեկան։
Արդ դու մընա վորպես պատանդ արքային,
Մինչև յես գամ և վերջ տամ քո կապանքին»։

Հավատարիմ ընկերն նորան լուռ գրկից
Ցևվ պնաց, հանձնից բռնակալին նա իւան.
Մյուսն այնտևղից խևուշն բռնից յուր ճամբան։
Ցևվ հենց յևրրորդ արշալույսը կարմըրից
Շառագով քըրոջն յուր վևսայլին հասցըրից
Ու շուտ ընկավ, տապնաղ սրտում, նա ուղի,
Վոր պայմանով վերադրված ժամը չանցնի։

Տեղատարափ ահա անձրև յերկնքից,
Ցևվ թափվում են սարից ջըրեր հորդառատ,
Մըռնչում են վըտակներ ու հեղեղատ։
Նա ցուպ ձևռին հասավ գետը փրփրալից,—
Հորձանքն ահով պոկից կամուրջն ափերից,
Ցևվ ալիքներն վորոտընդոստ վերևցին
Մեծ ճայթյունով կամարները կամրջին։

Ցևվ հուսահատ կանգնած և նա պետափին.
Հևռու, հևռու աչք և ձրդում անձկալից,
Ցևվ ոդնության ճիչեր թռչում են կուրծքից։
Բայց նավակներն անդարժ անքուն յեկերքին,
Ցևվ նայում և նա ցանկալի ցամաքին.
Նավավարներն անցնելու սիրտ չեն անում—
Ալիքները կատաղում են, ծովանում։

Գետակերքին կանգնած կոճուճ և մենակ,
Աղաչում է Զեսին ձեռները մեկտած.
«Վա՜հ, առնձի՛ր դու ալիքները ծովդնած.
Ժամերն անցնում, ճաշին մոտ է արեգակ —
Ցավ լեթե նա մանի, ու չես գեռ քաղաք
Զբժամանեմ՝ տրված խոստմանս համաձայն,
Բարեկամիս էլ հուշս չըկա փրկութ[illegible]ան»։

Սակայն հեղհեղն հորդանում է անհի.
Կոհակն անդ զարնըվում է կոհակին,
Ժամերն անցնում, հաջորդում են մեկ մյուսին.
Ցերկյուղից նա սիրտ է առնում ու հոգի,
Ցավ փրփրագել հոսանքի մեջ վեսակի
Նետվում, պատռում է հորձանքն այն մոլեգին.
Աստվածներից մեկը գըթաց խեղճուկին։

Հասավ մյուս ափն, հառաջ գընաց աչնահոգից,
Շընորհակալ իրեն փրկող աստուծուն.
Բայց ահա տես, նորա հանդիպեն են յերկուսի
Ամազակներ խիտ անտառի մութ խորքից
Ցավ կարում են նորա համբան. աչքներից
Մահ է թափում, և սպառնալից լեզուով
Ուզեորի զսպում են գնացքն հազիվ։

«Ի՞նչ եք ուզում» սարսափահար գոչից նա.
«Ա՜հ, չես չունիմ վոչինչ բացի իմ կյանքից,
Այն էլ արքան պիտի առնի ինձանից»։
Ցավ խըլում է մեկի ձեռից լեռան պա.
«Ի սեր մաերմիս, վո՛հ, գըթացեք ինձ վերա»,
Ցավ յերեքին գըլտրում է նա գետին
Հըզոր բազկով և փախցընում մյուսներին։

Կիպիչ արևն արդեն խանձում է յերկիր,—
Յեվ ուժասպառ, ճանապարհից ջարդված.
Կանգ է առնում ու կանչում է նա աստված.
«Վո՛ւյ, դու, վար ինձ չար ձեռներից փրկեցիր
Յեվ կատաղի այն հոդեդից հանեցիր,
Վո՛ւյ, դու է այժմ ինձ մի մատնիլ կորստյան.
Բարեկամիս պատճառ չլինիմ ծով մանվան»։

Բայց ահանջ դի՛ր. ահա ըղնում է վրտակ
Այնտեղ ճոտիկ, մեղմ կարկաչով արծաթի,
Յեվ նա կանգնում, լսում է ձայնն անձկալի.
Յեվ տե՛ս, ժայռից խոխոջելով ու արագ
Թափվում է ջինջ մի կենսատու աղբերակ.
Յեվ նա ուրախ խոնարհում է դեպի ցած,
Զովացընում է յուր մարմինը թալկացած։

Արեգակը սպաթիների յեռից
Ախտ ծառերի հախ սավերներն է սփռում
Մարգերի վրա կանաչափայլ վառվռուն։
Յերիուս ճամբորդ դնում են նորա առաջից.
Յեվ ըշտապով կամի անցնել նոցանից
Ու լըսում է, վոր խոսում են յուր առաջ.
«Այժըմ արդեն նորան պիտի հանեն խաչ»։

Յեվ յերկյուղից արագ փոխում է քայլերը
Յեվ անհոնգիստ հառաչում է ապտնապով.
Լուսավորված վերջալույսի շողերով
Սիրակուսան ցուցնում է յուր կատարներ.
Ֆիլոսոփաստս, վոր Դամոնի սրընկերն եր
Հավատարիմ, ահա յելավ նրա դիմաց
Յեվ յուր սիրոջը ճանաչից սարսափած։

«Դարձի՛ր դու հետ. չես ապառիլ ընկերիդ,
Հազ ամբ ուրիմն դու քո՛ անձի վերկուբյան.
Նա հիմա խակ գոհ կըլինի չար մահվան։
Ամեն մի ժամ նա սպասում եր քո դարձիդ,
Ցավ հավատով վառած եր միշտ խոստմունքիդ.
Ցավ անընդհուն նորա այն սերտ հավատքին
Բռնակալի ծաղրը չհալվեց դառնապին։

Ցնծե աթդին ուշ և, և ել չեմ հասնի,
Վոր չես նորան իրը ազատիչ մոտենամ,
Կերթամ, վոր դնի մահով նորան միանամ.
Ցավ արյունռուշտ բռնավորը չըպարծի՛,
Թե դրժող եմ ընկերական չես ուխտի.
Աբդ նա չերկո՛ւ կյանքի զահիճ թող դառնա
Ուխտանըվեր լոկ թող սիրո հավատա»։

Աբեզակը մայր և մտնում, և ահա՛
Ծաչը արդին նշմարում և նա կանգնած,
Նորա շուրջին ել խուռն ամբոխը բերան բաց—
Բարեկամին բարձրացնում են խաչի վրա.
Պատառում և խուժանը նա չըվախա
Ցավ վորոտուն. «Ի՞նձ, ո՛վ զահիճ, դու կախի՛ր.
Ա՛յստեղ եմ չես, իմ պատանդիս արձակի՛ր»։

Ցավ բազմությունն ապշեց, մընաց հիացած.
Ցավ գրկախառն ընկերներն են համբուրվում
Ու վշտից ու բերկրությունից արտասվում։
Աբցունքներից և ամբոխի աչքն և թաց,
Աբքայլին ել անցքն հայտնեցին չըլսված.
Մի մարդկային զգացմունք նորան համակեց,—
Ցուր մոտ գալու նոցա հրաման արձակեց։

Յեվ սքանչացած արքան նայում յերկուսին
Ու ասում ե. «Հաղթությունը դուք տարաք,
Դուք՝ վոր հիմա իմ սրտին ել սիրացաք.
Համաստարմությունն ահա չի՛ ըլնորք սին,
Յեվ թե հավան կը լինիք իմ աղերսին,
Ձեր մեկ նաև ինձ բարեկամ դուք առի՛ք—
Յերկու ևյիք, այժըմ լինինք մինք յերեք»։

[895]

156 ՊՈԻԿՐԱՏԵՍԻ ՄԱՏԱՆԻՆ

(Շարունակ.)

Տանիքի վերա նա բարձր կանգնած
Նայում եր, հոգին հրճվանքով լցված,
Իրեն հպատակ շքեղ Սամոսին։
«Հընազանդ է ինձ այս ամենը, ահա.
Մոատալանի՛ր, վար չերջանիկ եմ ես»,—
Նա Յեպիպատոսի ատաց արքային։

Վայելում ես դու յերկնից շընորհներ—
Ահա վաղեմի քո բաղդակիցները
Քո պայծառի ուժին ընկճվեցան։
Բայց կա վրիժառու մեկը տակավին.
Յեվ մինչ կենդանի յես քո թշնամին,
Յերջանիկ քեզ չի՛ ասիլ իմ բերան»։

Յեվ դեռ չեր արքան յուր խոսքն ավարտած,
Ահա Միլեսից հրեշտակն ուղարկված
Յեկավ, ավետիք բերից իշխանին.
«Թող, ասեր, բորբոքվի գոհերի ճենճերը,
Յեվ գալարագեղ վարթ գալիենները
Հյուսվին փառավոր պըսակ քո գլխին։

«Տիգանար արդեն ընկավ թշնամիդ.
Հաղորդում է այս լուրն ուրախաձիթ
Պալիդորն ազնիվ, դրավարըդ քոյդ։
Այսում է, բանում նա մի սև անոթ,—
Յեվ արյունաթաթախ գլուխը ծանոթ
Սոսկալով տեսան երանք թրանց առաջ։

Յեվ սարսուռ ղպաց, նահանջեց արքան.
«Բայց մի՛ հավատար դու յերչանկությանդ,—
Մտահոգ ասաց յուր բարեկամին.
«Հարուստ նավերիդ—այդ մի մոռանա—
Բաղդըն և լողում նենգ ալյոց վերա.
Կը փշրե՞ նոցա փոթորիկն ուժգին»։

Յեվ հազիվ թե նա յուր խոսքն ավարտեց,
Մի ուրախ գանչյուն նորան ընդհատեց,
Վար ծովեզերքից հասավ թնդալով.
Ծանրացած գանձով ոսար աշխարհի
Դառնում են ահա յերկիրն հայրենի
Նավերն՝ իրը անտառ խիտ կայմերով։

Ապշեցավ մընաց ու ասաց արքան.
«Հայոզում և քեզ այսոր ամեն բան.
Բայց ըզգուշացի՛ր հեզեզուկ լաղիից—
Ահա կրնաացվոց գնդիր վինավոր
Պատրաստում են արդ վըտանգ քեզ համար.
Արդեն հեռու չեն նոքա այս ափից»։

Յեվ խոսքը րերնից դեռ նոր դուրս յեկած՝
Տեսան նավերի զրուշները պարզած.
«Հաղթությո՛ւն»,—հազար ձայներ գոչեցին—
«Այլ ևս թշնամու չըկան արհավիրք.
Կրնացիներին ցրվից փոթորիկ,
Յեվ հատավ վախճան զոռ պատերազմին»։

Սարսափով լսից հյուրն այս ավետիք.
«Իրա՛վ, պիտի քեզ ասեմ յերջանիկ։
Վախում եմ սակայն յես կյանքիդ համար.
Աստվածոց նախանձն անհելի յե միշտ,
Յեվ ուրախություն վոչ յերբեք անվիշտ
Հոդածնի բաժին տեսել և աշխարհ։

«Հաչողում եր միշտ ինձ ես ամեն բան.
Բոլոր գործերումս ինձ միշտ անբաժան
Հոմանավոր եր շընորհն յերկնային։
Սակայն ունեյի ժառանգ սիրասուն—
Յես տեսա նորա մահն անպատրաստին.
Պարտքըս հատուցի իմ ճակատագրին։

«Արդ ազատ լինել թե կամիս յամենից,
Ազատչիր անմահ դու ասավածներից
Շընաբնել և վիշտ ընկեր քո բաղդին.
Յես դու չեմ տեսել, վոր մեկի վերան
Միշտ լիաձեռնն մինչև յուր վախճանն
Աստվածներն ուրախ պարգև թափեին։

«Յեվ թե չե լսում աստված քո խնդիր,
Դու բարեկամիդ խըրատն միտ դիր.
Ինքըդ քո գլխին կոչի՛ր դու փորձանք,
Յեվ դանձերիդ մեջ չեթե պատվական,
Սրտիդ սիրելի դու ունես մի բան,
Զգի՛ր, թո՛ղ տանի այս ծովի հորձանք»։

Յեվ Պոլիկրատես սոսկալով ասաց.
«Իմ այս մատանին կղզուս մեջ թանկած
Բոլոր գանձերիցս և ինձ սիրելի.
Կամիմ այս գոհել յես աստվածներին—
Թերևս հաչտ աչքով նային իմ բաղդին»։
Յեվ ծովն և նետում գոհարն յուր մատից։

Դեռ նոր եր բացվել հալորդ առավոտ,
Մի ձկնորս մատավ թագավորի մոտ,
Յեվ ուրախությունն փայլում եր դեմքին.
Տեր, այս ձուկն այսօր ընկավ իմ ուռկանն,
Չեմ բանել դեռ մինն յես սորա նըմանն.
Այս ընծա լիցի յես, իմ իշխանին»։

Ցեվ յերբ խոնարհն ձուկը կոտրեց,
Թագավորի մոտ ապշած նա շտապեց
Ցեվ խիստ զարմանքով գոչեց ու ասաց.
«Տեր, ահա տես քո սիրած մատանին,
Ըլատա նոր բերած յես ձկան փորին։
Վ.Հ., ինչ անսահման բաղդ և քեզ չնորհված»։

Ցեվ հյուրը զարձավ, սրտուքն ահ ու դող.
«Ել այստեղ», ասաց,—«մընալ չեմ կարող.
Ալ ես բարեկամ դու չես ինձ համար—
Կորուստդ են խնդրում ասովածներն յերկնից.
Փախչում եմ՝ քեզ հետ մեռնելու վտանգից»։
Ցեվ շուտ նավ նստավ, ընկավ ճանապարհ։

[895]

157 ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Ցերկնից յերկին և յերկիր,
Ցերկնից և ծով ծիրանի,
Ցով յեղեգնիկը կարմիր
Ցերկնից ծովում ծիրանի։

Ծուխ և դուրս գալիս յեղեգան փողից,
Բոց և դուրս գալիս յեղեգան փողից.
Բոցն և պատել կարմիր յեղեգնիկ,
Բոց և զարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,
Վահագն ահա—մանուկ գեղանի։
Բոց մորուքով,
Հուր շրթունքով
Հուր հեր գլխին—հրեղեն պսակ,
Ցով աչերն են զույգ արեգակ։
Ալեծուփ ծովի ծիրանի ալիք,
Գնում են գալիս, ծեծում են ափունք.
Ահեղամռունչ գոռում է մանկիկ,
Սաստում է ալյացն հրավառ շրթունք։
Վահագն ծնավ, լռեցե՛ք, ալիք.
Դու ծովահալած, զարար ահ, մրրիկ։
Թևերն վոսկեհուռ, հրահեր բաշով
Նժույգը տակին՝ սլացավ վերև—
Ցերնսեգ ծածկի՛ր համեստ շղարշով,
Տես, ով է գալիս, և դու, հնար—արև.

Գլուխդ ալևոր, քաջածին Մասիս,
Դու ել խոնարհիր, վահանդ և պալիս։
Յիրկինք ու յերկիր և ծիրանի ծով
Ամեաում են քեզ, յաւիրի դու ծով՝
Ցնծա՛, բյուրիւղաղ Հայաստան աշխարհ
Փրկութեան արև վահանիդ տեսար։

904

158 ԱՍՐԱ

(Հայկեանից)

Ամենայն որ իրիկվան դեմ
Զքնաղ դուստրը թագավորի
Շատվանի մոտն ի դնում,
Վորից ջուր և ցայտում վճիտ։

Մատաղ ըսպուհին ամենայն որ
Շատվանի մոտն ի լինում,
Վորից ջուր և ցայտում վճիտ.
Ու խողում և նա սրնցով։

Մի յերեկո վիմից նորան
Ձեվ ըշտապով կուգար ասաց,
«Ձես անուշդպ կուգամ պիտանալ,
Քո հայրենիքն ու քո ծագում»։

Ձեվ սպուհին ասաց. «Մոտամեզ և
Իմ անունը, Ձեմենցի յեմ
Ձեվ սերված եմ սպրա ցեղից,
Վորոնք սիրուց մեռանում ևն»։

[908]

Վահագնի ծնունդը

(բալլադա)

Երկրեց Խրիմ և Խրիմ
Երկրեց և Հոյ Ծիրանի.
Եւ Խրիմ-Ծիրանի Ջրատիպ
Երկրեց Հոյոտն Ձիրանի։
Ձո-ի և տու-ի գալս Խշմիզան ֆուզեի.
Ֆոյ և տուզս գալս Խոյ-Ջան ֆուզեի
Ֆոյ և գաւեի ֆարեն Խրիմ-Ծիրանի.
Ֆոյ զ-տուզեի և Հոյ Ձիրանի
Ֆարեն Խզոյ ան Ֆի Տուզեի.
Վահագն ան - Տուն-ի Ծիրանի.
Ֆոյ Տզուտ,
Վերտուրտուզեի
Հո-ի հո Ձիրի - Խրիմ-ի ֆ։
Եւ այրն ի Հոյ Ասի-Ծոյ։

«Վահագնի ծնունդը» բալլադի ինքնագրի հեղինակային պատճենի սկիզբը
Հրատարակվում է առաջին անգամ
Սեփականությունն Հ.Պ.Հ. Գրական թանգարանի



ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

159 ԿԱԼԱՆԱՎՈՐ

Հեռու չե ինձնից արևի լույսը,
Ամպրոպ և կարկինք, մոայլ և վրաս...
Անդադար խարում և ինձ իմ հույսը,
Հեռու չե ապատ աշխարհն ու անհաս։

Խավարով պատած մի մութ անկյունում,
Անցնում են որերս լացով ու վաղով.
Ուրախն և ինձ միշտ ընկերն՝ չունեմ ես խնդում,
Ահա, ո՞ւմ համ ապասում քո տառապանքով...

Դու ապատություն, սուրբ ապատություն,
Իմ կյանք դու, իմ հույս, դու իմ նպատակ
Արդյոք կերբ պայծառ քո հորիզոնում
Ապաստան ալիտ ասա դու ինձ ավերակ։

880

160 **ՆԱՎԱԿ**

Վառվում են աստղերը յերկնքում,
Լուսինը լողում և հպիվ
Փչում և զեփյուռը մեղմիկ.
Նիրհում է բնությունը լուսթյան...

Թեթևաշարժ ամպերի սավերը
Անցնում և յերկրքրի վրայից.
Հանդարտիկ ջրի մեջ յերկինից
Խաղում են վոսկեվայլ շողերը:

Անսահման ովկիանում գիշերին
Թռչում և նավակը սրընթաց,
Դիմում և յերկիրը ուխտած.
Ուղեցույց և նորան հույսն անգին:

880

161 **ԱՃՈՒՆ**

Սիրուն գարուն, վոսկէ որեր դուք անցաք
Սիրո ժամեր, ուրախ րոպէք, հեռացաք.
Յեկաւ աշուն տրտմազգեցիկ չարագուշ
Զարդից անտառն զրկեց յերկից նա անուշ:

Սոխակ, ո՛ւր ես... ո՛ւր ես, սէր դու և հանգիստ
Անհոգս ուրախ դու մանկութիւն որ նայել միշտ...
Յերկինքն չունի յուր ժպիտը սիրալիր,
Անզարդ, անշո՛ւք, ավազ, ահա յուրտ յերկիր:

Գարունն անցաւ... սէր չկա և սոխակը
Անտառն թողած թոռավ անցավ գետակը.
Թառամեցան ծաղիկները, տերևներ
Վայր են իջած, կոծով թողել մերկ ծառեր...

Վա՛հ, և դու, սիրտս, դու քարացար, սառեցար,
Գարունդ անցավ, աշուն յեկավ, վորբացար.
Բայց քեզ չուտով (թե դերեզման դու իջար)
Սև գետինը քեզ կրկզվի մայրաբար...

162 ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎ

Տխրագին քամին սուլում է, հեծում,
Ծառի վրա միակ տերևն տատանում.
Արդեն յուրտ ձմռան փչում է շունչը,
Լռում վտակի խաղաղ մրմունջը։

Անտառն մերկացած յուր զարդ գեղեցիկ,
Կանդնած է այլևս կին սգազգեցիկ.
Ցեղ քամին փչում հեծում է սրտում,
Ծառի վրա միակ տերևն տատանում։

Մահու խորհ վորպի ճնացել է մոգված,
Վերջին շնչի վրա խեղճ տերև չորացած...
Ձմեռը մոտ է. նա դողդողալով
Կպչում է վոսկին հարազատ սիրով,
Դժվար է տես բաժանվիլ վոսկից,
Հեռանալ անխոսք սիրուն անտառից...

Բայց գարձյալ փչեց քուռն հողմը սաստիկ
Բաժանեց հարազատ վոսկից տերևիկ...
Ցեղ ծառը վերջին տերևից զրկված
Անսփոփ մենակ սգավոր մնաց։

163 ԱՅՆ ՅԵՐԱ՞Շ ԵՐ

Յես քնած եյի. Նինջս անուշ եր,
Ինչպես նիրհը լուռ հովտի.
Թռչնոց կերգը ձեզմ քնքուշ եր,
Ջաղցր եր լուրուժ վարդենին։

Վոսկի կերազ. կերանություն
Բաց եր աշխարհն առաջիս,
Ցեվ ժպիտը հավերժ գարնան
Ջվարթ փթթած եր շրթունքիս։

Նինջս խաղաղ եր ու անվրդով,
Յերազս անուշ. կես անսա
Իմ հոգյակը ուրախ գեմքով
Հրեշտակ իջավ ինձ վերա։

Սիրտ անգին համբույր գրոշմեց
Իմ վառվռուն շրթունքին,
Շուշանագեղ ձեռներն պարզեց
Ցեվ ինձ գրկեց քնքշագին։

«Արթ գիրկս, ասաց նա ինձ,
Իմ սիրելի թանկագին,
Հեռու գնանք այս աշխարհից
Յերջանկության սուրբ յերկիրն»։

«Ֆադդր յերգերով սիրանվագ
Ինչ քուն կընեմ իմ գրկում.
Ուրախ կանցնեմ անուշ մեր կյանք
Ծաղկազարդար մարգերում»։

Յետ զարթնեցա... աչերս լաց են...
Ասացիք այն յերազ եր,
Բայց շրթունքս դեռ այրվում են,—
Ի՞նչ ջերմագին համբույրներ...

880

164 **ԱՐՏՈՒՏ**

Վաղջ գիշերը ՝ինչ[ւկ
Տխուր անցուցած,
Արտուտը յերգեցիկ
Բարձրացավ սթափած։
Շողերը վսկեվառ
Վաղջուընեց սիրուն
Յեվ յերկնքում պայծառ,
Շքեղ զարդարուն,
Ինքշաձայն սկսեց
Յուր յերգն վոլորուն.
Իմ սերն եվ զարթնեց
Յերգով իմ սրտում։

880

165

* * *

Ծաղիկ թառամած, ծաղիկ չորցած
Ինչո՞ւ եմ քեզ յես սիրուն.
Ցերբ տեսնում եմ քեզ իմ առաջս
Ե՞ր և սիրտըս դող ընկնում,
Ե՞ր եմ քեզ սիրում...

Վհ՜հ, ինչ քաղցր և քո հիշատակ
Ինչ թանկ, չորցած դու ծաղիկ.
Ո՞վ քեզ տըվավ ինձ, հրեշտակ,
Թե կուլա չքնաղ վիոլիկիկ,
Ահա իմ սեր ծաղիկ։

Կուլա հրաշագե՛ղ, հրեշտակ վեմքով,
Վո՞ր այս ծաղիկն ինձ տվիր,
Գիտեա՞ ծաղիկը ինչ արցունքով
Միշտ տեսնում եմ սիրալիր...
Հոգյակ, ինձ հիշիր...

Դու՛ իմ սերն ես, ծաղիկ սիրուն.
Սիրում եմ քեզ չերմ սրտով,
Թեև չորցած դու այս ևղում
Լուռ ընկած ես հայացքով,—
Կից եմ քեզ հոգով։

166 ԱՀ, ԻՆՉ ԵՄ ՈՒԶՈՒՄ...

Ահ, ինչ եմ ուզում ինքս էլ չգիտեմ.
Ցեղս ո՞ւր եմ ձգտում անհանգիստ հոգով,
Ցավ ինչ և ճնշում սիրտս—չգիտեմ,
Չգիտեմ... սիրտը պատած է մոայլով...

Ամպ, լերկ լիքը շուրջս սառած է
Հեծում է հոգմը, տխուր բնությունն...
Բայց մթին ազնիվ գիտցմունք մեռած է,
Թմրած իբր յերկիր զգայուն սրտում:

Սիրտս ցավում է, հանգիստ է խնդրում.
Դպրի լոզ մըրիկ, յերկինքը պարզի,
Թող խաղաղ հանգչէ խոնջած բնությունն...
Թող վախճ աչերն սիրտը ու հոգի:

Ահ, ինչ կուզեյի մոռանալ աշխարհ
Ու քաղցր քնով հոգիս հավիտյան...
Բայց ինչ և սիրտս տանջում անդադար,
Հեռու յե գեռևս իմ մութ գերեզման:

[880]

167

* * *

Թու իմ սի՛րտը կամիս տեսնել,
Ի՛նչ է արդյոք նորանում.
Անպին գանձ է այնտեղ պահած,
Սրախս դաղտնի խորքերում։—

Զուրկ արևդակ հրաշավառ,
Զուրկ վարդ, դատերք հարավոյ.
Գարնան ժպիտ, յերկինից համբուրյ—
Այն պատկերն է իմ սիրո։

880

168 **ԾՈՒՅԱՆ**

Նորածագիկ չքնաղ շուշան,
Վըճիտ առվին խոնարհած,
Ե՞ր չես նայում սիրուն զարնան
Կապույտ յերկինք վվարթացած։

Յես խոնարհած՝ ականակիտ
Միշտ սեսնում եմ վտակում
Պայծառ աստեղդ քաղցրիկ ժպիտ.
Ինաղը կայտառ յերկնքում։

880

169 ԱՆԲԱՂԻ ՏՐՏՈՒՆՋ

Դոյութիյանըս ծանր բեռին
Տակ եմ իմ բաղդը կյանքըս մաշից...
Ականջ չդրից իմ թուխյ ձայնին
«Հուսա՛, անբա՛ղդ, հուսա՛» կանչից։

Ցես լսեցի... տեսա միայն
Հարվածնեք են իջնում գլխիս...
Եվ վոչ մի խոսք սիրուկան.
«Հուսա՛» լսեցի ձայնը վերից։

Ցեվ տառապնքը իմ սաստկացավ,
Ցեվ բաղդքիվ չես կամեցա...
Նորից նուչնը կրկընվեցավ.
«Թշվառակա՛ն, հուսա, հուսա»

Ցեվ անդունդ եմ առաչես տեսնում
Մի փոքր եվ չես կորա...
Զաբ բաղդըս միշտ նուչնն է պնդում.
«Ի՞նչ գանգատ ես, խղճուկ, հուսա»...

170 ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերջանիկ որիր, յերջանիկ որիր,
Սիրո ծաղկաբույր վոսկի յերազներ,
Անցաք գնացիք դուք քամու նման,
Տարաք արցունքներ, հույս ուրախութիչյան...
Յերբ անհոգ լարերն անուշ բերկրութիյամբ
Զվարթ ժպիտով իրր յերկինք անառակ
Կանաչ պարտիզում հրաշափեղ կուսին
Փառեյին յերգել սերը խնդագին։
Բայց այժմ բնկճեկված քնարն խեղճ յերգչի,
Կորցրած իզեալն չքնաղ յուր սրտի,
Խուռ հառաչանք և մխայն արձակում
Յեվ սիրա պատառոտ արցունք անկաւում։

880

171 **ԱՌԱՋԻՆ ՍԵՐ**

Հիշում եմ լուսնի կախարդիչ փայլը,
Հիշում եմ պայծառ աստղերն յերկնքում,
Սիրուն ամպերի թեթևաշարժ քայլը,
Ցավ ներքը բնության ծայրերի սավերում...

Հիշում եմ ինչպես դու սիրատենչիկ
Ամոթխած դեմքով հետս եյիր ճամում...
Ցավ յես հիացմամբ մերթ դեպի յերկինք
Ցավ մերթ քեզ վրա աչք ձգում:

Մերթ տեսնում եյի քո դեմքի վրա
Ինչպես դյութական ցույց աստղեր փայլում,
Ցավ մերթ կուզեյի պետհնալ ինչ կա
Քո սրտում և ինչ և քեզ խռովում...

[880]

172

* * *

(Դյութեյից)

Ոգն անվրդով է և խաղաղական
Քնով հանգչուած են դաշտերն ամայի.
Յեվ անուշ լուսիսնիք և մի անսահման
Թեթև թափանցիկ մեզ յերկնքից.
Վահ, պարգեւեցիք հանգիստ յերկնային
Աշխատավորի վաստակած գլխին.
Որոր ասելով քունք նորան
Դալար ու քնքուշ մարգերի վրան.

Ահա և գիշեր. յերկինքում ցլված
Յեվ տարածված են բյուրավոր աստղեր,
Փայլում, յողում են վորպես հուր վառված,
Այստեղ ու այնտեղ արձակում շողեր.
Ներհում և գետը. ջրերը՝ վճիտ,
Յեվ ջինջ և յերկինք. գիշերը՝ պայծառ—
Յեվ քունը բնութեյան գեղեցկաժպիտ,
Տես, պահպանում և լուսին պերճափառ.

Արդեն և ժամը հասավ ննջելու,
Յեվ ուրախութեյուն և վիշտ հեռացան.
Դեռ կրկին և քո հոգին զարթնչելու
Այդ նորեն փայլին հավատն որվան.
Ահա և շունչը հովիկ գիշերի
Բլուրի վրա փչից հաճելի,
Յեվ արծաթափայլ ճեպմ ալյակներով
Արան և ծածանվում լիքը հասկերով.

Հավատա լուսին և հեռու թախիծ—
Յեվ ամենայն ինչ մատչելի յի քեզ։
Այդ թեթև նինջը թոթափիր քեզնից.
Վորպես ըմպելի նա հաղթուած և մեզ.
Յեղիր դու կտրուկ և մի խռովիր
Ամբոխի առաջ անզոր, դանդաղկոտ.
Նա յի հզորը, վոր անախտակիր
Յեվ խելացի յի և չի վհներոտ։

881

173 ԱՆՄԵՂ ՁՈՒՆԵՐ

Նայի՛ր. խոնավ գետնի վրբա
Նիհար գեմքով վշտաբեկ
Ո՞վ է ընկած գերդ անզգա
Այս անկյունում կիսամերկ.

Նայի՛ր, խորունկ կնճիռներով
Նորա հակատն է ծածկված...
Անգութ բաղդի հարվածներով
Նորա սիրտը չարչարված։

Յեվ թշվառը լաց է ուզում,
Բայց... ցամաքել են արցունքները.
Նայի՛ր, առջևն իր սիրասուն
Մեռնում են խեղճ զավակները։

Ա՜խ, մեռնում են, լսո՞ւմ եք դուք,
Բարի՛ մարդիկ, ողնեցեք...
Ա՜խ, մեռնում են սովալուկ,
Բարի՛ մարդիկ, հաց տվեք։

Անտուն անտեր թափառական
Չալածված են ամենքից
Բարի՛ մարդիկ, պատսպարեք
Նոքա կամին ձեզանից։

Բայց դո՛ւ, անսիրտ գայլ գիշատիչ,
Ծցած են քո ականջները,—
Դու չես լսում սիրտ պատառող
Ազիզդրմ այս ձայները

Դու վոսկեփայլ ապարանում
Անցնում ես պերճ քո որեր.
Յեվ խիղճդդ սև քեղ չե տանջում,
Յեվ քո հոգին անեղներ.

882

174 * * *

Դու հարուստ ես, կյանքդ անհոգ,
Վայելչութիւն ես սիրուն.
Դու չգիտես ընալ մտածել
Թե՞ինչ է քեզ սպասում։

Ցույց ես տալիս քեզ միշտ վսեմ
Քո ցանկութիւնն այդ է միայն—
Քո առաջին պիտի սողա
Տգետ անկիրթ ցած խուժան։

Դու չես ուզում հավասարել
Քեզ ճգնասեր գյուղացուն,
Որ՝ և նորա յերակի մեջ
Ազնիվ արյուն չե վազում։

Բայց լինձ ասա՛, ով մեծամիտ.
Ի՞նչով նա ստոր և քեզնից,
Ի՞նչ և արդյոք նորա մեղքը,
Որ չե ծնել մեզ ազգից։

Կամ մի՞թե քեզ քո արծաթը
Տալիս է այդ իրավունք.
Դու՛ որ չունիս մի սիրտ բարի
Մի խղճալ, համոզմունք։

Դո՛ւ վոր գիտես անմտաբար
Պաթծել քո կեղծ կոչումով։
Թեև իրոք դու թշվառ ես,
Տղա՝ մաքիդ տարաղով։

Դու վոր այն խեղճ ամկի հացը
Իր բերանից ես կտրում,
Յեվ լսելով նորա լացը
Անհոգ, անվիշտ խրխնջում։

882

175 **ՀՐԱԺԵՇՏ**

Առանց մի խոսքի, առանց արտասվաց,
Նա լուռ ու ցնծկիկ, բայց սիրտը լցված
Գեղեցիկ գլուխն իր սիրականի
Կրծքին խոնարհեց։ Փայլը աչերի,
Ճակատը գունատ, այլվող շրթունքը
Վկայում են նորա ներքին հուզմունքը։
Շքեղ գանգուրներ ցրված ուսերքին,
Մեղմ ծածանում և գաբնան զով քամին.
Նա լաց և ուզում, բայց արցունք չկան.
«Յիքրը քեզ սպասեմ, ընկերը սիրական»։
—Ա՛խ, մի խոռվիր, հոգյակ իմ անգին,
Սիրտ այս քաղցրը վայրկյանը վերջին.
Իմ հեաին խոսքը. իմ ուխտը լսիր,
Քո սերը, հավատ դու անխախտ պահիր։
Յերդվում եմ ահա, կամ քո տեսութեան
Ազատ հայրենիք ազատ պիտ դառնամ
Կամ ոսոր յերկրում պիտի իջանիմ
Սև գիրկը հողի, նեղ սառը շիրմիմ։

176 ՄՈՒՐԱՑԿԱՆ

Ցերը վոր բաղմած տաք սենեկում,
Ուր ճոխ այնպես ամեն բան
Վոսկի փայլով աչք և գրավում—
Փարթամ արդյունք շռայլության—
Ձեր ականջը մեղմահնչյուն
Փայփայում և զաշնամուր,
Ցեվ անխռով կերջանկության
Վալևլում եք կերկնատուր,—
Մտածեմ եք՝ թե դուշն ժամին
Դողդողալով ձեր դռան
Մեկը կանգնած և լալագին,
Ձոհ ձի թշվառ կացության.
Մտածում եք թե մինչդեռ դուք
Ձեր ճաշակն եք բթացնում,
Նոքա բաժին—լոկ արտասուք,
Լոկ հառաչանքն և ցնում...
Վո՜հ, սիրտ ունիթա, դու մեծատուն.
Ծո փշրանքով սեղանի
Նա կըպահե մի ամբողջ տուն
Մի վողջ ամիս, մի տարի...
Վո՜հ, սիրտ չունիթա, չի՞ նորանից
Ծո շունն ել և կերջանիկ.
Բայց և նորա նուշն մի հողից
Ցեվ քեզ ստեղծի՞լ չե կերկինք...



Հ. Հովհաննիսյանը Մոսկվայի համալսարանի ուսանող
1886

Հրատարակվում է առաջին անգամ

178 **ՅԵՐԳ**

Հասէր, ո՛վ կույս աչափեզ,
Վերջ դի՛ր խոսուն իմ կրքիս.
Տո՛ւր այտերըդ այդ գունով
Սեղմեմ այրվող շրթունքիս։

Թո՛ղ այդ կրծքիդ ձյունափայլ
Դնեմ գլուխս բորբոքված,
Յեվ ամեն մի գարկ հուզյալ
Լսեմ հոգով սիրաղպաց։

Արի՛, ո՛վ կույս, և բա՛ց ինձ
Դըրախտ սիրուն աչերով,
Յեվ պլասան հեշտալից
Լըցրո՛ւ սիրտս քո շնչով։

178 ԱՐԵՎ

Արև՛, արև՛, ո՞ւր փախար,
Մեղնից արդյոք խռովեցար.
Ինչո՞ւ թուխ թուխ ամպերում
Այդպես դու շուտ թաք կացար։

Դու ծածկվեցար դնացիր,
Անմխիթար մեզ թողիր,
Պարզ յերկինքը կապուտակ
Դու սև սըդով պատեցիր։

Եվ վտակը չե վազում
Առաջվան պես կարկաչուն.
Դու խլեցիր նորանից
Կայտառ անհոգ խնդութիւնն։

Յեվ չեն տեսնում քո շողեր
Նորա հատակ ալյակներ,
Ջեն այցելում եվ նորան
Սիրուն յերգիչ արտուտներ։

Իսկ մանուշակը տես, տես,
Գլուխը կոր վորբի պես,
Թփի տակից չե ժպտում
Ինչպես առաջ քաղցրատես։

Ամպերն յեկան վաթթեցին
Սև քող քո լույս յերեսին.
Վոսկի արև, դեռ տղայք
Աշուն—ձմեռ չկամին։

Ալե՛, արև՛, ձեր վախար,
Ինչո՞ւ մեղնից կառվեցար.
Դուրս յե՛լ, արև՛, յերկնքում
Կրկին շրջիր վոսկեփառ։

883

179 **ՁՄԵՌ**

Ձմեռ է. ձյունը սպիտակ սավանով
Ծածկել է անտառ, դաշտ, սարեր, ձորեր.
կապած կապկապած ամուր սառուցով
Լռել են գետակ, աղբյուր, առվակներ:

Տխուր է յերկինք, մոայլ, ամպամած,
Ինչպես վոր հոգին ցավոտ ծերուկի
Վորի ճակատից կնճռված, խորշոմած,
Չև ջնջվել պիրը անողորմ քաղցի:

Ցուրտ է, խստաշունչ հողմը հյուսիսյան
Ձարկում է ուժգին մանկան յերեսին
Վոր փողոցներում խեղճ թափառական
«Հաց» ձայն է տալիս ամեն անցնողին:

Սառցապատ գետնին կխամրիկ, բոբիկ,
Ահա նա կանգնած այստեղ անկյունում,
Նա դողդողում է, նա՛ թշվա՜ռ վորբիկ,
Ամենից մի տաք խորշ է աղերսում:

Անցավ մեծատունն իր շքեղ կառքով
Ձեվ չը նկատեց խեղճուկ մանուկին.
Փաթաթամ տիկինը կծու հայացքով
«Ի՜նչ ապտոտ եյակ» ասաց ընկերին:

Բայց ահա՛ տեսավ այդ մի պատանի
Հագի վերարկուն մաշված, պղպված,
Ձևին լոկ ուներ մի կապոց թղթի,
Բառիը վաղուց պարապ եր ճռացած...

Ձուներ հայի գին վոր տար խեղճ մանկան
Ձևիցը բռնեց իր տունը տարավ
Տաքացրեց նորան, հագցրեց նորան,
Յեվ մխիթարած ճանապարհ դրավ...

Ձմեռ և, յուրթ և տաք ճուշտահնեռով
Շրջում են մարդիկ, կին, ճանուկ ու ծեր.
Կիսամերկ, բոբիկ և դողդողալով
«Հա՛ց» և ձայն տալիս աղքատ վորը անտեր։

883

180

* * *

(Յուզդոյից)

Ուժգին հողմերը արձակ դաշտերում
Կանաչ ծառերի գագրերն են ցրվում,
Դոռում են, սուլում գառնաշունչ վայրագ
Յեվ խաղացնում են բաց ծովում նավակ
Յեվ սարսափ բերում մինակ ճամփորդին։
Դուխպես պատանի՛, անողոք բաղդին,
Ճնշում և կյանքը մեզ խիստ հալածով,
Խաղում և մեզ հետ անտարբեր վոգով,
Դուխպես ծաղրում և մեզ անողոքաբար։
Պատանի՛, դու վոր դիտես վիշտ ճարդկան,
Պատանի՛, սիրտդ բաց կարեկցաբար
Չգալու անելու կարիք գառնուքյան,
Տես ծանր պիտույքն համայն աշխարհի,
Տես քո շուրջն ինչ ցավ, հառաչանք, կսկիծ...
Յեվ տխուր, մռայլ այս ժամանակում
Կարող ես չանուսալ ոտարի վշտին,
Բեռն համարել կարեկից զգացում,
Անձնատուր լինել ուրիշի քո շահին։
Վո՛չ. պատվիրանը հիսուսի պահած
Ա՛ռ դու յերգեցիկ քնար քաղցրուղի,
Փոքրոգի և կուշտ յերկյուղը թողած
Յեվ փարատելու կարիքն աշխարհի
Արհամարհելով անհոգը մարդկան

Յեվ անուշադիր նոցա սպառնալից,
Ախատ պատժի՛ր ձեռքը չարագործութեյան,
Սեղմի վրա թափիր հեղեղ արտասվաց։
Անկեղծ չատադով կլինի՛ս ճշմարտին։
Խայտառակ գարուս խարազան անխնա,
կլինիս սոսկալի լոլոը չարերին,
Անշուշտ կըլինիս դու... մարդ, հավատա՛։

883

181

* * *

Տխուր և դուրսը, մթին ու խոնավ,
Բարակ մաղում է ձյունը վերևից,
Տխուր եմ և յես, մաշում և մի ցավ
Իմ հոգին խավար և անկարեկից։

Ախ, յես ուզում եմ արտասուք թափել,
Ամբողջ հեղեղատ դառն արցունքներով,
Ահ յնպես իմ կրծքում զգացմունքը անել
Խռնել և, ասես խեղդել ինձ կամիլ...

Հոգիս վողբում և, տանջվում եմ սաստիկ,
Բայց արտասուքս... ախ, մի շիթ գոնե
Հառած աչքումըս, գոնե մի հատիկ
Սրտիս դառնությանն մասը դուս հանել...

Նստած եմ ահա՛ մենակ, լուռ ու մունջ,
Լապտերը ախորժ լույս և ինձ տալիս,
Կամիլ մոտացիլ... բայց տես ցրտաշունչ
Ձյունիկն և քամին լուսամուտներիս.

Ջղերըս ցնցվում ու գրգռվում են,
Միտքըս թռչլացած գործել չի կարող,
Յեվ տխուր ցնորք ինձ նկարում են
Հազար մի պատկեր մռայլ, սևաքոսոր...

Ա՜խ, կես ուզում եմ արտասուք թափել,
Ամբողջ հեղեղատ դառն արցունքներ...
Ա՜խ, կեթե սրտիս դառնությունն հայտնել
Գոնե կես մեկին կարողանայի...

883

182

* * *

Սիրում եմ լերքեմն՝ լերը ծանրանում և
Հոգուս վրա տպել իրականութիւն,
Ցերը վոր նայելով աչքըս հաղնում և,
Չև տեսնում մի վատ նըշույլ լերկինքում,
Ցերը վոր այս թուխպերն իրը լերկնաքար
Ճնշում են սիրտըս,անել մի վշտով,
Ցերը սերը հայտնած ինձ մտերմաբար
Չև կարող գրավել խորհրդա ժպիտով,—

Սիրում եմ թռչել սլանալ հեռու
Հոգով ու մարմով այն միակ անկյունն,
Ուր անկեղծ փայլով պատկերն արևու
Լցնում է սիրտըս մի անպորրութիւն,
Ուր մի դյութական զորութիւնամբ լերկինք
Ջինջ, հատակ լինով մանկամարդ կուսի
Մոռանալ բոլոր տալիս և կարիք
Բազկին խաղալիք դարձած մի կյանքի...

Այնտեղ, վրհ, այնտեղ զերթ ոձ գալարուն
կանաչ դաշտերով սահում է Քասախ,
Այնտեղ զերթ գոհար, միշտ արևասուն
Խաղողն և հասնում վորթի վրա մատաղ,
Այնտեղ ազդյուրներ վըճիտ ջինջ բյուրեղ,
Դալար ափերում կարկաչուն վտակներ,
Այնտեղ բնութիւն մանուկ, հրաշագեղ,
Միշտ պարգևում և ձեղ յուր բարիքներ,

Թռչում եմ այնտեղ ուր յերջանկանալ
կարող և մարդը անխարդախ սիրով,
Ուր խաբեբային կարծիք կանխակալ
պատժում և անխնա ամոթը սըրով.
Թռչում եմ այնտեղ ուր մարդ չէ կոչվող
Մնալ անտերունչ, անհոգ ու անտուն,
Ուր խեղճի համար սիրտը չունի սեր,
Ուր թշվառն ունի միխիթարություն...

183

* * *

Հալիվ արևն յուր առաջին
Վոսկի շողը ցույց տվավ
Ու գիշերվան քողը մթին
Լուսո առվև պատռեցավ,
Յելավ պառավ կարոտությունն
Կարճ անհանգիստ յուր քնից
Նիհար, գունատ, մեռելությունն
Առնս թափում և ճակատից.

Յելավ քնից և շուտաքայլ
Յեկավ գեղջկի դուռն հասավ,
Յեվ իրըև հյուր անակնկալ
Զարկեց դուռը, ձայն տվավ.
«Զարթնիր, զարթնիր, խեղճ գյուղացի,
Հերի՛ք անհոգ քնանաս,
Լուսյար բացվեց, յել դու վոտի,
Աչքըդ ճմռե, նայե՛ վրաս։

«Թռչունն, գազան վաղուց գործի
Դուրս են յեկել բույներից.
Մի մեղկանար, ծույլ գյուղացի,
Թռի՛ր խկուն քնատեղից։
Բաց աչքերըդ, տես սև կարիք
Մոտենում և կպրկում,
Յեվ շուտ լծե, քո ժիր յեղնիք,
Դուրս յե՛կ արտը անհապաղ»։

Ասաց, դնաց. իսկ գյուղացին
Զայնը լըսած չըլսած,
Շուտ զարթեցավ ու ցուբտ առվին
Ջեռք ու յերեսը լըվաց։
Յետ գետ հագիվ մի ժպտացին
Դաշտ ու հովիտ արևառ,
Հնչեց նորա յերգ վողբագին
Յետ արտուտի ձայն կայտառ...

184

* * *

Անցավ դրեթե և այս մի տարին...
Բայց ի՞նչ շահեցար, հոգի՛ դու տանջվածս
Կարճդ ես ասել ալդյոք դեթ մեկին
Թե դու ել նուչնպես կյանք ես ունեցածս
Ավա՜ղ, և վոչ մի շրջան յերջանիկ—
Դոնե չեմ տեսնում մի հետք ընավին,
Յեթե յեղել և մի որ գեղեցիկ,
Ծածկել և վոսկի լույսեր իմ հոգին։
Այո՛, կարծես թե բաղդը ծաղրելով
Կամեցավ մի որ ինձ ել փայփայել,
Կամեցավ պատիր խաբուսիկ ցնորքով
Վարդագույն կյանքի որեր նկարել...
Յես հավատացի, ավելի մտայլ
Վոր հետո տեսնեմ իմ յերկնամաքը,
Վոր անբադդ սերըս վողբում ես դարձյալ
Վողբում այս որեր լեղի, անմխիթար,
Յեվ իրա՛վ, ինչո՞վ յես բախտավորվեմ,
Ի՞նչ ուրախական ոչնի իմ այս կյանքը.
Վոչ մի կարեկից, ընկեր մտերիմ,
Վոչ մի ձեռք սատար և միայն գրկանք...

85

* * *

Հոգիս տխուր և. ուզում եմ ցրվել
Այս դառըն մտքերը, զվարճանալ անհոգ,
Ինչպէ՞ս կես կամիմ, ասել ծիծաղիլ,
Բայց... ա՜խ, ընչո՞ւ չե այս վիշտն անտրտունջ
Իրրև մի բեռըն, ծանր վորձաքար
Ճնշում իմ սիրտը, խեղդում վորպես մահ,
Յեվ արտասուքըս չեն ինձ մխիթար,
Այլ աչքումս ցամքած՝ տանջում են տնխնա,
Այրում են, մաշում այս տկար կուրծքըս...
Վորպես մի մանուկ կես լալ եմ ուզում.
Ա՜խ, պատառում էլեն ցաված աչքերըս,
Գեթ արցունքս լիներ ինձ սիրելի՜ յուն...

186

* * *

Սուրում և հողմը, ուժգին տատանում
Տերևթափ ծառերն ու թփերն անպարփ,
Ջյան տարափները պատում և ոչում,
Բոզաբկում սպիտակ սարերի գագաթ,
Յեվ հարվածում և ճամբորդին չիրես
Վոր թափառում և մինակ մոլորված...
Յեվ տխուր չերկինք սպիտակ կնոջ պես
Նայում և ահա՛ անշարժ, ամպամած։
Բայց շուտով, սպասի՛ր, կելնեն խնդալով
Արեգը գարնան վոսկի ժպիտով,
Յեվ բնությունը մանուկ լուսեղեն
Կբնայտա նորից շքեղ պչրանքով...

883

187

* * *

Անշուք կ՚անքնիս մէջ յաճեմ ընութիւն
Դնեմ մի որ ուղիը իմ մէ անընչին
Կատարել վերջին—միակ ցանկութիւն,
Ո՛վ կուգ ալ ապիղ, հոգի՛կ աննման,
Մի համեստ խնդիրք միայն կու ունիմ—
Վոր մահիցս առաջ գոնե կերջանիկ
Ինձ համարելու կու կարող լինիմ,
Վոր՝ թեպետ այսոր, իմ սե՛ր գեղեցիկ,
Արհամարհված եմ առված քեզանից,
Վասկի հուսերըս քեզնով խորտակված,
Ցեվ հոգիս այրված սիրս կրակից
Ցեվ քո նենգութեամբ վողջ կ՚անքս մաշված,—
Վոր գոնե դու գաս մի վերջին անգամ
Նայիլ կերեսիս, փակիլ իմ աչերը,
Վոր տեսնես թէ կու պիտի քեզ մընամ
Ցեվ մյուս կ՚անքում այնպես անձնուէր.
Վոր գաս նայելու ինչպես պիտ մեռնիմ
Թեզ միայն սիրելով և քո ծաղկափթիթ
Որճնելով հասակն, հոգի՛կ իմ անգին,
Կարուտ նվիրակա՛ն բախտավոր որիդ...

189

* * *

Արդեն փչում և չունչը պարնաչին,
Արագ դեռնիցը ձյունն և վերանում,
Յեվ արևն այնպես ցոլում խնդագին
Յեվ ջինջ յերկինքը ուրախ ծիծաղում։
Ուժգին ցատկում և սիրտը վշտահար,
Պատառել կուրծքըս դուրս թռչել կամի.
Ա՛խ, գարնան ոդը այս կենդանարար
Իմ հոգու համար ղորությունն չունի։

Տանջվում եմ, հոգյա՛կ, տանջվում քո սիրով
Յեվ չունիմ վոչինչ մխիթարության.
Ա՛խ, ի՞նչպես, ի՞նչպես մի անվերջ քնով
Կուզեյի դոնել յես հանգստության...
Բայց բաբախում և կուրծքըս վերանար,
Դեռ չէ լռացել չափը տանջանքիս,
Յեվ արդեն ընկճված իրըև ալևոր
Թառամած եմ այս ծպիկ հասակիս...

90

* * *

Յես ասում եմ. «Սիրեցի՛ք, քանի
Ծաղկում և սիրտը վերթ մանուկ զարուն.
Դուք չեք նշմարիլ անակնելի
Ինչպես վերահաս կըգա ծերուԹյուն,
Յեվ դուք կանիծեք ձեր ճակատագիրը
Վոր կյանքից բարիք գնաւ չտեսած՝
Սրզհն ձեր դեմքը մի խորակնճիռ
Ակոս և ալիքն և տխուր զարդարած»։

Այո՛, սիրեցիք. Թեպետ Ջինչ ասաը
Սիրելով անկեղծ՝ յես գեռ չունեցա
Վոչինչ, բացի մի մաքից Թունավոր
Թե ինձ յերջանիկ վիճակ եղ չըկա...
Սիրել անմռունչ հպարտ տանջվելով,
Մերթ յերանելի, մերթ խո՛ղճ, հուսահատ,
կյանքից քո անձը զուրկ համարելով,
Սիրել և սիրվել, սիրել և խաբված
Տեսնել վերջապես սուրբ զգացմունքները,
Վորպես ծուխ ոդում ցնդված խորտակված
Վարդագույն ապագաք, վոսկի հույսերը,—
Անա մի վիճակ՝ վոր վոչ վոք կարծեմ
Բաղձալի յերբեք պիտի համարե։
Դա յե սիրողը. բայց նորին կասեմ.
«Պատանի՛, մինչդեռ մատաղ ես՝ սիրե՛»։

Վա՜հ, սերն և վոր մեզ ապրել և տալիս·
Յեվ առանց սիրո վո՛չ կյանքն և մի բան,
Վա՛չ յերջանկութիւնն և մեզ մոտ գալիս,
Յեվ առանց սիրո դրկանք կենսական
Կարծես ավելի ծանրը ճնշում և
Մեր կխաակենդան միաքն ու հոգին,
Յեվ առանց սիրո ավելի դժում և
Յուր դատարկութիւն սիրտը մարդկային...

884

191

* * *

Անցնում են որեր, յես պարձյալ մենակ
Տխուր մաքերիս, զգայմունքիս հետ եմ.
Ըղդաս ցայժմ և վոչ մի սփոփանք,
Դարձյալ նույն վշտից այրվում տանջվում եմ...

Ա՛խ, ինչո՞ւ արդյոք չեմ կարող մոռնալ
Այս կարոտաբեր մեքերը մահացու,
Ինչո՞ւ չեմ կարող դոնե քընանալ
Մի անվերջ քնով, աստվածե իմ, ինչո՞ւ...

192

* * *

Վա՛հ, գեղեցիկ և աշխարհն ասուածո,
Գեղեցիկ և միշտ մատաղ բնութիւնն.
Բայց ինչու՞ մարդը բախտի ու սիրո
Վառ ղպացմունքիցը միշտ զուրկ և մնում։
Ինձ ասելի չի սառ հաշիւներով
Կեանքը ծաղկաթափ անող կենդանին,
Վոր լոկ խորամանկ խաբղախ ուղեղով
Մորհում և հասնել չուր նպատակին.
Յետ այդպես կեանքը հաշվով սահմանած
Ջունչի չուր խորհուրդն, չուր եյութիւնը,
Քանի վոր զուրկ և, սա միշտ կորցրած
Գաղափարական գեղեցկութիւնը։
Լինի թող միտքդ առողջ, պատանի՛,
Բայց և միշտ ազնիվ ղպացմունքի համար—
Աղճի և սիրո—սիրտդ բաց լինի—
Այդ ճայնն և բնութեան, այդ և քո սիրալիր։

193

* * *

Ցերեկինքը պայծառ, ոդը կենսաշունչ,
Նոր հոգի առել և համայն աշխարհ,
Իսկ յես տանում եմ իմ վիշտն անմռունչ.
Ինդուհյուն, ժպիտ չկա ինձ համար:

Արևի վայելը, կապույտը յերկնից
Ինձ ամենևին չէ մխիթարում.
Ցավ մ'ըթե յերբեք լինել յավակից
Մի այլված սրտի կարող և ընություն...

Բայց յերբ միայնակ սենեկում փակված
Ցերեկյըն տխուր մտքիս հետ եմ յես,
Ցավ իմ հոգեկի պատկերը սիրած
Կանգնում և առջևս տխուրժ ցնորքի պես.

Հոգիս լցվում և մի վեհ զգացմունքով,
Մի աղնիվ և սուրբ վոգևորությամբ,
Ցավ յես ապրում եմ յերջանիկ կյանքով,
Ցավ սիրտըս պայծառ և ճակատս անամպ...

Ցավ մոռանում եմ իմ դառըն վիճակ,
Ցես մոռանում եմ վողջ չարն աշխարհի,
Ցավ իբրև մանուկ լալիս եմ անհագ,
Որհնում այն մատաղ կյանքը սիրելի...

194

* * *

Արցունք և արցունք, անվերջ, անդադար...
Ախ, յես խեղդվում եմ, կուրծքս լի ցավով,
Ուզեղըս հոգնած և վոչ մի պայծառ
Միտք ինձ ափսոսում և յերջանիկ հուսով...

Ախ, մ'թթե այսոր ինձ այն զգացմունք,
Վոր յերբեմն այնպես թևավորում եր
Միտքըս ու հոգիս և մի վեհ հուզմունք
Ճոխ ապագայի ինձ միշտ ազդում եր,

Վոր վոսկի օրեր աղնիվ վաստակի,
Հասարակ ոգուտ զործունեության,
Յեվ խաղաղ սիրով յերջանիկ կյանքի
Գուշակում եր ինձ վարպես բազդի ձայն,

Այն զգացմունքը վոր յեղել և յայսոր
Աստղըս ուղեցույց և իմ քաջ ձիրը,
Մ'թթե այժմ իրրև մի կիրք բռնավոր
Յուր կույր թուլամորթ գերին սիրտ անեը...

Ախ, յես ասանվում եմ ընկճված հաղթահարված,
Ձև վոգևորում ինձ մի միտք պայծառ,
Ախ, սիրտս և մաշվում և կուրծքըս ճաքված.
Արցունք և արցունք անվերջ, անդադար...

884

195

* * *

Ա՜խ, ինչո՞ւ և չես չեմ կարող խնդալ,
Ինչպես այլք ասել, խոսել, ծիծաղել
Ինչո՞ւ չեմ կարող ընկերիս բանալ
Սիրտը և վիշտս ուրիշին պատմել.
Ինչու, ասասյած իմ, արցունքըս ցամքած—
Չեմ կարող կուրծքըս թեթևացընել
Այս հևծող կուրծքըս տանջված, չարչարված,
Ինչո՞ւ—պիտի միշտ վողբամ չնչաբեկ։
Ա՜խ, թողնք դոնե մի անգամ ապատ
Նայիմ արևուս վոսկեշող լուսին,
Իբրև բնութեյան զավակ հարատատ
Անհաղորդ չըմնա նորա բարիքին։
Թե անկեղծ սերը մաերիմ սրտի
Ունի իրավունք վերջանիկ օրվան,
Ա՜խ, թողնք և ինձ կյանքը սիրելի
Իմը համարեմ դոնե մի վայրկյան։
Թողնք անարգել տեսքովը հրճվիմ
Սրտով սիրածիս, թողնք վոր կրծքին
Անգին հոգևկիս չես քուն մատնիմ,
Քուն մոռացութեյան, քաղցր քուն վերջին...

196

* * *

Աղոթքը, հոգյակ, քո սիրտը ամբիծ
Պիտի սիրելի միշտ լինի յերկնից.
Քո միտքը մաքուր վոր զբաղված և
Միայն վարդապետն որերի ցնորքով,
Վոր ըմբռնելու դեռ ընդունակ և
Սուրբ խոսքն աղոթքի անմեղ հավատով,
Կարող և այսոր սիրով հայցելու
Անձնավեր հոգուն հանդիսա շնորհելու։

Աղոթքը, հոգյակ, այսոր, ինձ համար.
Իմ միտքը չուենի մի նշույլ պայծառ,
Ցեվ սիրտս քնավ ասես թե դատարկ—
Ցևրկինքն իմ ձայնը խուլ և լսելու,
Ցեվ իրեև հավերժ հանցավոր անարգ
Ջեմ կարողանում յես ազոթելու.
Ցևրկուս կաթ արցունք անուշ աչքերիդ
Դըլնեին սփոփանք, հոգյակ, ընկերիդ։

Իրեև կապարի պատանք խեղդամահ
Ճնշում և կուրծքըս վիշտը անհնա.
Հեծում և սիրտս, բայց թեթևացնել
Ցավը չեն զալիս ոտի արտասուք,
Ցեվ յես տանջվում եմ, և վիճակս անել
Ինձ ապաքայում այս ավուրց խեղճուկ
Պատկերը կրկին ցուցնում և ալսուր
Ցեվ իզուր ցընորք և հուսալս իզուր...

Արի ուրեմն, կարևիկ հոգով
Միտոզ ընկերիդ տուր շունչ քո սիրով,
Վատառիած պլխին տուր հանգիստ կուրծքիդ
Աստ ադռիել կամիս ինձ համար—
Ցնվ յես ընդունեմ քո մի վատ ժրպիտ
Նորոգ արշալույս սիրտ կենդարար,
Մի վերածնված կյանքի ավետիք,—
Ինձ այնուհետև ասեմ յերջանիկ...

884

* * *

Դարձյալ, սիրակից, ինձ լիրևեցար
Ցնվ հնագոլ քերթը դառն հիշատակ
Անցած օրերին, յորս մի շող պայծառ
Ցոլում եր սիրուս ճակտին դիզուն ակ,
Ցորս քո մանկական սիրախոս լեզուն
Խոստովանում եր անմեղ հուլսերով
Քո մատաղ սրտի ներքին խռովությունն,
Ցորս դու, նազելի, յիրկնայինն ժպտալ
Թուշակում էիր ինձ կյանք յիրջանիկ,
Ցորս հուզված գլուխս յես արբեցնան մեջ
Հանդչեցնում էի կուրծքիդ դիզուցիկ,
Ցնվ դիզուն զգացմունք հրճվանքս եր անվերջ...

Իսկ այսօր, հոգյակ, միայնակ նըստիլ
Վաղուց ես էյանքիս յես դատարկությունն,
Վարպետ հուլսերըս, խորտակված քեզնից,
Սիրո պատրանքի կեղծ վայելչությունն:
Անցյալից չունեմ ոչինչ սիրելանք.
Հիշողությունը տանջում է միայն,
Իսկ ապագայում... ով դիտե, հուսանք
Արդյոք մեր բաղդի միշտ փոփոխական
Հոսանքի վրըս. բայց աշխարհային
Սնոտի կյանքը կեղծիքը սուտ ոչնչին
Ցնվ ունայն կարող փառքի չերկրային—
Ահա թե միայն ինչ է խոստանում:

98

* * *

(Լերմոնտովից)

Ցնս դուրս եմ գալիս մենակ ճամփու վրան.
Փայլում է հեռու միգապատ ուղին
Աղտոտ գիշեր է և ներքնած բնությունն
Ատորեն են հսկում պրուցկոտ լուին։

Նայում է յերկինք շքեղ հրաշալի
Ցավ կապտաղգեստ յերկիրն է հանգչում,
Բայց ինչու՞ ին այս վիշտը իմ սրտի.
Սպասում եմ մի յոն թե կորցրածս վոգուս։

Կյանքից հաւտալու ել վոչինչ չունիմ
Ցավ չեմ ափսոսում որերս անցյալ,
Ցնս ապատություն, յես հանգիստ կամիմ,
Ա՛խ, յես կուզեյի մոռացվիլ քնանալ։

Բայց վոչ մահատիպ ցուրտ շերմի մի քուն
Կուզեյի մտնել այնտեղ հավիտյան, —
Վոչ վոր իմ կուրծքը չտար զորություն
Միշտ յերխտասարդ կյանքի քաղցրություն,

Վոր գիշեր ցերեկ ինձ անուշ մի ձայն
Մեր յերգեր զգվեր իմ լսողություն,
Վոր կանաչախտ կաղնին իմ վրան
Խոնարհած հաներ մի աշխուժ շշյուն։

199

* * *

Վճիտ առվակը վազում և կալտաս,
Հանռւմ և հեզիկ կարկաչ հատակից.
Գլորվում են ալիք, արևը պայծառ
Ժպտում և նորան հատակ յերկինքից։

Ծագկում և շուրջը նորափթիթ մի կյանք,
Թավշյա կանաչով ափերը պճնված
Գրկել են ջուրը և անվերջ բերկրանք
Յեվ սիրո բուրմունք շունչն են այդ կենսաց։

Յեվ թավալում և առուն ալեակներ
Դեպի մեծ ծովը, կենաւոտ ծնբունի,
Շաչում են ալիք, ծնծում են ժայռեր—
Սոքա անսաթրեր և անդրդվելի։

Յեվ վորպես մանուկ հուսով ներայաալով
Հասավ ծովափը խաղալով անհոգ—
Հորձանքը ուժգին մի ազատակով
Ընդունեց նորան կորստյան յուր գոգ...

Ա՛յսպես չքա և դու, խեղճուկ պատանի,
Տոգորված վոսկի վառ յերազներով՝
Յերբ ճոռնում ես փչացած կյանքի
Բուռըն հոսանքին դու անբիծ սրտով...

200

* * *

Ապրում ես, յեղբա՛յր, և հույսըդ միշտ վառ
Ձեվ հավատում ես թե կըգա մի որ,
Բաղդի ալեկոծ նավը հողմավարը
Ինչ դուրս կըշանեն աշխարհ բախտավոր,
Ուր բոլոր կըրած տառապանքներիդ,
Հոգուդ տանջանքի, վշտի փոխարեն
Ինչ յերջանկութեյան դեղերկաժպիտ
Սեր, վայելչութեյուն, բերկրանք կվողջունեն։

Բայց գիտե՞ս ինչ և այդ հույսըդ ունայն —
Վա՛հ, լոկ վրդովմունք պատանու սրտի.
Ձեվ թախիծ և վիշտ և ուրախութեյան
Չգիտ արտասուքը քո սպառած կյանքի
Ձեվ այն բոլորը վոր քեզ սպրնվու
Տալիս և բաղձանք, հավատա՛, յերբալը,
Ձեվին վոչ այսրը—վարն և անցնելու
Վորպես խաբուսիկ մի յերազ պայծառ։

Ձեվ հաճատարբի այն դառն կատակ
Վոր կյանք ենք ասում, իբրև ուրվական,
Իբրև վարանցիկ սիրտ մի պատրանք,
Իբրև մի բոլորք մարքի մանկական,
Պիտ անհետանա, հետանա մեղնից
Առանց թողնելու մի հետք բնավին.
Հավատա՛, յեռուն աբյան հուզմունքիդ

Միայն տալիս ենք կյանքին մենք մի պին...
Կանցնին տարիներ — և մեր կյանքյան
Վաղջ հետքը պիտի մընա լոկ ածյուն.
Կը քակեն պատկ քո դործոնութիյան—
Մոռացոնք — ահա՛ քեզ վարձատրութիյուն...

884

201

* * *

Տանջվիլ հանապազ, տանջվիլ անվախճան,
Լռիկ տանելով կյանքի զրկանքներ,
Ցավ լսել կոպիտ յեսամոլության
Այս կուլր աշխարհի չար նախապինդներ,
Այրվիլ յեռանդից զոլծունեության
Խստովանելով կամքիդ թուլության,
Ցավ լինել միշտ դոհ խարխափության,
Խորտակված տեսնել ազնիվ ցանկության—
Ահա, դու խեղճ մարդ, քո ճակատագիրը...
Դու հավատում ես վոր քո գոյության
Ունայն և նպատակ, ինչ ել լինելիր,
Բայց կրկին կամիս ապրիլ աննշան,
Վորպես խաղալիք քո բաղդի ձեռին։
Ախ, չես պատրաստ ես կյանքը անվանել
Ընության դեղեցիկ մի ձիրք մեծագին,
Ցավեն կարող ես մեկը համարել
Յուր աշխարհային անցվոր գոյության
Անվիշտ, յերջանիկ գոնե մի վայրկյան...
Բայց վախ. չես միայն մի յերջանկության
Խոստովանում ես, յերբ որհասական
Իմ ժամը կըգա, կիջնեմ մութ շիրիմ,
Այնտեղ կըգրկեմ մի սեր հարատև,—
Միայն ա՛յդ սիրուն հավատալ կամիմ,—
Այնտեղ ցուրտ հողի վերմակի ներքև,

Մտած անխառն անտարբեր մի քուն,
Կհանդիպեցնեմ զքեզ թաց հոգնած
Ինձ չարթված սիրաբաս մայր յերկրի կրծքում,
Կքսեզմեմ շրթունքս նորա ցաւրա շրթանց...

884

202

* * *


Խաղաղ վառվում է լուսինն յերկինքում
Յեվ չինչ կամարը ախտակիր յերկրին
Մի հաշտ հայացքով նայում է ժպտում,
Դյուրթեկան մի փայլ ուժած աշխարհին։

Յեվ այնպես հատակ յերկինքն անտարբեր,
Այնպես անխռով, այնպես յերջանիկ—
Այստեղ կռվում են յերկրային կրքեր,
Այստեղ դեղխությամբ կուբացած մարդիկ...

Նայում եմ շուրջըս. ահա՛ ջրիզ կատքով
Թափում է դռռոց անսիրտ մեծատունն,
Իսկ պատին կրծնած ցրտից դողալով
Բոկոտն յերեխան չոր հաց է խնդրում.

Դիմացիս վարժուհի ապարանքներից
Հեշտասեր նվագի հառնում է ձայներ,
Կողքիս անտերունչ ծերուհին անցնողից
Լալով խնդրում է անցնել սև դիշեր...

Յեվ յերբ ես զարձյալ նայում եմ յերկինին,
Դառնացած մարմով շնչում եմ անզոր.
«Թե այս տեսնում ես, անամո՛թ լուսին,
Յեվ ծիծաղում ես դիմքով լուսավոր»։



Հ. Հովհաննիսյան
Նկարահանման թիվը անհայտ է

Հրատարակվում է առաջին անգամ

203

* * *

Ձևրկինքըն ամպոտ, միակերպ տխուր
Ձեվ անտառը զուրկ յուր զարդարանքից,
Ձեվ աչքդ հանդչիլ կամենում և զուր
Պատկերի մի վրա բնութեյան կենսալից.

Արևը հանգած և լուռ և թմչնակ
Ձեվ ձևրկ են ծառեր, կանաչը խամրած
Ձեվ արդեն պանդալ սահում և վըտակ.
Սպասում և խոր քուն համայն ապրածն։

Պիտի գա ձմեռ, մռայլ ծերունի,
Պիտի ծանրանան աչքը բնութեյան
Մինչև մահասիլ այս ներկը անցնի
Ձեվ փայլի մատաղ ժպիրը գարնան.

Ա՜խ, լսեր և զուռ, հոգի իմ տանջված
Բուռն յեղերը և զուռ, վայելքը հանդիստ.
Ո՞վ գիտե, գուցե մի որ քեզ մոռցած
Ճակատագիրըդ ժպտի քեզ նորից.

Վոչ յուր վշտերով, այլ վառ բերկրութեյամբ
Ձեվ յերջանկութեյան հուլսը քեզ ցոլա
Վորպես արշալույս, կրկին քաղցրութեյամբ։

204

* * *

Ծածկվիր շուտ, արև՛, քո վիմքը խարտեաշ
Թող վարագուրեն ամպերն ալեոր.
Ցեղս չեմ կամենում, այլ վիշաս խաղաղ
Իմանաս, ծաղրե աշխարհն կեղծավոր...

Հասիր սև դիշեր, պատկեր տխրության,
Վհո՛ւ ինձ քաղցր և քո թախիծը դիմքի,
Ցնվ այս իմ խորունկ ցավը հոգևկան
Քո գառնության հետ սիրով պիտ հաշտվի։

Թանձր խավար և, և քուն և մոռած
Համայն արարած, խորհն լռության...
Աղատ և շունչըս. մաքերով զբաղված
Ցնս վայելում եմ սուրբ անդորրության։

Չև նեղում սիրտըս ախտ աշխարհային,
Հետու չի ինձնիկ խարեբայության,
Սառն ատելության պատկեր տխրագին
Ցնվ փայլն չեռացավ փարթամ կացության։

Կարող եմ դնել առ ժամ մոռանալ
Տգիտությունը իրական կյանքի,
Ախորժ արամության մանել, խորհալ
Ընտանի աշխարհն փոքրիկ մաքերի...

Հիշել և հուսալ և ջերմաբարյունքով
Վողջունել այլը սիրած յերազին,
Յեվ վառ բերկրությամբը և անկեղծ հոգով
Խրկել պատկերը ցանկալի կյանքի...

984

205 ՆՈՐ ՏԱՐԻ

Յուրտ գիշեր և, բարակ քամին
Սառցնում է ձեռք ու յերես.
Ճրագները փողոցներին
Վառ հսկում են պահակի պես...

Մեկի տակին, պատին կրթնած
Դողդողում է վոբր յերեխան.
Սդոտ լույսը դեմքին ընկած
Յուցնում է փայլ անհուսության։

Արտասուքը տխուր աչքում
Ծես սառել և, լացել է դա...
Յեվ կանգնած է, հաց է ուզում
Բայց մին նորան լսող չկա։

Նոր տաթի յե, բոլորն ուրախ
Վայելում են քաղցրիկ ժամեր.
Իսկ նա անտուն, իսկ նա, ավազ
Ջունչի ծնող, բարեկամներ։

Մինչդեռ ուրիշ տղա ազգիկ
Հրճվում են ճոխ դահլիճներում,
Նա փողոցում, անբաղդ մանկիկ,
Մի տաք անկյուն, հաց է խնդրում։

Սիրուն մանկուկք, մի մոռանաք,
Ձեր փշրանքը կեթ տաք նորան,
Նա ել գիտցեք մի ժամանակ
Ունեցել և մայր սիրական։

Հիմա մենակ պատին կրթնած
Կանգնած և յուրա գիշերին,
Ձուռնի ասող. «Ինձզ արարած,
Շնորհավոր քո Նոր Տարին»։

[884]

203

* * *

Ո՛վ նազելի կուսյա, դու մի լար
Քեզ համար չեն սև որեր·
Մանուկ հոգով, չեն քեզ համար
Յեվ սրտամաշ դառ վշտեր։

Քանի մատաղ քո սրտի մեջ
Նոր զարթնում և դու զարուն,
Յերանուելյան ձայներ անվերջ
Պիտի լսես դու կյանքում։

Արտասուքը քո աչերից
Հեռու, ոտաբ տակավին,
Ինչպես զեմքը հստակ յերկնից
Պիտի անոգ դեռ ժպտին։

Բայց յերբ, չքնաղ ինչպես թռչնիկ
Վանդակի մեջ, կսթափի
Անուշ քնից և քո սրտիկ
Ազատութեյուն կը խնդրի·

Այն ժամանակ կը հասկանաս
Յեվ դու միտքը մեր կյանքի,
Յեվ դու տանջիլ կը յանկանաս,
Ծերի մի քաղցր յերազի…

207

ՅԵՐԱՉ

(Փիցկենվիւնց)

Գուցե նախանձոտ խիստ ճակատագիր
Ցեվ մեր որերին զըրկել է սահման,
Բայց վոչ մի խոսքով դու այդ մի հիշիր,
Ցերը վերահասնի հրաժեշտի մեր ժամ։

Վերջին ժամերը վերջին գիշերվան
Անհագուելի սիրով թող անցնեն...
Ցեվ միայն վերջը տխուր տեսութեյան
Դու ինձ թուլյն կըտաս—սիրով կընդունեմ։

Ցեվ վերջին անգամ քաղցը քուն կլինեմ
Իմ շրթունքներըը քոնին սեղմելով.
Ցեվ վերջին անգամ թուլյնը կըխմեմ,—
Թուլյնը համբույրի,—աչքիդ նայելով։

Ցեվ որեր կանցնեին, գուցե տարիներ—
Կը գա բոլորի ժամն յելնելու—
Ընկերիդ համար դու այս կամարներ
Կը թողնես, կիջնես ինձ զարթեցնելու։

Բեզ այն ժամանակ նորից կըգթեմ,
Ցեվ քո ջերմ գրկում առաջվա նման
Վառ սիրով աչքիդ կը նայիմ, կասեմ,
Թե նիրհել եյի քեզ հետ առ վայրկյան։

208

* * *

Ա՜խ, պատռռում է իմ սիրտը վշտից
Յեվ խեղդում են ինձ դառն արտասուքներ,
Մ'թին, այս անբաղդ անգութ աշխարհից
Ինձ մի յերջանիկ որ պիտի չհասներ։

Հոգիս վողբում է—յես անտեր, ձեռնակ...
Սրտիս մեջ դժոխք, հուսահատութիւն.
կարծես ինձ համար չունի մի պատրանք
Վոչ կուսի սերը, վոչ գեղեցկութիւն...

Միշտ նուէն հակադիր ճաքեր տանջական
Մաշում են ուղեղս անողոքաբար...
Ա՜խ, լռիր, սիրտ իմ, բերնիցը մարդկան
Չես լսի յերբեք մի խոսք միխիթար...

209

* * *

Մայրաքաղաքը փաթաթված լուսով
Հանգստանում է լուսինն յերկնքում
Լողում է վաւաշ արծաթ շողերով,
Սառիկը ճկվիկ զրուցց ին անում։

Ծորերն լռութիւն. յերբեմնըն միայն
Մի չքեղ սահնակ թռչում է սրընթաց
Ցեխ զանգակներով ազմկաձայն
Վրդովում նիրհը պահնորդին հոգնած...

Ցեխ տարածվում է փողոցի մէկին
Անմիտ զվարճութեան լայնբերան մի ճիչ,
Անհոգ մի յերգի ձայներ խնդագին,
կամ մի լիասիրտ կանացի քրքիջ...

Նորից տիրում է նախկին լռութիւն,
Ցուցղում է ձյունն հազար կայծերով.
Ո՛վ է նա—հագիվ քայլերն է փոխում
Գլխարաց, բորիկ, պատռած շորերով,

Ջուրն ճոխ գլուխն ուսերի վրա
կամ կեաւ է ընկնում կամ կախվում առաջ,
Ինքն անմիտ կերպով, ասես անզգա
Մեկ ձախ է ծռվում, մեկ ձգվում դեպ աջ։

Ցեղբեմն ել պատին կրթնում է, կանգնում
Բթամիտ դեմքով, աչքը կիսաբաց,
Նոր քայլ փոխելու նա փորձ է անում
Ցեվ թավալվոր ինում է փռված...

Մարդիկ տաք մահճում յերջանիկ քնով
Հանգստանում են... Լուսինն յերկինքում
Լողում է վառված արծաթ շողերով,
Ամպերը ինչիկ զրույց են անում։

886

211

* * *

Ցեխ տանջվում եմ, ցեխ այրվում եմ,
Վայելչության ծարավի,
Բայց այն ինչ վոր ցեխ խնդրում եմ
Բաղդը ինձ տալ չըկամի։

Ցեխ սառած եմ թշվառ յերկրի
Մեղկդիներ ձանձրության,
Ցեխ սպասում եմ մի հրաշալի
Յերգ անվախճան քաղցրության.

Վոր հրավառ աննուն կրքով
Մարդու հոգի բորբոքեր,
Կյանքն այժմ լի դառնությունով
Մեզ սիրելի դարձներ...

886

212

* * *

Ա՛ւմ հայտնում ցավըս, տանջանքս հոգեկան,
Դառնացած սիրտըս սփոփանք և խնդրում,
Յեվ անհոգ խնճույքն վառ ուրախության
Ինձ վազուց արդեն ոտար և թվում...

Յեվ ինչպես հանգչող կանթեղը ազոտ,
Թոշնում և, մեռնում ծաղիկն հասակիս.
Մի քնքուշ սրտի, ջերմ սրտի կարոտ,
Նոր կյանքի հուսով մաշվում և հոգիս...

886

213

* * *

Յես տանջվում եյի, չափ չըկար վշտիս.
Յես կարծում եյի, նորան հավատար
Ըր կարող լինել վողջ վիշտն աշխարհիս
Յեվ վոչ հազուս պես գժոխքը խավար։

Հասկանալ չուզեն, յես ասում եյի,
Իմ ցավը ահագին մարդիկ քարացած,
Յեվ քնքուշ սերը իմ սիրող սրտի
Հաճարում եյի մի չար քեն դարձած։

Բայց դու յերևցար, նազելի ընկեր,
Բացիր ինձ սիրտդ ջարդված խորտակված,
Սարսափով տեսա յես նոր սև խոցեր,
Տեսա վոր ինձնից դու շատ ես տանջված։

Յեվ յես այն որից ուսա համբերել,
Վիշտըս կիսով չափ իր. ուժը կորուց.
Ուրիշի վերքը քո ցավը անել
Իմ մտածության առարկա դարձուց։

214 ***

Ո՛վ իմ չքնաղ, իմ անգի՛ն,
Վառ աչերով հեշտասեր
Խոստանում ես դու յերգչին
Յերջանկության քաղցր որեր։

Յես ալրվում եմ քո սիրով,
Սիրտըս արագ բաբախում,
Աբի՛ ա՛ի քաղցր համբուրով
Ցրվի՛ր հոգուս տխրությունն։

Թող մարմարյա քո կուրծքին
Սեղմեմ գլուխս իմ հոգնած,
Քո մեղրածոր շրթունքին
Իմ շրթունքը րոբրոզված։

Յեվ աչերիդ նայելով
Յես մոռանամ վողջ աշխարհ
Յեվ մի անվերջ համբուրով
Այրվի՛մ, հալվի՛մ անդադար...

* * *

Ա՜խ, սև սև աչեր, ինչու՞ ձեզ տեսա
Այդ հուրն յերկնային ձեր մեջ բորբոքած,
Հանգիստս այն որից յես կորած տեսա,
Սրտումբս սիրո կրակը վառված։

Ձեվ վշրքան ախուր հիշողություններ,
Անցած որերի կորած պատկերներ,
Ձեվ քաղցը արտասուք, բերկրալի ժամեր
Հարություն առած յես նորից տեսա։

Ցերանի՜ ձեզ էլ կարողանայի
Վայելել սերը քո քնքուշ սրտի—
Ցես իրավունքով, ով կույս, կասկի
Թե չերջանկությունս կատարյալ տեսա։—

886

216 ***

Ազի՛զ բալա, չա՛ն բալա
Նանի բալա, չա՛ն բալա·

Մեչքըս կոտրվեր են որը
Վոր չես աշխարհ քեզ բերի,
Թաղն ու պտակիդ տեղակ
Վոր սև հողը չդնեյի—

Յարաբ վո՛ր մեղքիս համար
Գլխիս ընկավ ես քարը,
Լիս արևը մեր մտավ
Գլխիս պատեց խավարը·

Թառլան դուշ եկիր ձեռիս
Թառար կոտար, բալա չա՛ն—
Ընչի սազ սազ չդրիր
Ազիզ նանիդ գերեզմանն·

Նանիդ աչքը դուրս պրծիր
Քու մեյիտը չտեսներ·
Ինձ էլ հետը տաներիր
Յարաբ, բալես, ինչ կըլներ·

217

* * *

Ցեխ յերգելու ձեն չունիմ
Բուլղուրի լեզվի նման,
Ի՞նչ անեմ վոր սեր ունիմ
Սրտումըս՝ լոցի նման,

Ա՜խ, ինչպես կերգեի
Սերը հալվող իմ սրտի,
Թե վոր դալամըս գրեր
Ինչքան ջրի նման...

Գիշեր ցերեկ անդնդում
Ցեխ կըտայի քու անուն
Կարմիր վարդի տեսութեան
Կարոտ բուլղուրի նման...

886

218

* * *

Ցեւս փառք չեմ ուզում, վոսկի չեմ խնդրում,
Ցեվ վոչ վայելքը ունայն աշխարհի.
Պահկն հաղթության յես քեզ թողնում,
Արյունով սրնված հզորըդ յերկրի...

Ա՜խ, ինձ մի յերգող, վո՛չ մեր սին կյանքի
Անձիա ցնորքը փոքրիկ կրքերով,—
Մի չնաշխարհիկ յերազ հրաշալի
Աղատ, անսահման, անշինջ զգայմունքով։

Վոր և առելը լինի կատարյալ,
Ինչպես և սերը ազատ, անվախճան,
Վոր իմանաս թե՝ կարող եմ զգալ
Ցեվ խորհիլ ինչպես երկիր բանական—

Վոր իմանամ թե՝ վարդերով շրթունքիդ
Մեղրի հետ մի տեղ յես թույն չեմ ծծում,
Թե՝ յերգը լղհած կենդանի սրտից
Գուժկան շղթային շաչյուն չի դառնում։

887

1819

* * *

(Թումանից)

Այն դեղնցիկ որբեր էլին
Կայտառ՝ ինչպես թիթեռնիկ,
Գերի էլի չես քո ձեռին
Բեղնով միայն չերջանիկ.
Մենք ծաղկազարդ հասմիկի տակ
Նստած էլինք հրճվանքով.
Մեզ ժպտում եր վառ արեգակ
Վոսկենշուլլ յուր ցոլքով.

Բայց այն սիրուն որբերն անցան,
Հանգան մատաղ այն կյանքեր.
Լեռան կուրծքին հանգստացան
Վերջալուսյի վառ շողեր.
Միայն թևերն հիշողության
Շուշնչ են տալիս իմ հոգուն
Ցնով վաղեմի չերանության
Կրում կրկին ինձ գարուն.

0 * * *

Սիրուն մարդիկը, կանաչ պուրակ,
Հրապիրում են դեպի հանգիստ.
Վըրաս յերկինք չինչ կապուտակ,
Առջևս բլուր պեղեցկանիստ.
Ամենայն ինչ խաղաղություն
Ներշնչում է խոնջած հոգուն։

Յեվ յես գլուխս կուրծքիդ դրած
Նայում եմ քո չինչ աչերին
Յեվ զմայլմամբ, աշխարհ մոռացած,
Անձնատուր եմ իմ ցնորներին։
Յեվ ասում եմ, թե յերանի
Այսպես անվերջ քուն լինելի։

891

221

* * *

Ձյունը հալչում, գառնում է վտակ,
Վաղուց առաջ հեղիկ կարկաչով,
Ահա արդեն արտեր սևորակ
Շուտով պիտի ծածկվին կանաչով
Ցեվ ծաղիկներ սիրուն։

Դու լաց լեզար, յեվ ինչպես ցողով
Վարդն է թրջվում, այսերդ լեղան թաց...
Ցեվ իմացա, վոր դու էլ չուտով
Պիտի զարթնես, ինչպես նորաբաց
Մի ծաղիկ սիրուն։

Ձմայլված հոգով լես դուբս եմ թռչում,
Ձեմ կշտանում այս վառ բուրմունքից.
Բայց զարձյալ քեզ, միշտ քեզ եմ կանչում,—
Անուշ ես դու զարնան հրապուրքից,
Իմ ծաղի՛կ սիրուն։

222 * * *

Իբրև յերազ նա նորից
Յերևեցավ հրաշագեղ.
Սիրտըս թնդաց բերկրալից,
Յերգըս հնչեց սիրագեղ։

Նա ինձ ժպտաց գերբ արև,
Յեվ վար կտրեց իմ հոգին...
Ա՜խ, եվ ինչո՞ւ սըրաթև
Թըռավ նման ծիծառին։

900

223 ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

Ա՜խ, չի մոռացվիլ գարնան հրապուրը
Զըվարթ ճռվողուն նորիկ ծիծառան...
Բավական և, թե այս սևաթուխը
Ամպը պատռավի, և շողշողուն
Բարձր կատարներ ճյուճյոտ լեռանն,—

Յեվ ահա կասկնք, թե այս արև
Փարուն պիտ բերե զեղածիծաղ.
Թավիշ կանաչով մեր առաջև
Պիտի զարդարվին ափեր խաղաղ,
Ծիծեռնակն ոդում յերգե ուրախ։

Ա՜խ, չի մոռացվիլ սիրո սենչանք,
Առաջին անգամ, վոր մեր հոգին
Լըցրեց անծանոթ անուշ տանկանք,
Վոր մեզ կախարդեց մի հեշտագին
Անհուն ցնորքով գերերկրայինն...

Յեվ ո՞վ այն սիրո չի զգա հրապուրը,
Յերբ ծերությունն իսկ հասնի վերա.
Ո՜ւմ շրթունքն արդյոք առաջին համբույրը
Չի այրիլ կըրկին, յերբ միտը գա
Ա՜հ, սե՛ր մանկության—անմոռաց և նա։

ՓՇՐԱՆՔՆԵՐ

225 I

Կռունկները շարան-շարան
Հավաքվեցին ու թռան,
Ա՛խ, իմ վոսկի յերազները —
Աշունս յեկավ,—ուր թռան։

922

226 II

Մաղ—մաղ անձրև ու մշուշ.—
Ծառերը մերկ, տերևաթափ...
Արցունքներն են, վոր անուշ
Սիրաս են ցողում հուսաթափ։

922

227 III

Մխաքըս մոլոր քեզ եմ նայուած,
Ա՛յ իմ սիրուն Ալապյազ,
Հոգիս խոցված, հոգիս տրաւած,
Քեզ և կարոտ հանապազ։

228

* * *

Դեպի վեր, դեպի արև բոցավառ—
Այդ ցընորքն եր խիզախ մանկութեան—
Սլանալ դեպի վեր ղերդ իկար
Պատառել լուսեղեն ովկիան։

Ցեղ ապա այդ անշիջ հուրն հոգում
Սարուկ կյանքի խավարից դեպի լույս,
Իկարն պես բավիղն և լքում
Ցեղ պայքար և նեռում խռովահույզ։

Ու վառում, ու այրվում և անվերջ...
Մերթ մարտիկ քաջարի՝ զինավառ
Խոյանում և ահեղ կռվի մեջ,
Մերթ չքնաղ, խմաստուն զեկավար։

Բռնության շղթաներ խորտակում,
Ազատ կյանք և կոփում կուռ բազկով,
Ախտյան ազգերին համակում
Սերտ սիրով վոգեշունչ նոր խոսքով։

Դեպի վեր, դեպի արևն այն ազատ
Նա հրավեր եր կարդում բոցավառ.
Մինչ գտավ յուր տարերքն հարազատ
Հրեղեն մի վոխճան, նոր իկար...

229

* * *

Արի՛, գարուն, սիրուն գարուն,
Թող կանաչեն մեր մարգեր,
Գեղեցկանա դաշտ զարդարուն
Հնչեն թռչնոց քաղցր յորդեր
Լա, լա, լա…

Արի, թմրած գյուղն ազատի՛ր
Յուր ձմեռվան կապանքից.
Թող վառ ծաղկունք մեզ սիրալիր
Ժպտան բլրի գագաթից.
Լա, լա, լա…

Արի և բեր դու մեզ համար
Ծիծեռնակ ու ճնճղուկներ,
Յեվ հովտի մեջ դվարթ, կայտառ
Թող վազվզեն գառնուկներ.
Լա, լա, լա…



Հ. Հովհաննիսյանը գործերի ընդունում 1928 Հրատարակվում է առաջին անգամ
նստած է ձախից աջ. Փ. Լեվոնյան, Շիրվանզադե, Հ. Հովհաննիսյան, Ա. Խնկոյան,
կանգնած են՝ Մ. Մանվելյան, Ստ. Զորյան

230

* * *

Ձմրան ծածկույթն էլ չկա,
Ձմրուխտի պես վառ կանաչ.
Արևի տակ շողշողուն,
Արտն է փռված ցորենի։

Առուն վազում է ահա
Ուրախ հանում մեղմ կարկաչ.
Վրան կախվել է ճկուն
Դեռևս անզարդ ուռենի։

231 * * *

Ինչ եմ անում վարդ ու շուշան,
Դու իմ վարդն ես, նազանի.
Նոր բահար ես դու՝ աննման,
Թագ ու պսակ, նազանի՛:

Իմ լինչ պետքն են մութ գիշերով
Լիքըն աստղեր յերկնքումն.
Արևի պես վառ աչքերուն
Ջահ ես դառել իմ հոգումն:

Աշուղ, կարոտ չեմ քու տաղին
Քու ձենն ինձ ինչ քյար կանի.
Բան չի հասնի բնավ քու հաղին,
Բաղի բյուլբյուլ, նազանի:

Ճտովս ընկիր, մի ջան ասա.
Աչքը դուս գա պռշմանի
Թող նախանձի խան ու վաշա
Ասրի ամբոլ նազանի:

232

***

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարանենդ բաղդի կոպիա խարազան,
Ինչպես ցուրտ ձմեռ մահարեր շնչով,
Կապել և, խցել ձեր ազատ բերան,
Ծածկել և զգացմունք մի հասա կեղեով։

Թառամած ինչպես ծաղիկը աշնան
Սպասում ենք լքյալ՝ մի խորունկ քնի.
Ձեվ ձեր և չեռանդ պատանեկութեյան,
Ձեվ ձեր յերազները լսորդքվող սրտի։

Ձեվ կյանքը բընական դեռ չըճաշակած
Կարծում ենք արդեն թե դար ենք ապրել։
Հին ասավածներին վաղուց մոռացած՝
Ձեվ մի նոր ասաված մենք դեռ չենք գտել։

Վձիռ սիրտ համար, վձիռ առևտրչյան
Մենք եվ սիրտ չունինք, ժեռած զգացմունքով։
Փոքրիկ կրքերի կանգնած ախոյան՝
Լոկ մեզ ենք պաշտում հիմար պարծանքով։

233

* * *

Ա՜խ, դաժան ցավից սիրտս և պատռտվում,
Սև-մռեք և պատել դառնացած հոգուս,
Անսրև կյանքիս չմնաց խնդում,
Ցավ որս և անցնում վերդ փշեր անլուր։

Թովիր լինձ, հոգյակ, անուշ դեվանքով,
Այդ չքնաղ կուրծքիդ վառիս հանդչի,
Ու վառ աչերիդ նայիս հրճվանքով,
Ջայնըդ հեզասքին ականջիս հնչի։

Քաղցր համբյուրդ աշխարհ մոռանամ,
Թախիծըս անցնի, ինչպես սին յերազ,
Թող կյանքը յիս ել արհնեմ մի անգամ,
Ել փուչ չե, թե գա մահըս վերջնաս։

234 * * *

Վաթսուն մի ցուրտ խավար գիշեր,
Անցնում նյին իմ անապատ,
Անմխիթար կյանքի որեր—
Բայց իմ հոգին միաց անվհատ։

Յեվ հույսն ահա պատկերացավ.
Դու լուսաթև իրրև հրեշտակ
Իջար վերաս,—և փայլեցավ
Վոսկեհնըշուլլ իմ արեգակ։

235

* * *

Յերբ հոգիս մըռայլ յերկինքը գլխիս
Պըռով եմ տեսնում, և վոչ մի հրապուրը
Ել չունի կարծես աշխարհն անհամբույր,
Ծպտում ես, հոգյակ, ամպած յերեսիս,
Յեվ վորպես մատաղ գարնան արեգակ
Լուսավորում ես յերկիրը ու յերկինն,
Ու ծով-ծով աչքիդ վառ բոցերի տակ
Նոր կյանք և առնում իմ մարող հոգին։

236 ***

Զքնաղ գեմքիդ եմ նայում,
Այդ աչերիդ լույսատու,
Ու հրճվանքով անպատում
Սիրտս է լցվում վշտանար։

Ցեղ յերազներ վաղեմի
Այդ են գալիս իմ հոգուն,
վորպես քուրմուհք յեղեմի
կամ շուհչ պարնան թրթռուհն։

Կո՛ւյս դու, վոր կյանք ես համակ,
Հո՛ւյս իմ, աշք իմ նպատակ.
Դու՝ վոսկեշող արեգակ,
Ջեզնով եմ լոկ կենդանի։

Գեղուհի հարուստ թագուհի,
Ցնո՝ մի յերգիչ եմ խեղճիկ,
Սիրուդ արդյոք արժանի՞
Նվեր է յերգս աղքատիկ։

237 ***

Գարնան նման խայտալով
Մարդոյ կյանքիս շունչ ունիր,
Հուր աչերովդ ծով-ծով
Սիրտս նորից վառեցիր։

Գաղջաժպիտ մայիս ես,
Լուսիկ հուսիկ ինձ համար,
Ինչպես երեշտակ գալիս ես
Սգավորիս մխիթար։

Վարդի նման բուրավետ,
Գոհար շաղով դուռ ցողված,
Բլբուլ դարձա յես քեզ հետ,
Ջեռիդ պերի կախարդված։

238 ***

